

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏԻԺՆԵՐԻ ԵՎ ՀԱՐԿԱԴՐԱՆՔԻ ԱՅԼ
ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՆ
ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական համակարգի զարգացման հայեցակարգին»՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2009թ. դեկտեմբերի 10-ի արձանագրային որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության քրեակատարողական ծառայության ենթակառուցվածքային բարեփոխումների հայեցակարգը:

Հ Ա Յ Ե Ց Ա Կ Ա Ր Գ

Հայաստանի Հանրապետության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կատարման համակարգի զարգացման

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԳԼՈՒԽ 1. ՆԵՐԱԾԱԿԱՆ

Հայաստանի Հանրապետությունն անկախությանը հաջորդած առաջին իսկ տարիներից ձեռնամուխ եղավ իրավական և դատական բարեփոխումների իրականացմանը՝ ձգտելով իրավունքի գերակայության և մարդու իրավունքների ու ազատությունների երաշխավորման վրա հիմնված պետականության կայացմանը, որի կարևորագույն նախապայմանն է անկախ ու կենսունակ իրավական և դատական համակարգերի առկայությունը: 2005թ. նոյեմբերի 27-ին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ կատարված փոփոխությունները սկիզբ հանդիսացան Հայաստանի Հանրապետությունում դատաիրավական բարեփոխումների երկրորդ փուլի իրականացման համար: Պահպանելով 1995թ. Սահմանադրությամբ նախատեսված դատական իշխանության բարեփոխմանն ուղղված հայեցակարգի մոտեցումները՝ 2005 թվականի սահմանադրական բարեփոխումներն ուղղվեցին արդեն ստեղծված համակարգի կատարելագործմանը:

Իրավական և դատական բարեփոխումների շարունակականությունն ապահովելու նպատակով 2009թ. ապրիլի 21-ին ստորագրվեց «Դատաիրավական բարեփոխումների 2009-2011թթ. ռազմավարական գործողությունների ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու, ինչպես նաև աշխատանքային խումբ ստեղծելու մասին» Հայաստանի Հանրապետության Նախագահի կարգադրությունը, որի առաջնային նպատակներ սահմանվեցին՝ անկախ, հանրության առջև հաշվետու, թափանցիկ և մատչելի արդարադատության ապահովումը, կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը, դատաիրավական համակարգի օրենսդրության և

ռազմավարության բարելավումը: Չանտեսելով կատարված բարեփոխումների արդյունքում գրանցված առաջընթացը և արդյունքները՝ դրանք չէին կարող բավարար և ամբողջական համարվել, քանի որ դեռևս լուծում չէին ստացել բազմաթիվ խնդիրներ: Այդ կապակցությամբ, Հանրապետության Նախագահի 2012 թվականի հունիսի 30-ի ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատվեց «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և դրանից բխող միջոցառումների ցանկը», որով ևս ապահովվեց իրավական և դատական համակարգերի բարեփոխումների շարունակականությունը:

Իրավական և դատական բարեփոխումների շրջանակներում քրեակատարողական համակարգի¹ բարելավման խնդիրները մշտապես ընկալվել ու ընկալվում են, որպես խիստ սկզբունքային և արդար դատաքննության ինստիտուտի կայացման կարևոր բաղադրատարր: Միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներից է բխում այն, որ արդար դատաքննությունը կարող է ամբողջական ավարտուն ինստիտուտ համարվել միայն այն դեպքում, երբ հավուր պատշաճի ապահովվում է դատական ակտերի կատարումը: Ընդ որում, հաշվի առնելով այն իրողությունը, որ դատական ակտերի կատարումը, հատկապես քրեակատարողական ոլորտում, անխուսափելիորեն ուղեկցվում է հարկադրանքի կիրառման անհամեմատ լայն հնարավորությունների հետ, միջազգային մի շարք փաստաթղթերով հանգամանորեն կանոնակարգվեցին կալանավորված անձանց և դատապարտյալներին պահելու նվազագույն պահանջները, դրանք պահպանելու նկատմամբ իրականացվող հսկողության եղանակներն ու ընթացակարգերը և այլն: Այդ հարցադրումներին վճռորոշ նշանակություն տալու մասին է վկայում, թերևս, այն փաստը, որ հիշյալ պահանջներից յուրաքանչյուրը Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի կողմից դիտվում է, որպես «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Կոնվենցիայի 5-րդ և 6-րդ հոդվածների խախտում, որոնք հանգեցնում են անհարկի պատժամիջոցների:

¹ Սույն հայեցակարգի իմաստով քրեակատարողական համակարգ հասկացության տակ հասկացվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համակարգի պետական տարբեր մարմիններ կամ պետական ոչ առևտրային կամ այլ կազմակերպություններ, որոնք օրենսդրությամբ լիազորված են պետական հարկադրանքի միջոցի կիրառման հետ կապ ունեցող որևէ խնդրի, լիազորության կամ գործառույթի ուղղակի կամ անուղղակի իրականացմանը

Մեր երկրում, դեռևս անցյալ դարի 90-ական թվականներից սկիզբ առած դատաիրավական բարեփոխումների շրջանակներում տեղի ունեցած մի շարք օրենսդրական փոփոխություններն իրենց ազդեցությունն ունեցան նաև Հայաստանի Հանրապետության քրեական քաղաքականության վրա ընդհանրապես, և պատժողական քաղաքականության վրա՝ մասնավորապես: Հայաստանի Հանրապետությունը (այսուհետ նաև՝ ՀՀ) ստանձնել է մի շարք մարտահրավերներ, որոնց արդյունավետ իրականացմամբ է պայմանավորված երկրի հետագա զարգացումը: Մասնավորապես, 2002 թվականին Հայաստանի Հանրապետությունը վավերացրեց Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950 թվականի Կոնվենցիան, ինչի հետևանքով պետության կողմից ստանձնած միջազգային պարտավորություններին համահունչ ձևափոխություններ պետք է կատարվեին ներպետական համապատասխան ոլորտներում, այդ թվում՝ քրեական արդարադատության բնագավառում: Այդ իմաստով, բարեփոխումներից անմասն չմնաց նաև քրեակատարողական համակարգը, որը 2001թ-ին ՀՀ ներքին գործերի նախարարության (ներկայիս՝ ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն) ենթակայությունից անցավ ՀՀ արդարադատության նախարարության ենթակայությանը, որով և հիմք դրվեց քրեակատարողական համակարգի լայնածավալ ու շարունակական բարեփոխումներին: Այդուամենայնիվ, քրեակատարողական ոլորտում առկա ի թիվս այլ խնդիրների, դեռևս արդիական են մնում քրեակատարողական հիմնարկների գերբեռնվածությունն ու կալանավորված և դատապարտված անձանց հետ վերականգնողական, ուղղիչ աշխատանքների արդյունավետության բարձրացումը:

Սույն հայեցակարգով նախատեսվում է քրեակատարողական համակարգի և դրա՝ պետական մարմինների և քաղաքացիական հասարակության հետ փոխհարաբերությունների բարելավման հիմնական ուղղությունները, ձևերը և մեթոդները, որոնք կապահովեն Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համակարգում գործող քրեակատարողական համակարգի գործունեության զարգացումը:

Սույն հայեցակարգի նպատակներն են հասարակության անվտանգությանը և քրեական արդարադատությանը նպաստելու համար անհրաժեշտ երաշխիքների կատարելագործումը՝ նվազեցնելով հանցագործությունները, վերահսկելով, ուղղորդելով ու աջակցելով հանցանք կատարած անձանց, ինչպես նաև նպաստելով նրանց արդյունավետ վերասոցիալականացմանը, այդ թվում՝

1) հարկադրանքի միջոց կիրառող մարմինների աշխատանքի արդյունավետության բարձրացումը և դրա համապատասխանեցումը միջազգային չափանիշներին,

2) քրեակատարողական հիմնարկներում անձանց պահման պայմանների բարելավումը, նրանց իրավունքների և օրինական շահերի երաշխավորվածության բարձրացումը, պատժի կրման պայմանների և կարգի հետագա հումանիզացում,

3) ազատազրկման ձևով պատիժ կրած անձանց կողմից հանցագործությունների ռեցիդիվի մակարդակի նվազեցումը՝ ազատազրկման վայրերում սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնելու և այդպիսի անձանց հետագա ազատազրկման շրջանում օգնություն ցուցաբերելու համակարգի զարգացման միջոցով:

Եշված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները՝

1) կատարելագործել քրեակատարողական քաղաքականության, մասնավորապես՝ օրենսդրությունը,

2) իրականացնել ենթակառուցվածքային բարեփոխումներ, մասնավորապես՝ հիմնադրել ազատազրկման վայրերի նոր տեսակներ՝ քրեակատարողական հիմնարկների կառուցվածքի (ներառյալ՝ կառավարման կառուցվածքի) փոփոխմամբ, որը հնարավորություն կտա իրականացնելու՝

ա. դատապարտյալների տեղաբաշխում՝ կատարված հանցագործության ծանրությանը, դատապարտյալի կրիմինոլոգիական բնութագրին և դրսևորած վարքագծին համապատասխան,

բ. ազատազրկման վայրերում դատապարտյալների ուղղմանն ուղղված հիմնական մեթոդների կատարելագործում, պայմանավորված նրանց հետ տարվող սոցիալական և հոգեբանական՝ հասարակության լիիրավ անդամ դարձնելուն ուղղված

աշխատանքների կատարմամբ, ինչպես նաև մշակութային, կրթական և աշխատանքային զբաղվածության ապահովմամբ,

3) բարձրացնել քրեակատարողական համակարգի կառավարման արդյունավետությունը՝ հաշվի առնելով նրա նոր կառուցվածքը, միաժամանակ ձևավորելով էլեկտրոնային կառավարման, տեղեկատվական և հեռահաղորդակցման ժամանակակից ենթակառուցվածքներ,

4) կատարելագործել քրեակատարողական համակարգի գործունեության նկատմամբ գերատեսչական վերահսկողությունը՝ քրեակատարողական հիմնարկների և մարմինների կառավարման մեթոդաբանության, գործունեության հրապարակայնության և դրանց՝ քաղաքացիական հասարակության ինստիտուտների «ենթակայության» ապահովմամբ, ինչպես նաև հասարակության կողմից՝ քրեակատարողական համակարգի առջև ծառայած խնդիրների լուծմանը մասնակցելու համակարգի կատարելագործմամբ,

5) կատարելագործել դատապարտյալների՝ հասարակությանն ինտեգրվելուն ուղղված քրեակատարողական քաղաքականությունը (պատժի իրականացման կազմակերպումը),

6) ընդլայնել ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների և այլ միջոցների կիրառման ոլորտը և կատարելագործել դրանք,

7) բարձրացնել նյութատեխնիկական ապահովվածության մակարդակը, ներառյալ՝ քրեակատարողական համակարգի աշխատողների սոցիալական ապահովության և պաշտպանության համապատասխան մակարդակի ապահովումը, ինչպես նաև հարկադրանքի կիրառման պրակտիկայում ժամանակակից տեխնոլոգիաների և տեխնիկական միջոցների ներդրումը:

Քննարկվող բարեփոխումներն օբյեկտիվ անհրաժեշտություն են նաև Հայաստանի Հանրապետության միջազգային ինտեգրման համատեքստում: Այլ կերպ ասած, նոր ստեղծվող կառույցներն ու քրեակատարողական հիմնարկները պետք է պայմաններ ստեղծեն Միջազգային Ազգերի Կազմակերպության նվազագույն ստանդարտների, ինչպես նաև եվրոպական բանտային կանոնների լիարժեք գործադրման համար:

Սույն հայեցակարգը կոչված է ապահովելու քրեակատարողական համակարգի հետագա զարգացումը և դրա համապատասխանեցումը միջազգային չափանիշերին, որի իրականացումը կհանգեցնի ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կիրառման կայուն գործելակերպի, ինչպես նաև դատապարտյալների կողմից օրինապահ վարքագծի դրսևորման օրենսդրորեն կարգավորված խթանների համակարգի ձևավորմանը, դատապարտյալների հետ աշխատանքի ժամանակակից մեթոդների կիրառմանը (մասնավորապես սոցիալական ու հոգեբանական աշխատանքների ոլորտում), կխոչընդոտի հասարակության մեջ հանցագործ մտածելակերպի ձևավորմանը, քրեակատարողական համակարգի աշխատողների սոցիալական ապահովվածության մակարդակի բարձրացմանը:

Բարեփոխումների իրականացման արդյունքում նախատեսվում է քրեակատարողական համակարգի աշխատանքի արդյունավետության բարձրացում, որի արդյունքում հնարավոր կլինի արդյունավետ իրականացնել պատժի նպատակները:

Նախատեսվում է հայեցակարգը և դրանից բխող միջոցառումներն իրագործել առաջիկա տասը տարիների ընթացքում՝ մինչև 2023 թվականը:

Հայեցակարգի և դրանից բխող միջոցառումների իրականացման պատասխանատուն է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը, իսկ ֆինանսավորման առումով նաև՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը:

ԳԼՈՒԽ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ԵՎ ՌԻՍԿԵՐ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Քրեակատարողական համակարգի բարեփոխումների ներկայիս հիմնական մարտահրավերները հետևյալն են՝

1) ամբողջական և հստակ ռազմավարության և չափանիշների բացակայությունը, որոնց հիման վրա պետք է իրականացվեն ապագա զարգացման և բարեփոխումներին ուղղված աշխատանքները (այն մասամբ կլուծվի սույն հայեցակարգի պաշտոնապես

որևէ կերպ ընդունմամբ, իսկ ամբողջապես՝ համապատասխան իրավական ակտերով քաղաքականության ընդունմամբ),

2) ընդհանուր առմամբ համակարգի գործունեության գնահատման համար կոնկրետ միջոցների և չափորոշիչների, ինչպես նաև հաշվետվողականության հստակ համակարգի, առկա խնդիրների ու բացթողումների պարզաբանման բացակայությունը,

3) անձնակազմի, մասնավորապես բարձր որակավորում ունեցող մասնագետների ընտրության և համապատասխան ուսուցման թերի մեխանիզմների առկայություն,

4) անձանց համապատասխան փորձաշրջանն ընդգրկող իրավական բազմակողմանի կանոնակարգերի, սոցիալական և հոգեբանական լիարժեք գործող ծառայությունների բացակայությունը,

5) պատիժը կրելուց հետո բանտարկյալներին՝ հասարակության մեջ վերաինտեգրվելու հնարավորությունների և երաշխիքների տրամադրման համակարգի բացակայությունը,

6) պետական, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների, ինչպիսիք են ՀՀ ոստիկանությունը, պետական զբաղվածության ծառայությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ՀՀ առողջապահության նախարարությունը, զբաղվածության մասնավոր գործակալությունները, շահագրգիռ հասարակական կազմակերպությունները, գործատուները և այլ շահագրգիռ մարմինների միջև թույլ համագործակցությունը:

Հայեցակարգի և դրանից բխող միջոցառումների հաջող իրականացման հիմքում ընկած ենթադրություններն են՝

1) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը պարտավորվում է իրականացնել հայեցակարգը և դրանից բխող միջոցառումները քրեակատարողական համակարգի բարեփոխումը շարունակելու համար,

2) Հայաստանի Հանրապետությունում քրեակատարողական համակարգի բարեփոխումների ուղղությունները սահմանող հայեցակարգը հաստատվում է ՀՀ կառավարության կողմից,

3) կիրառվող պատժամիջոցները՝ որպես այլընտրանքային պատիժ ազատագրկմանը և հիմնական պատժամիջոցները համակցված ձևով պարտադրելու հնարավորությունը ներկայացված են ՀՀ քրեական օրենսգրքում,

4) քրեակատարողական համակարգի բարեփոխումների իրականացման համար կշարունակվեն համապատասխան ֆինանսավորումը թե պետական բյուջեից, թե դոնորային համակարգման միջոցով,

5) որակավորված անձնակազմով համալրման և վերապատրաստման գործընթացը կկրի շարունակական բնույթ:

Հայեցակարգի և դրանից բխող միջոցառումների իրականացման համար հայտնաբերված և դրանց հետ կապված հիմնական ռիսկերն են՝

1) գոյություն ունեցող կառուցվածքների և բարձր պաշտոններ զբաղեցնող պաշտոնյաների ընդդիմանալը համակարգում բարեփոխումներ իրականացնելու ցանկացած փորձի, որով դիմադրությունը պայմանավորված է իրենց դիրքի նկատմամբ ունեցած հպարտության զգացումով և տնտեսական շահերով, ինչը հատուկ է ոչ միայն Հայաստանին (տվյալ ռիսկը ներկայացված է ըստ ԱՄՆ պետական դեպարտամենտի թմրանյութերի դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բաժնի քրեական արդարադատության և աջակցության հարցերով գործընկերությունների գրասենյակի ուղղիչ հիմնարկների հարցերով թիմի կողմից 2011թ. հոկտեմբերին կատարված քրեակատարողական համակարգի գնահատման և ծրագրային առաջարկությունների),

2) անհրաժեշտ ֆինանսական և նյութական ռեսուրսների բացակայությունը,

3) հանցագործությունների կանխարգելման և անձանց վերականգնման պատասխանատվությունների վերաբերյալ՝ լայն հասարակության ընկալման բացակայությունը,

4) հարկադրանքի միջոցների կիրառման հարցում կարևոր դերակատարություն ունեցող պետական և տեղական մարմինների, ինչպես նաև հասարակական ու այլ կազմակերպությունների կողմից համագործակցության բացակայությունը,

5) որակավորված և համապատասխան ուսուցում ստացած անձնակազմի բացակայությունը:

Հայեցակարգի և դրանից բխող միջոցառումները հիմնված են միջազգայնորեն ընդունված զարգացման մոդելների վրա՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության սոցիալ-մշակութային իրավիճակը և առանձնահատկությունները:

Քրեակատարողական համակարգի կազմակերպչական կառուցվածքը տարբերվում է՝ կախված պետությունից: Գոյություն չունի քրեակատարողական համակարգի ստեղծման որևէ ամրագրված մոդել: Յուրաքանչյուր երկիր մշակում է համակարգի ստեղծման իր սեփական ուղին՝ համաձայն պետության տարածքի, իրավական սովորույթների, համատեքստի, ֆինանսական ռեսուրսների, սոցիալ-մշակութային իրավիճակի, հասարակական օժանդակության և դատապարտյալներին ու նախկին իրավախախտներին սոցիալական միջավայր ներգրավելու անհրաժեշտության ընկալման:

Հայեցակարգի իրագործման նպատակով անհրաժեշտ է 20 850 000.0 հազ. դրամ (բացվածքը բերվում է ստորև՝ ըստ բաժինների), որից՝

1) քրեակատարողական օրենսդրության բարեփոխումների իրականացման համար ֆինանսավորման առանձնակի հաշվարկներ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է,

2) ենթակառուցվածքային բարեփոխումների համար՝ 20 000 000.0 հազ. դրամ,

3) պրոբացիայի ծառայության ստեղծման և պահպանման ծախսերի իրականացման համար՝ 800 000.0 հազ. դրամ,

4) կառավարման համակարգի բարեփոխումների իրականացման համար՝ 45000.0 հազ. դրամ:

ԲԱԺԻՆ 2. ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄ

ԳԼՈՒԽ 3. ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2001 թվականին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված քրեակատարողական համակարգի բարեփոխումների ծրագիրը նախատեսում էր բարեփոխումների իրականացում մի քանի ուղղություններով: Բնական է, որ այդ բարեփոխումներն առաջին հերթին պետք է վերաբերեին քրեակատարողական ծառայության կարգավիճակի օրենսդրական սահմանմանը: Հենց այս իմաստով էլ՝ 2003 թվականին ընդունվեց «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, իսկ 2005 թվականին ընդունվեց հիշատակված օրենքի բարեփոխված տարբերակը:

Քրեակատարողական համակարգի գործունեությունը պատշաճ կերպով ապահովելու համար ցայսօր ընդունվել են բազմաթիվ իրավական ակտեր, որոնց թվում է նաև «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի ընդունումը, որոնք դարձան քրեակատարողական ծառայության իրավական բարեփոխումների շրջանակներում իրականացվող և ձեռնարկվելիք միջոցառումների անկյունաքարերը: Իրավական բարեփոխումների շրջանակում, բացի հիշատակված ակտերից, ընդունվել են ավելի քան յոթ տասնյակ նորմատիվ իրավական ակտեր: Անկասկած պետք է նկատի ունենալ, որ իրավական բարեփոխումները շարունակական գործընթաց են և պետք է համապատասխանեն հասարակական հարաբերությունների զարգացման միտումներին և ընթացքին, բնականաբար դրանք պետք է իրականացվեն ընդհանուր կայուն օրենսդրական դաշտի համատեքստում, ինչպես նաև այլ ոլորտներում կատարվող ինստիտուցիոնալ աշխատանքներին համապատասխան, այդ թվում՝ կառավարման համակարգի, ենթակառուցվածքային բարեփոխումներին կամ նոր ինստիտուտների ստեղծմանը (օրինակ՝ պրոբացիայի ինստիտուտը) զուգընթաց: Այլ կերպ ասած, կատարված իրավական բարեփոխումներն ապահովեցին այն, որ անհրաժեշտ բոլոր հարաբերությունները իրավական համապատասխան կարգավորում ստանան: Սակայն դրանք չպետք է դիտել դոգմատիկ, և դրանք կամ դրանցով կարգավորված իրավական առանձին ինստիտուտներ պետք է կատարելագործվեն

(օրինակ՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատման կամ ծանր հիվանդության պատճառով պատժից ազատման ինստիտուտը և այլն):

Անհրաժեշտ է ապահովել ինչպես ոլորտում իրականացվող ինստիտուցիոնալ (նկատի է առնվում ոչ միայն շենք-շինությունների փոփոխումը) բարեփոխումների իրավական կողմը, այնպես էլ կատարելագործել համակարգում առկա հարաբերությունները կանոնակարգող օրենսդրությունը՝ զարգացնելով քրեաիրավական առանձին ինստիտուտներ, միաժամանակ՝ իրականացնելով ազգային և միջազգային օրենսդրության համեմատական ուսումնասիրություն և վերլուծություն:

Այս կապակցությամբ, Հանրապետության Նախագահի 2012 թվականի հունիսի 30-ի ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրով նախատեսված է Հայաստանի Հանրապետության նոր քրեական օրենսգրքի մշակում, որը, համաձայն միջոցառումների ցանկի, նախագիծը ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը ներկայացված կլինի 2015 թվականի սեպտեմբերին: Ելնելով նոր քրեական օրենսգրքի պահանջներից՝ ենթադրվում է, այն գործողության մեջ դնելու մասին օրենքով արդեն իսկ անդրադարձ կլինի նաև ՀՀ քրեակատարողական օրենսգրքի գործողությանը: Այնուհանդերձ, քրեական նոր օրենսգրքի ուժի մեջ մտնելու հանգամանքով պայմանավորված անհրաժեշտ կլինի վերանայել դրանով նախատեսված պատիժների կատարման հարաբերությունները կանոնակարգող իրավական ակտը՝ ՀՀ քրեակատարողական օրենսգիրքն ամբողջությամբ: Իհարկե, նշված օրենսգրքի վերանայումն (հավանաբար՝ նոր օրենսգրքի ընդունում) ինքնին ենթադրում է նաև դրանից բխող օրենսդրության վերանայում ևս:

Այնուհանդերձ, մինչ նշված օրենսգրքերի վերանայումը (կամ դրանց վերանայմամբ) անհրաժեշտ է օրենսդրորեն առանձին անդրադարձ կատարել քրեաիրավական որոշ ինստիտուտների, մասնավորապես՝ (դրանցից որոշները նախատեսված են նաև Հանրապետության Նախագահի 2012 թվականի հունիսի 30-ի ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրով):

1) քրեակատարողական ծառայությունում առկա կարևորագույն խնդիրից է գերբնակեցումը քրեակատարողական հիմնարկների գերակշռող մասում, որով

խախտվում են ՀՀ արդարադատության նախարարի 2012թ. փետրվարի 28-ի թիվ 30-Ն հրամանով քրեակատարողական հիմնարկների համար սահմանված լրակազմին վերաբերող պահանջները: ՀՀ Ազգային ժողովի կողմից 2011 թվականին ընդունված համաներման ակտը խնդիրը որոշ չափով մեղմեց, սակայն այն չլուծեց և չէր էլ կարող լուծել այն, քանի որ տվյալ խնդրի համար համաներումը համարվում է մեկ ակտանի քայլ: Խնդրի ամբողջական լուծման համար առկա են երկու գործոն, առաջին՝ անհրաժեշտ թվաքանակի լրակազմով ենթակառուցվածքների առկայություն և ճշգրտված քրեական, մասնավորապես՝ պատժային քաղաքականություն: Երկրորդը հատկորոշվում է նրանով, որ ամբողջական տեսանկյունով խնդրի լուծմանն անդրադարձ կարվի ՀՀ քրեական նոր օրենսգրքի մշակմամբ, որը կպահանջի բավականաչափ ժամանակ: Իսկ լոկալ և ժամանակային իմաստով, հրատապ լուծումներ կլինեն քրեաիրավական առանձին խնդիրներին անդրադառնալը: Այս կապակցությամբ անհրաժեշտ է որպես երկարաժամկետ ծրագիր՝ ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծի մշակում: Որպես կարճաժամկետ ծրագիր՝ քրեաիրավական առանձին, մասնավորապես՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատման, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինման ինստիտուտների օրենսդրական կարգավորումների, դրանց և բաց տեսակի ուղղիչ հիմնարկ տեղաբաշխելու ընթացակարգերի գործնական կիրառման քաղաքականության վերանայում (որպես կարճաժամկետ ծրագիր կարևորվում է նաև ազատությունից զրկելու հետ չկապված պատիժները լայն չկիրառելու խնդրի՝ դատական իշխանության հետ քննարկման հարցը): Այսինքն՝ որոշումներ կայացնելիս պետք է հաշվի առնել հետևյալ հանգամանքները. մարդասիրության սկզբունքին համապատասխան, օրենքը դատարանին հնարավորություն է տալիս պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատել կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինել այն անձանց, ովքեր իրենց դրսևորած և կանխատեսելիք վարքագծով թույլ են տալիս եզրակացնելու, որ հետագա ուղղման գործընթացը կարող են անցնել ոչ ազատազրկման ձևով պատժի կրմամբ: Սակայն պատժից պայմանական վաղաժամկետ ազատումը չպետք է պայմանավորել միայն դատապարտյալի ուղղման աստիճանի հետ, այլ դատապարտյալի՝ հասարակություն վերադառնալու և օրինապահ կյանքով ապրելու պատրաստվածության աստիճանով (հիմք՝ Եվրոպայի Խորհրդի

«Պայմանական վաղաժամկետ ազատման մասին» Rec (2003)22 հանձնարարականի 18-րդ կետի համաձայն՝ դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը քննելիս պետք է որպես չափանիշ վերցնել դատապարտյալի անձնային հատկանիշները, սոցիալական, տնտեսական իրավիճակը, ինչպես նաև վերականգնողական ծրագրերին մասնակցելու հնարավորությունը):

Բացի այդ, հիշատակված հարաբերությունները կանոնակարգող համապատասխան իրավական ակտերը պետք է համապատասխանեցվեն Եվրոպայի Խորհրդի «Պայմանական վաղաժամկետ ազատման մասին» Rec (2003)22 հանձնարարականի դրույթներին և «ՄԱԿ-ի Ազատագրկման հետ կապ չունեցող միջոցների վերաբերյալ նվազագույն չափորոշիչ կանոններին» (Տոկիոյի կանոններ), «ՄԱԿ-ի Ազատագրկման հետ կապ չունեցող միջոցների վերաբերյալ նվազագույն չափորոշիչ կանոններին» (3.6 կետ):

Անհրաժեշտ է հստակեցնել նաև պատժի կրումից ազատման մեկ այլ ինստիտուտի՝ հիվանդ դատապարտյալին պատժից ազատելու կառուցակարգերը, որի հիմքը տվյալ դատապարտյալի մոտ պատիժը կրելուն խոչընդոտող հիվանդության առկայությունն է: Օրենսդրությունից բխում է, որ ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշմամբ ամրագրված ծանր հիվանդություններից յուրաքանչյուրն ինքնին խոչընդոտ են հանդիսանում պատիժը կրելու հարցում: Այսինքն՝ եթե դատապարտյալի ախտորոշումը համապատասխանում է նշված որոշմամբ սահմանված հիվանդությունների ցանկում սահմանված որևէ հիվանդությանը, ապա տվյալ հիվանդությունը դատապարտյալի կողմից պատիժը կրելուն խոչընդոտ լինելու հարցը չի կարող առանձին քննարկման առարկա դառնալ որևէ մարմնի կողմից: Մինչդեռ, դատապարտյալին ծանր հիվանդության պատճառով պատժից ազատելու վերաբերյալ դատարան միջնորդություն ներկայացնելիս անհրաժեշտ է անշեղորեն ղեկավարվել ՄԻԵԴ-ի՝ անձի ազատության սահմանափակմանը վերաբերող չափանիշներով (ՄԻԵԴ-ը («Խուդրբինն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության» գործով, բողոք թիվ 59696/00, 2006թ. հոկտեմբերի 26-ի որոշում) անդրադառնալով անձին ազատությունից զրկելու չափանիշների հարցին նշել է, որ բացառիկ դեպքերում, երբ ազատագրվածի առողջական վիճակը բացարձակապես անհամատեղելի է նրան անազատության մեջ

պահելու հետ, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական Կոնվենցիայի 3-րդ հոդվածը պահանջում է ազատ արձակել նման անձին որոշակի պայմաններով): Առկա են երեք տարրեր, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել անձին անազատության մեջ պահելու պայմանների և նրա առողջական վիճակի համապատասխանության հարցը քննարկելիս (տես՝ Եվրոպական դատարանի որոշում «Մուիզելն ընդդեմ Ֆրանսիայի» գործով, բողոք թիվ 67263/01)՝ անձի առողջական վիճակը, ազատագրկման վայրերում ցույց տրվող բժշկական օգնության և սպասարկման պատշաճ բնույթը, ազատության սահմանափակման կիրառման նպատակահարմարությունը՝ հաշվի առնելով անձի առողջական վիճակը:

Այսպիսով, անհրաժեշտ է վերանայել օրենքների համապատասխան դրույթներն այն առումով, որ ծանր հիվանդության պատճառով պատժից ազատելիս դատարանի հայեցողությունը բացարձակ չլինի, վերջինս ղեկավարվի հստակ չափանիշներով, մասնավորապես հաշվի առնելով դատապարտյալի հիվանդության բնույթը, անազատության պայմաններում ցույց տրվող բժշկական օգնության և սպասարկման բնույթը, ինչպես նաև տվյալ դատապարտյալի կողմից նոր հանցագործություն կատարելու հավանականությունը: Միաժամանակ, անհարժեշտ է նաև հստակ սահմանել դատական քննության սեղմ ժամկետներ:

2) Դատարանի՝ ինքնուրույն և առանց որևէ չափանիշների ու պատճառաբանության պատիժը պայմանականորեն չկիրառելու կապակցությամբ օրենքով սահմանված ամբողջական հայեցողությունն իր մեջ պարունակում է սխալականության ռիսկեր, որոնցով պայմանավորված և համապատասխան երաշխիք ամրագրելու նպատակով նախատեսվում է. նախ, սահմանել պատիժը պայմանականորեն չկիրառելու համապատասխան չափանիշներ՝ նույնը ինչ պատժից պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում, և երկրորդ. մինչ դատարանի կողմից համապատասխան եզրահանգման գալը, դատարան ներկայացվի մասնագիտական կառույցի կողմից կազմված եզրակացություն: Սահմանված կարգի համաձայն՝ ստեղծվելիք պրոբացիայի ծառայության կողմից կկազմվի անձի բնութագիրը, որում մասնագետի կողմից կտրվեն համապատասխան չափորոշիչների առկայության (առկա է, թե ոչ) և դրսևորման աստիճանները (անբավարար, չեզոք, բավարար): Ներկայացված գնահատականների հիմքով էլ դատարանի կողմից կլուծվի

պատիժը պայմանականորեն չկիրառելու (բավարարի դեպքում) կամ այդ ինստիտուտի կիրառումից հրաժարվելու (անբավարարի դեպքում) հարցը:

3) Դատապարտյալների ու կալանավորված անձանց դատական պաշտպանության իրավունքի իրացման շրջանակները չնեղացնելու նպատակով անհրաժեշտ է տվյալ հարաբերությունները կարգավորող համապատասխան իրավանորմերը ենթարկել փոփոխության և կալանավորված անձանց ու դատապարտյալներին հնարավորություն տալ բողոքարկելու ոչ միայն համապատասխան հիմնարկների վարչակազմերի գործողությունները, այլ նաև վերջիններիս անգործությունն ու որոշումները: Տվյալ փոփոխությունը կնպաստի անազատության մեջ գտնվող անձանց դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի առավել լիարժեք իրացմանը:

4) Անհրաժեշտ է նաև ցմահ ազատազրկման դատապարտված անձանց մեկուսացվածության առավել մեղմ աստիճանի ուղղիչ հիմնարկի տեսակ, ինչպես նաև կիսաբաց ուղղիչ հիմնարկում պատիժը կրող դատապարտյալներին բաց ուղղիչ հիմնարկ տեղափոխելու հնարավորության հարցը: Այս փոփոխությունը կվերացնի օրենսդրության մեջ առկա այն թերկարգավորվածությունը, որի պատճառով ցմահ ազատազրկման դատապարտված անձինք պատժի առնվազն քսան տարին կրելուց հետո կարող են պայմանական վաղաժամկետ ազատվել պատիժը կրելուց, սակայն նույն ժամկետից հետո չեն կարող տեղափոխվել ավելի ցածր մեկուսացվածության աստիճան ունեցող ուղղիչ հիմնարկ՝ պատիժը կրելու համար: Այսինքն՝ նախագծով առաջարկվող փոփոխությունների արդյունքում ցմահ ազատազրկման դատապարտված անձանց համար կհեշտացվի բաց, կիսաբաց և կիսափակ ուղղիչ հիմնարկ տեղափոխվելու հնարավորությունը:

5) ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի հայեցակարգով հաստատված մոտեցումներին համապատասխանեցնելու նպատակով անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրը ևս. քրեական դատավարության օրենսգրքով պետք է կարգավորվեն իրավահարաբերություններ ներառյալ դատական ակտի ընդունումը, այլ ոչ թե դատավճռի ուժի մեջ մեջ մտնելուց հետո եղած իրավահարաբերությունները: Այս կապակցությամբ, այն հոդվածները, որոնք վերաբերում են պատժի կատարման փուլին, ներառվում են ՀՀ քրեակատարողական օրենսգրքում՝ ունենալով իրենց

կատարելագործումները: Տվյալ լուծումների իրականացման համար իրավական թե տեսական, և թե գործնական առումով որևէ խոչընդոտող հանգամանք չկա (նկատի է առնվում ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի՝ ավելի ուշ ընդունման և գործողության մեջ դնելու հանգամանքը): Անհրաժեշտ է որոշակի աշխատանք տանել նաև երեք իրավական ակտերի (ՀՀ քրեական, ՀՀ քրեական դատավարության և ՀՀ քրեակատարողական օրենսգրքեր) միջև առկա հակասությունները վերացնելու ուղղությամբ (օրինակ՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատման հարաբերությունները կարգավորող հարցում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 434-րդ հոդվածի 3-րդ մասը հակասում է ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասին, կամ պատիժը կրելը հետաձգելու հարաբերությունները կարգավորող հարցում ՀՀ քրեական օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին մասը հակասում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 431-րդ հոդվածի 1-ին մասին):

Գերբնակեցման հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է նաև իրականացնել քրեական դատավարական իրավանորմերի համապատասխան փոփոխություններ՝ ամբողջությամբ փոխելու կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու ներկայումս գործող մոտեցումները (երկարաժամկետ ծրագիր)՝ օրենսգրքում հստակ ամրագրելով, որ կալանավորումը կարող է կիրառվել միայն որպես բացառիկ խափանման միջոց:

6) Անհրաժեշտ է նորովի սահմանել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում գործող տեղաբաշխման հանձնաժողովի գործունեության իրականացման կարգն ու պայմանները՝ ուղղիչ հիմնարկներում դատապարտյալների դասակարգումն իրականացնելով ինչպես նրանց կողմից կատարված հանցանքի բնույթից և հանրության համար վտանգավորության աստիճանից ելնելով, այնպես էլ, էլ ավելի շեշտադրմամբ, պատիժը կրելու ընթացքում նրանց դրսևորած վարքագծից և քրեական փորձառությունից ելնելով: Միաժամանակ, տեղաբաշխման գործառույթի իրականացումն ամբողջությամբ պետք է լինի դատապարտյալների համար կանխատեսելի, որն էլ իր հերթին կհանգեցնի տեղաբաշխման գործառույթն իրականացնող մարմնի կամ պաշտոնատար անձանց գործողությունների

իրավաչափությանը և միատեսակությանը: Այդ նպատակով, անհրաժեշտ կլինի օրենսդրորեն սահմանել տեղաբաշխման իրականացման չափորոշիչներ:

Դատապարտյալի՝ պատիժը կրելու համար ուղղիչ հիմնարկի տեսակը (մեկուսացվածության տարբեր աստիճան ունեցող հիմնարկ) տեղաբաշխմամբ որոշելու հարցի հետ ուղղակիորեն կապված են նաև դատապարտյալի՝ օրենսդրությամբ սահմանված անջատ պահելու սկզբունքների պահպանման հարցը: Այս իմաստով, օրենսդրական կարգավորումները վերանայելու անհրաժեշտություն ևս կա, այն հաշվով, որպեսզի հաշվի առնվեն ոչ միայն կատարված հանցանքի ծանրությունը, հանրության համար վտանգավորության աստիճանը, այլև, առավել շեշտադրմամբ, ուղղիչ հիմնարկում դրսևորած վարքագիծը, դատապարտյալի վերաբերմունքը իր կատարած հանցանքի հանդեպ, հետագայում հասարակությանը ինտեգրվելու՝ դատապարտյալի կարողությունը:

7) Հատկանշական հանգամանք է նաև այն, որ նոր ենթակառուցվածք ունեցող ուղղիչ հիմնարկների կառավարման և շահագործման համար անհրաժեշտ է լինելու վերանայել օրենսդրությամբ սահմանված որոշակի կարգավորումներ և դրանք օրենսդրորեն սահմանել նորովի: Այդ կապակցությամբ, իրավական բնույթի աշխատանքներ կիրականացվեն ենթաօրենսդրական ակտերի լրամշակման ուղղությամբ:

Քրեակատարողական համակարգի օրենսդրական բարեփոխումների իրականացումն ինքնին պետք է իրականացվի ՀՀ արդարադատության նախարարության ընթացիկ աշխատանքների շրջանակներում: Այսինքն՝ դա իր հերթին ենթադրում է, որ այդ աշխատանքների ֆինանսավորման համար առանձնակի հաշվարկներ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԲԱԺԻՆ 3. ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

ԳԼՈՒԽ 4. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

2001 թվականին ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած քրեակատարողական համակարգի բարեփոխումների ծրագրով, բացի իրավական ապահովումից, նախատեսվում էր գործնական և ենթակառուցվածքային միջոցառումներ (սույն բաժնի իմաստով ենթակառուցվածքային բարեփոխումներ հասկացությունն իր մեջ ներառում է քրեակատարողական հիմնարկների շենք-շինություններին վերաբերող խնդիրները): Վերջինս ենթադրում էր քրեակատարողական ծառայության, մասնավորապես քրեակատարողական հիմնարկների նյութական բազայի համապատասխանեցում թե նոր կենսական պայմաններին, և թե միջազգային չափանիշներին: Այլ կերպ ասած, անհրաժեշտ է՝ քրեակատարողական հին և ոչ օպտիմալ օգտագործելի հիմնարկների գործունեության դադարեցում, առկա շինությունների վերափոխում և միջազգային չափանիշներին համապատասխանեցում, ինչպես նաև միջազգային չափանիշներին համապատասխանող նոր քրեակատարողական հիմնարկների կառուցում: Բնական է, որ հիմնարկների՝ խորհրդային ժամանակներից ժառանգություն ստացած արդեն իսկ բարոյապես և ֆիզիկապես մաշված շենք-շինություններն իրենց վիճակով բացարձակ անբավարար են մարդու իրավունքների միջազգային չափանիշներին համապատասխան պատժի կատարման համար: Մինչդեռ, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարման համատեքստում (մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական հռչակագիրը, Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոնվենցիան, Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքի կամ պատժի ձևերի դեմ Միավորված Ազգերի Կազմակերպության կոնվենցիան, Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնները և դրանց հետ կապված մի

շարք փաստաթղթեր) առավել սուր է հնչում եվրոպական չափանիշներին համահունչ ենթակառուցվածքներ ունենալու անհրաժեշտությունը:

Քրեակատարողական համակարգի բարեփոխումների սկզբնական փուլում՝ 2001-2006 թվականներին, վերանորոգվել են քրեակատարողական չորս հիմնարկներ՝ համակարգի առջև ծառայած խնդիրների ժամանակավոր լուծման համար: Իհարկե, պետք է փաստել, որ նույնիսկ վերանորոգված հիմնարկների պայմաններում չենք կարող խոսել համակարգի ենթակառուցվածքների՝ միջազգային չափանիշներին լիարժեք համապատասխանելու մասին: Այլ կերպ ասած, մինչ այժմ վերանորոգված քրեակատարողական հիմնարկները կարող են համարվել միայն անցումային փուլ ապահովող ենթակառուցվածքներ: Այդ իսկ պատճառով, քրեակատարողական նոր հիմնարկների կառուցումն անհրաժեշտություն է: Վերջին հաշվով, նվազագույն պահանջներին չբավարարելը հանգեցնելու է կալանավորվածներին ու դատապարտյալներին փոխհատուցում վճարելու վերաբերյալ նորանոր դատական ակտերի, ինչը շահեկան չէ ոչ միայն իրավական, քաղաքական, այլև՝ զուտ ֆինանսական առումով: Առավել շահեկան է ծախսել ֆինանսական միջոցները անհրաժեշտ պայմաններն ապահովելու համար:

Բացի այդ, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման Կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) Հայաստան կատարած այցելությունների արդյունքում արված դիտողությունների և առաջարկությունների գերակշիռ մասի կատարումն առավելապես պայմանավորված է լինում ազատագրկման վայրերի շինություններն ամբողջությամբ վերակառուցելու և ձևափոխելու անհրաժեշտությամբ:

Անցած տարիների աշխատանքերն իրենց մեջ ներառել են ինչպես մի քանի հիմնարկների կապիտալ նորոգում, այնպես էլ մեկ նոր քրեակատարողական հիմնարկի՝ «Արմավիրի» նախաձեռնում: Այս ամբողջը համակարգված արտացոլվեց ՀՀ կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 10-ի արձանագրային որոշմամբ հավանության արժանացած ՀՀ քրեակատարողական ծառայության ենթակառուցվածքային բարեփոխումների հայեցակարգով, որով նախատեսված աշխատանքների իրագործումը որոշակի չափով խաթարեց 2008-2009 թվականների

համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը: Այդ պատճառով, որոշակի փոփոխությունների և ճշգրտումների անհրաժեշտություն է առաջացել կատարել նաև այդ հայեցակարգում, որն էլ իրականացվում է սույն հայեցակարգով:

ԳԼՈՒԽ 5. ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Քրեակատարողական ծառայության ենթակառուցվածքային բարեփոխումների իրականացման նպատակն է քրեակատարողական ծառայության՝ օրենքով նախատեսված խնդիրների կատարման արդյունավետության բարձրացումը՝ հնարավորինս նվազեցնելով ֆինանսական ծախսերը և կոռուպցիոն ռիսկերը:

Ներկայումս Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կազմում գործում է 12 քրեակատարողական հիմնարկ, որոնցում հնարավոր է պահել կալանավորված և ազատությունից զրկելու հետ կապված պատժի դատապարտված 4395 անձի: Ընդ որում, առանց բաց տեսակի ուղղիչ հիմնարկների լրակազմի, այդ թիվն էլ ավելի նվազ է՝ 4171 անձ: Հիմնարկներում պահվող անձանց միջին թիվը (առանց բաց տեսակի ուղղիչ հիմնարկների լրակազմի) կազմում է մոտ 365: Նման փոքր հիմնարկների պահպանումը, մանավանդ, երբ դրանք գտնվում են միևնույն բնակավայրում, կամ շատ մոտ են միմյանց, ծայրահեղ անարդյունավետ է, քանի որ այդ հիմնարկների պահպանման ծախսերի (այդ թվում՝ անվտանգության ապահովման) զգալի մասը չի կորրեկցվում հիմնարկում պահվող անձանց թվի հետ: Միջազգային փորձը անառարկելիորեն վկայում է, որ այլ երկրներում առկա է միտում կրճատել քրեակատարողական հիմնարկների թիվը, ինչն անկասկած արդարացված է նաև տնտեսական արդյունավետության և ֆինանսական միջոցները խնայելու տեսանկյունից:

Այս տեսակետից քրեակատարողական ծառայության ենթակառուցվածքային բարեփոխումների առաջիկա խնդիրն է հնարավորինս էժանացնել կալանավորվածներին պահելու վայրերում անձանց պահելը և պատժի կատարումը, որը հնարավոր կլինի անել քրեակատարողական փոքր հիմնարկների թվաքանակի կրճատմամբ:

խոշորացված քրեակատարողական հիմնարկների գաղափարն ընդունելի է նաև կազմակերպահրավական չափանիշներով, քանի որ կենտրոնացումը հնարավորություն է տալիս առավել արդյունավետ օգտագործել պրոֆեսիոնալ ռեսուրսները: Օրինակ, սոցիալ-հոգեբանական, բժշկական ոլորտի լավագույն մասնագետներին, որոնք գործնականում այնքան էլ շատ չեն, հնարավոր է գործունեության առավել լայն պայմաններ ստեղծել միայն խոշորացված քրեակատարողական հիմնարկներում:

Այսպիսով, տնտեսական արդյունավետության տեսանկյունից նպատակահարմար է առաջիկա 10 տարիների ընթացքում շահագործման հանձնել նոր քրեակատարողական հիմնարկներ, որոնցից յուրաքանչյուրում հնարավոր կլինի պահել 800-ից ավելի կալանավորված և ազատությունից զրկելու հետ կապված պատժի դատապարտված անձանց (բացառություն կկազմի հանրապետության հարավային տարածաշրջանները սպասարկող հիմնարկը, որի պարզաբանումը կբերվի ստորև):

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կազմում գործող 12 քրեակատարողական հիմնարկների 4171 (առանց բաց տեսակի ուղղիչ հիմնարկների լրակազմի) կալանավորված և ազատությունից զրկելու հետ կապված պատժի դատապարտված անձանց պահելու հնարավորությունը չի բավարարում առկա պահանջներին: Առավելագույն դեպքում դա կարող է ապահովել մոտ 100 կալանավորված և ազատազրկված անձ 100.000 բնակչի հաշվարկով:

Ինչպես վկայում է Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների փորձը² (2012 թվականի դեկտեմբերի 13-ի դրությամբ 100000 բնակչի հաշվարկով առկա են հետևյալ թվաքանակով ազատությունից զրկված անձինք. ԱՄՆ՝ 730, ՌԴ՝ 501, Ֆրանսիա՝ 102, Լեհաստան՝ 220, Ուկրաինա՝ 338, Բելառուս՝ 438, Կանադա՝ 117, Ճապոնիա՝ 54), այդ թիվը վերջին երեք տարիների ընթացքում կայուն է եղել, նույնիսկ առանձին երկրներում իրավական բարեփոխումների արդյունքում այն նվազել է: Նկատենք նաև, որ ներկայումս մեր հարևան երկրներում՝ Վրաստանի Հանրապետությունում 100.000 բնակչին ընկնող դատապարտյալների թիվը կազմում է 514, Ադրբեջանում՝ 407, Թուրքիայում՝ 168, իսկ Իրանի Իսլամական Հանրապետությունում՝ 333:

² Տվյալները ներկայացված են Բանտային հետազոտությունների միջազգային կենտրոնի կողմից 2012 թվականի դեկտեմբերի 13-ի դրությամբ, կայք՝ www.prisonstudies.org

Բացի կալանավորված և ազատությունից զրկված անձանց ընդհանուր թվի աճից, թե՛ կենտրոնական և արևելյան Եվրոպայի երկրներում, թե՛ Հայաստանում նկատվում է ծանր և առանձնապես ծանր հանցագործություններ կատարած անձանց թվի աճի միտում, այսինքն՝ բարձրանում է նաև հանցավորության որակը: Նման աճի միտումը պահպանվում է անգամ այն դեպքում, երբ ոչ մեծ ծանրության և միջին ծանրության հանցագործություններ կատարած անձանց նկատմամբ լայնորեն կիրառվում են և կշարունակեն կիրառվել ազատությունից զրկելու հետ չկապված պատիժները (հանրային աշխատանքներ, տուգանք և այլն):

Ներկայումս, հետևելով միջազգային զարգացումներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված են հետևյալ ուղղիչ հիմնարկների տեսակները, ըստ մեկուսացվածության աստիճանների՝

- 1) բաց ուղղիչ հիմնարկ.
- 2) կիսաբաց ուղղիչ հիմնարկ.
- 3) կիսափակ ուղղիչ հիմնարկ.
- 4) փակ ուղղիչ հիմնարկ.
- 5) բուժական ուղղիչ հիմնարկ:

Ըստ գործնական վերլուծությունների և կանխատեսումների, մոտակա 10 տարիների ընթացքում Հայաստանում կալանավորված և ազատությունից զրկված անձանց թիվը չի գերազանցի մոտ 5000 մարդը, որից՝

- 1) մոտ 950-ը պահվելու են կալանավորվածներին պահելու վայրերում,
- 2) մոտ 1200-ը պահվելու են փակ ուղղիչ հիմնարկում,
- 3) մոտ 1650-ը պահվելու են կիսափակ ուղղիչ հիմնարկում,
- 4) մոտ 1150-ը՝ կիսաբաց ուղղիչ հիմնարկում,
- 5) մոտ 150-ը՝ բաց ուղղիչ հիմնարկում:

Պատժի կատարումն ապահովելու տեսակետից քրեակատարողական ծառայության բարեփոխումների առաջիկա տասնամյակի առաջնահերթ խնդիրն է ավելացնել քրեակատարողական ծառայության կալանավորված անձանց պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ընդհանուր լրակազմը՝ այն հասցնելով մոտ 4500-ի:

Քրեակատարողական ծառայության գործունեության առանձնահատկություններից մեկն այն է, որ կալանավորվածների և

դատապարտյալների կողմից իրենց իրավունքներն իրացնելուն խոչընդոտելու, իրավունքների բնականոն իրականացման հետ կապված կոռուպցիայի դեպքերը հաճախ տեղի են ունենում ավտոմատացված համակարգերի բացակայության պատճառով, որոնք հանգեցնում են վերջիններիս իրավունքների իրացման բնականոն գործընթացի կախվածությունը քրեակատարողական ծառայողներից, որն էլ իր հերթին բերում է էական կոռուպցիոն ռիսկերի ստեղծմանը:

Այսպիսով, քրեակատարողական ծառայության՝ օրենքով նախատեսված խնդիրների կատարումը լիարժեք և պատշաճ ապահովելու նպատակով, անհրաժեշտ և նպատակահարմար է առաջիկա տարիների ընթացքում շահագործման հանձնել երեք նոր քրեակատարողական հիմնարկ և կապիտալ վերանորոգել ևս երեքը, որոնց կալանավորված և ազատությունից զրկելու հետ կապված պատժի դատապարտված անձանց պահելու հնարավորությունը՝ ընդհանուր լրակազմը, կկազմի մոտ 4500:

ԳԼՈՒԽ 6. ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քաղաքակրթության զարգացման բնականոն արդյունք է հանդիսանում այն, որ 21-րդ դարում՝ հաշվի առնելով բանտային ճարտարապետության պատմությունը, բանտային ռեժիմների կամ դրանց տեսակների առանձնահատկությունները, մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները, տարբեր հասարակությունների միջև եղած ընդհանրությունները, ստեղծվել են մի շարք միջազգային չափորոշիչներ, որոնք ուղղակիորեն կապված են բանտային կառույցների հետ:

Հիշատակված միջազգային փաստաթղթերում սահմանվում են մի շարք կանոններ, որոնց կիրարկումն անհրաժեշտ և պարտադիր է ցանկացած տեսակի կամ ռեժիմի բանտի կառույցի համար: Դրանցից է այն, որ այնտեղ, ուր բանտարկյալները գիշերում են խցերում կամ սենյակներում, նրանցից ամեն մեկը պետք է ունենա առանձին խուց կամ սենյակ: Եթե հատուկ պատճառներով, ինչպես օրինակ՝ բանտի ժամանակավոր ծանրաբեռնվածությունը, կենտրոնական բանտային վարչությունը ստիպված է հրաժարվել այդ կանոնի գործածությունից, միևնույն խցում կամ սենյակում երկու բանտարկյալների տեղավորելը ցանկալի չէ: Այնտեղ, ուր կան ընդհանուր բանտախցեր, նրանցում բնակեցվող բանտարկյալներին պետք է մանրակրկիտ կերպով ընտրել, որպեսզի համոզվածություն լինի, որ նրանք կարող են այդպիսի պայմաններում

միասին ապրել: Գիշերները պետք է իրականացնել հիմնարկի բնույթին համատեղելի մշտական հսկողություն:

Չնայած ցանկալի է, որ յուրաքանչյուր խցում տեղակայվի մեկ բանտարկյալ, փորձը ցույց է տալիս, որ կարելի է մեկ տեղանոց խցում տեղավորել երկու հոգու, եթե չափերը, օդափոխությունը, կահավորանքը, սանհանգույցը և մյուս պայմանները համապատասխանում են սահմանված նորմաներին: Այդ առումով այս կանոնը դիտարկվում է հնացած: Այդուհանդերձ, եթե ինչ-ինչ պատճառներով խցում պետք է բնակվի մեկ բանտարկյալից ավելի, բանտի վարչակազմը պետք է համոզված լինի, որ այդպիսով համասեռամուլական հետապնդումների կամ այլ չարաշահումների դեպքեր չեն առաջանա: Բանտի վարչակազմը պատասխանատվություն է ստանձնում նվազագույն ստանդարտների ապահովման համար՝ մեկ բանտարկյալի հաշվով բնակելի մակերեսը և առաստաղի բարձրությունը, լուսավորությունը և օդափոխությունը, անձնական և ընդհանուր հիգիենան խցի ներսում և ընդհանուր հարմարություններից օգտվելու հնարավորությունը, քնի պարագաները և կահավորանքը՝ ներառյալ բանտարկյալի իրերի առանձին պահպանությունը:

«Անհրաժեշտ» և «բավարար» պայմանները մեկնաբանելու համար պետք է առաջնորդվել Կոմիտեի հաշվետվություններով: Այսպես, որպես վատ օրինակ կարող ենք դիտարկել այն, որ այցելելով Ստոկհոլմյան բանտ՝ Կոմիտեի տեսուչները սահմանել են, որ դատապարտյալներին շերտավարագույրների միջոցով արևային լույսից զրկելն անթույլատրելի է, իսկ իսպանական և իտալական բանտեր այցելությունից հետո նրանք առաջարկել են տեղադրել համապատասխան ջեռուցման համակարգ, որպեսզի խցերում օդի ջերմաստիճանը 16°C-ից ցածր չլինի:

Մեկ այլ կանոնի համաձայն բոլոր կառույցները, որոնցից օգտվում են բանտարկյալները, հատկապես ննջարանները, պետք է համապատասխանեն սանիտարական բոլոր պահանջներին, ընդ որում, հարկավոր է պատշաճ ուշադրություն դարձնել կլիմայական պայմաններին, հատկապես այդ կառույցների ծավալներին, նվազագույն մակերեսի ապահովմանը, լուսավորությանը և օդափոխմանը:

Տեղական շատ բանտային նորմեր առավել որոշակի, քան նվազագույն ստանդարտ կանոնները, սահմանում են խցերի փաստացի չափերը, ջերմաստիճանը կամ օդափոխության պայմանները: Կանոնների անորոշությունն այստեղ մտածված է.

ցուրտ կլիմայական պայմաններում գտնվող խուցը պետք է տարբերվի արևադարձային գոտում գտնվող խցից, այս կանոնի գլխավոր իմաստն այն է, որ ննջարանները պետք է համապատասխանեն առողջության պահպանման համար անհրաժեշտ բոլոր պահանջներին, վարչակազմը պետք է հոգ տանի այն մասին, որպեսզի այդ պայմանները բանտարկյալների առողջությանը վնաս չպատճառեն:

Խցերում անընդհատ գտնվելը, հատկապես, եթե բանտարկյալները չեն աշխատում և կարճատև զբոսանքից բացի այլ պատրվակով չեն լքում խցերը, կարող է հանգեցնել մկանների ապաճման (ատրոֆիայի): Բանտի վարչակազմը և խցային տեղամասի աշխատողները պետք է մշակեն համապատասխան ծրագիր, որը բանտարկյալներին թույլ կտա օրվա մեծ մասն անցկացնել խցերից դուրս (միջանցքներում, մարզասրահներում, բակում և այլն), որպեսզի նրանց հնարավորություն ընձեռվի թոթափելու գերծանրաբեռնվածության հետևանքով առաջացած լարվածությունը: Վարչակազմը պետք է հետևի նաև բանտարկյալներին գոյություն ունեցող հրապարակներում տեղաբաշխելուն:

Ցանկալի է, որպեսզի երկու դատապարտյալ զբաղեցնեն 9 քմ-ից ոչ պակաս մակերեսով խուց, 12 քառ.մետրանոց խցերը բավարար են 3 անձի համար, իսկ 16-17 քառ.մետրանոց խցերը՝ 4 հոգու համար (չնայած վերջինի դեպքում պահելու պայմանները ճանաչվել են ոչ այնքան նպատակահարմար): Կոմիտեն չի արդարացնում բնակելի կացարանների կիրառումը, նույնիսկ եթե դրանք բավականին ընդարձակ են, որովհետև այս պարագայում խախտվում է նրանց առանձնանալու իրավունքը, աճում է ներբանտային բռնության ռիսկը, իսկ վարչակազմի համար դժվարանում է հսկողության իրականացումը: Այնուհանդերձ, Կոմիտեի տեսուչները 5 դատապարտյալի համար թույլատրելի են համարում 21 քառ.մետր տարածքը, 6 հոգու համար՝ 25 քառ.մետրը, 7 հոգու համար՝ 35 քառ.մետրը և 12 հոգու համար՝ 60 քառ.մետրը: Ելնելով առկա իրավիճակից՝ Կոմիտեն պատրաստ է ավելի ցածր ստանդարտների սահմանմանը: Այսպիսով, Սլովակիայի բանտերում կատարված ստուգումներից հետո իշխանություններին առաջարկվել է հնարավորինս պահպանել ազգային նորմերի նվազագույն չափերը:

Նման պահանջները, անկասկած, տատանվում են՝ կախված աշխարհագրական (կլիմայական) պայմաններից և, որ, հնարավոր է, նվազագույն չափով՝ հասարակական

պայմաններից: Գործնականում դա հանգեցնում է նրան, որ տարբեր պետություններ կարող են սահմանել բնակելի նվազագույն մակերեսի տարբեր նորմաներ, սակայն դրա հետ մեկտեղ տեղական ստանդարտները պետք է սահմանվեն կալանավորվածների և դատապարտյալների առողջության համընդհանուր պահանջների հիման վրա:

Մեկ այլ կանոնով էլ սահմանվում է, որ այն կառույցներում, ուր ապրում և աշխատում են բանտարկյալները, լուսամուտները պետք է ունենան բավարար չափեր, որպեսզի բանտարկյալները կարողանան կարդալ և աշխատել ցերեկային լույսով, և պետք է նախագծված լինեն այնպես, որ ապահովեն թարմ օդի մուտքը, անկախ այն բանից, գոյություն ունի օդափոխման արհեստական համակարգ, թե ոչ, արհեստական լուսավորությունը պետք է բավարար լինի, որպեսզի բանտարկյալները կարողանան կարդալ կամ աշխատել առանց տեսողության համար վտանգի: Պատուհաններ չունեցող բոլոր խցերի օգտագործումն անթույլատրելի է, դրանք պետք է բավարար արհեստական լուսավորություն ունենան՝ ի լրումն բնական լուսավորության աղբյուրի: Բանտարկյալների միջև հաղորդակցությունը բացառելու նպատակով պատուհանները ծածկող շերտավարագույրներ կիրառելը ևս անթույլատրելի է: Ինչ վերաբերվում է արհեստական լուսավորությանը, ապա էլեկտրական անջատիչը պետք է գտնվի յուրաքանչյուր խցի ներսում, քանի որ լույսն անջատելու և միացնելու հնարավորության բացակայությունը բանտարկյալների մոտ ուժեղացնում է անկարողության զգացումը:

Բանտային շենքերի կառուցման գործում առավել ուշադրության է արժանի սանիտարիան և մաքրությունը, ըստ որի՝ սանիտարական հարմարությունները պետք է բավականաչափ լինեն, որպեսզի ամեն բանտարկյալ մաքրության և բարեկեցության պայմաններում կարողանա իր բնական պահանջները բավարարել, երբ անհրաժեշտ է, բաղնիքի սարքավորումները և ցնցուղների քանակը պետք է բավականաչափ լինեն, որպեսզի յուրաքանչյուր բանտարկյալ կարողանա և պարտավոր լինի լողանալ կամ ցնցուղ ընդունել ամեն մի կլիմայի համապատասխան ջերմաստիճանում և այնքան հաճախ, որքան պահանջում են ընդհանուր հիգիենայի պայմանները՝ հաշվի առնելով տարվա եղանակը և աշխարհագրական շրջանը, այսինքն՝ չափավոր կլիմայում առնվազն շաբաթը մեկ անգամ, հիմնարկի բոլոր մասերը, որտեղից կանոնավորապես օգտվում են բանտարկյալները, պետք է միշտ պահվեն պատշաճորեն և ամենամաքուր ձևով: Բանտարկյալները պետք է հնարավորություն ունենան նաև ցանկացած

ժամանակ օգտվել զուգարանից: Ոչ մեկին չի կարելի դնել այնպիսի պայմաններում, երբ նան բնական պահանջները բավարարելու հնարավորությունը պայմանավորված է հսկիչից, դուռը բացելու կամ չբացելու, զուգարան ուղեկցելու կամ չուղեկցելու նրա ցանկությունից: Իսցերում կամ դրան կից տեղակայված զուգարանները պետք է առնվազն միջնապատով առանձնացված լինեն բնակելի շինությունից: Դա հատկապես կարևոր է այն բանտերում, որտեղ բանտարկյալները ճաշում են խցերում:

Հայաստանի Հանրապետության քրեակատարողական ծառայության համար ժամանակի հրամայական է դարձել քրեակատարողական ծառայությունում հստակ և արդյունավետ բարեփոխումների իրականացումը՝ այն է՝ ենթակառուցվածքային ոլորտի բարեփոխումները՝ կապիտալ ծախսերի գծով, որի իրականացման առումով անհրաժեշտ է շարունակել ձևավորված ֆինանսական միջոցների կենտրոնացված ծախսումների քաղաքականությունը: Այս քաղաքականությունը փորձով ապացուցել է իր առավել արդյունավետությունը:

Կապիտալ ծախսերի գծով աշխատանքների կատարման համար առկա են մի շարք գործոններ: Մասնավորապես. նախկինում կալանավորված կամ դատապարտված մեկ անձին հատկացվում էր երկու քառակուսի մետր մակերեսով բնակելի տարածք: Քրեակատարողական քաղաքականության ասպարեզում Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների և Կոմիտեի առաջարկությունների հիման վրա՝ մեկ անձի հաշվարկով բնակելի տարածության նվազագույն չափը, Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի 73-րդ և «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածների համաձայն, չի կարող պակաս լինել չորս քառակուսի մետրից: Այդ իսկ պատճառով, ինչպես նաև դատապարտյալների ընդհանուր թվի աճի հետ կապված, առանց այդ էլ առկա շենքային պայմանների ծավալների անբավարարության խնդիրը ծառայությունում էլ ավելի սրվել է: Միջազգային չափանիշներին համապատասխան, կալանավորված կամ դատապարտված անձանցով քրեակատարողական հիմնարկների գերծանրաբեռնումն անթույլատրելի է երկու առումով, նախ՝ վերջիններիս համար ոչ պատշաճ պայմաններ են ստեղծվում (համարվում է անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք), և, միևնույն ժամանակ, տարածքային ու վարչակազմի արդեն իսկ

չբավարարող (մեկ դատապարտյալի կամ կալանավորվածի հաշվարկով) անձնակազմի դեպքում առաջանում են նախապայմաններ քրեակատարողական հիմնարկների անկառավարելիության (անվտանգության ապահովման առումով) համար:

Խորհրդային տարիներից մինչ այժմ ուղղիչ հիմնարկներում դատապարտյալները բնակվում էին հիմնականում հանրակացարանային տեսակի բնակելի տարածքներում, մինչդեռ անհրաժեշտություն է առաջացել անցում կատարելու ամբողջությամբ խցային տեսակի բնակելի տարածքների: Խնդիրը կարևորվում է երկու տեսանկյունից: Նախ՝ այն բխում է միջազգային չափանիշներին համապատասխան՝ պատժի անհատականացման սկզբունքն (Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի 9-րդ հոդված) իրագործելու անհրաժեշտությունից, ապահովելով պայմաններ, որպեսզի քրեակատարողական հիմնարկներում դատապարտյալները փոքր խմբերով պահվեն առանձին խցերում կամ բնակելի կացարաններում՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի 68-րդ հոդվածի պահանջները, յուրաքանչյուր խցում ապահովելով առանձնացված սանհանգույց և այլ հարմարություններ: Բացի այդ, խնդիրն էլ ավելի է կարևորվում վարչակազմի կողմից անվտանգությունն ապահովելու առումով՝ հիմնարկի կառավարելիության անհրաժեշտ աստիճան ապահովելը ռիսկային է: Խնդիրն էլ ավելի է սրվում նաև այն հանգամանքը նկատի ունենալով, որ ներկայումս անվտանգության ապահովման առումով քրեակատարողական հիմնարկները գտնվում են ոչ բավարար պաշտպանվածության վիճակում: Մասնավորապես, անմխիթար վիճակում են գտնվում մի շարք քրեակատարողական հիմնարկների արգելապատերը, պահպանության ինժեներատեխնիկական համակարգերը, որոնց վերանորոգման և վերազինման համար անհրաժեշտ են համապատասխան ֆինանսական միջոցներ:

Քրեակատարողական համակարգում իրականացվել են մի շարք կապիտալ և վերակառուցման շինարարական աշխատանքներ. վերանորոգվել են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Վարդաշեն», «Վանաձոր», «Արթիկ», «Հրազդան» քրեակատարողական հիմնարկները, «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում կառուցվել է կալանավորված անձանց պահելու համար նախատեսված մասնաշենք: Չնայած այդ ամենի, ֆինանսական միջոցների անբավարարության հետևանքով մնացած քրեակատարողական հիմնարկները

կապիտալ վերանորոգման չեն ենթարկվել և դրանց շենքային պայմաններն անմխիթար վիճակում են (միջազգային փորձագետների կողմից գնահատվում է անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք): Կոմիտեի և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող դիտորդների խմբի կողմից ներկայացվել են բազմաթիվ առաջարկություններ, որոնց իրագործման համար անհրաժեշտ են խոշոր ֆինանսական ծախսեր: Ներկայումս տվյալ ոլորտում քրեակատարողական համակարգի գերակայությունն է՝ չվերանորոգված քրեակատարողական հիմնարկների վերանորոգումը կամ նոր հիմնարկների կառուցումը: Գրեթե բոլոր քրեակատարողական հիմնարկները հին կառույցներ են, համարվում են վթարային կամ անբավարար վիճակում, իսկ այն քրեակատարողական հիմնարկները, որոնք վերակառուցվել են («Կոշ»՝ 1958թ., «Աբովյան»՝ 1958թ., «Դատապարտյալների հիվանդանոց»՝ 1971թ., «Վանաձոր»՝ 2007թ., «Արթիկ»՝ 1966թ. և «Հրազդան»՝ 2008թ.) և շատ դեպքերում համապատասխանում են միջազգային չափորոշիչներին, այնուհանդերձ դրանք նույնպես կարիք ունեն բարեփոխումների:

Վերոհիշյալ նախադրյալների վերլուծությամբ ակնհայտ է դառնում այն հանգամանքը, որ առկա է դատապարտյալների որոշակի կատեգորիա, որոնց նկատմամբ նշանակված պատժի կատարումն իրենից բարդություններ է ներկայացնում ծառայության համար: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 15-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ոք չի կարող ենթարկվել կամ դատապարտվել մահապատժի: Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով առավելագույն պատիժը ցմահ ազատազրկումն է: Բուն բարդությունն այն է, որ, խորհրդային տարիներից ի վեր, այս պատժատեսակի կատարման համար չեն եղել համապատասխան ուղղիչ հիմնարկ կամ հիմնարկներ: Ներկայիս ուղղիչ հիմնարկների կազմն ու վիճակն էլ նման հնարավորություն չի տալիս: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նման կատեգորիայի դատապարտյալներին պահելու համար գոյություն ունի երկու մոտեցում՝ կենտրոնացված մեկ հիմնարկում պահելը կամ ապակենտրոնացված տարբեր հիմնարկներում պահելը: Երկու մոտեցումներն էլ ունեն իրենց առավելությունները և թերությունները. ապակենտրոնացված մոտեցումը գերադասելի է

այն առումով, որ դրանով անվտանգության ապահովման առումով իջեցվում է ռիսկայնության աստիճանը (մանավանդ արտակարգ իրավիճակների դեպքերում) և, իհարկե, դատապարտյալների շահերից ելնելով, վերջիններս հնարավորություն են ունենում լինել իրենց բնակության վայրերին մոտ և, բացի այդ, ելնելով իրենց դրսևորած դրական վարքագծից՝ պատիժը կրել մեկուսացվածության ավելի մեղմ տեսակի ուղղիչ հիմնարկում: Սակայն այս մոտեցումը պահանջում է ավելի պատրաստված անձնակազմ և, ամենակարևորը, անվտանգության ապահովման խիստ լավ միջոցներ բոլոր հիմնարկներում: Կատարված վերլուծությամբ, որպես խնդրի լուծման տարբերակ, դիտարկվել է առկա քրեակատարողական հիմնարկներից մի քանիսում նշված նպատակով համապատասխան առանձնացված տեղամասեր ստեղծելը (ապակենտրոնացված մոտեցում): Սակայն այս մոտեցումն արդարացված չէ, կան հիմնարկներ, որտեղ ֆիզիկական հնարավորություններ չկան, կան հիմնարկներ, որտեղ անջատ պահելու՝ օրենքով սահմանված սկզբունքները հնարավոր չի լինի պահպանել և կան հիմնարկներ, որտեղ շենքային պայմաններն այդ նպատակին չեն կարող ծառայել:

Հատկանշական է նաև քրեակատարողական հիմնարկների տարածքային տեղակայման խնդիրը: Միջազգային փորձի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանի Հանրապետության տարածքը (չափերը) նկատի ունենալով, տնտեսապես արդյունավետ է քրեակատարողական հիմնարկների կառուցումը և շահագործումը ունիվերսալության սկզբունքով: Այսպես, նախաքննական մարմինների գործունեությունը հնարավորինս դյուրին ու արդյունավետ դարձնելու նպատակով, հանրապետության տարբեր տարածաշրջաններում այսպես, թե այնպես պետք է տեղակայված լինեն կալանավորվածներին պահելու վայրեր: Նպատակահարմար է դրանք ունենալ հանրապետության հյուսիսային տարածաշրջանում՝ Վանաձորում, արևելքում՝ Արթիկում, հարավում՝ Գորիսում, ինչպես նաև Երևանում (կամ դրանց մերձակայքում): Սակայն կալանավորվածներին պահելու վայրերն առանձնացված լինելու դեպքում դրանց լրակազմը հիմնականում պետք է լինեն փոքր (բացի Երևան քաղաքը սպասարկող կալանավորվածներին պահելու վայրից): Իսկ նման դեպքում՝ փոքր լրակազմով քրեակատարողական հիմնարկի շահագործումը կլինի տնտեսապես ոչ արդյունավետ:

Բացի այդ, քրեակատարողական մեկ հիմնարկում ուղղիչ հիմնարկի մեկ տեսակի սահմանումը ևս անարդյունավետ է՝

1) տնտեսական առումով, քանի որ դրանց լրակազմը կլինի փոքր, իսկ դրա հետևանքով ավելանում են դատապարտյալների մեկ հիմնարկից այլ հիմնարկ փոխադրումների քանակը,

2) գործնական առումով, քանի որ դատապարտյալին իր բնակության վայրին հնարավորինս մոտ տեղակայվելու սկզբունքը դժվար իրագործելի կլինի, ինչպես նաև դատապարտյալների փոխադրումների ավելացմամբ կավելանա նաև անվտանգության ապահովման ռիսկայնությունը:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ դատապարտյալների փոխադրումները մեկ հիմնարկից մեկ այլ տեսակի հիմնարկ տեղի է ունենում մեկուսացվածության մոտ աստիճան ունեցող հիմնարկների միջև, նպատակահարմար է դրանց կառուցումը հիմնականում հետևյալ համադրմամբ.

1) ուղղիչ հիմնարկի փակ և կիսափակ տեսակներ, կալանավորվածներին պահելու վայր կամ առանց կալանավորվածներին պահելու վայրի,

2) ուղղիչ հիմնարկի կիսափակ և կիսաբաց տեսակներ, կալանավորվածներին պահելու վայր կամ առանց կալանավորվածներին պահելու վայրի:

Բաց տեսակի ուղղիչ հիմնարկի համադրումը կարելի է կատարել ուղղիչ հիմնարկի ցանկացած տեսակի հետ: Բուժական ուղղիչ հիմնարկը, որպես այդպիսին, նպատակահարմար է օրենսդրորեն վերացնել:

Էլ ավելի արդյունավետ կլինի, եթե հնարավոր լինի համադրել ուղղիչ հիմնարկի մի քանի տեսակներ:

Նախատեսվող բարեփոխումների շրջանակում ստեղծվող քրեակատարողական հիմնարկները միջազգային չափանիշներին համապատասխանելու և կառավարելիության բարձր աստիճան ունենալու համար պետք է բավարարեն կառուցվածքային որոշակի պահանջների, մասնավորապես՝

1) նոր քրեակատարողական հիմնարկների նախագծանախահաշվային և կառուցապատման աշխատանքների արդյունքում ակնկալվում է, որ քրեակատարողական հիմնարկը պետք է ունենա վարչական տարածքը սահմանազատող պարիսպ, որից ներս պետք է տեղակայված լինեն վարչական

մասնաշենքը և պահեստային տնտեսությունը, ինչպես նաև հիմնական արգելապատը: Հիմնական արգելապատից ներս պետք է տեղակայված լինեն հսկիչ անցագրային հանգույցը (հիմնական արգելապատին հարակից) և ազատությունից զրկված անձանց բնակեցման համար նախատեսված բնակելի մասնաշենքը (մասնաշենքերը),

2) անհրաժեշտ է, որ քրեակատարողական հիմնարկների բոլոր շինություններն ունենան քրեակատարողական հիմնարկին հարիր համապատասխան ջրամատակարարման և ջրահեռացման, ջեռուցման, օդափոխության, բնական և արհեստական լուսավորության, էլեկտրական սնուցման, կապի և այլ հնարավորություններ՝ հակահրդեհային, սանիտարահիգիենիկ կանոնների պահպանմամբ: Միաժամանակ, բոլոր նշված հանգույցները գործառությանը իմաստով պետք է լինեն միմյանցից տարանջատված, սակայն ծավալային իմաստով պետք է լինեն մեկ ամբողջություն: Հիմնարկները պետք է ապահովված լինեն անվտանգության ապահովման ժամանակակից տեխնոլոգիաներով՝ համապատասխան իր տեսակին,

3) հիմնական արգելապատը պետք է ունենա տվյալ ուղղիչ հիմնարկի տեսակին համապատասխանող և քրեակատարողական հիմնարկին բնորոշ անվտանգության ֆիզիկական հատկանիշներ, ինչպես նաև ապահովված լինի ժամանակակից ահազանգման և հեռահսկման համակարգերով,

4) վարչական շենքը պետք է ունենա առնվազն համապատասխան քանակի աշխատանքային սենյակներ, մեկ խորհրդակցությունների անցկացման սենյակ, ինչպես նաև համապատասխան հարմարություններ վարչակազմի սնվելու և հանգստի կազմակերպման համար,

5) վարչական մասնաշենքին կից պետք է լինի մեքենաների կայանատեղի, հաշվարկված առնվազն 60 մեքենաների համար,

6) անհրաժեշտ է, որ պահեստային տնտեսությունն ունենա մոտ տվյալ հիմնարկի լրակազմին համապատասխան մարդկանց սպասարկելու համար նախատեսվող սննդի, չփչացող նյութերի բաժիններ,

7) հսկիչ անցագրային հանգույցը կախված քրեակատարողական հիմնարկի տեսակից պետք է ներառի ներքոհիշյալ գործառույթների իրականացման հնարավորություններ՝

ա. արագ արձագանքման խմբի տեղակայում,

բ. զինանոց (բացի բաց տեսակի ուղղիչ հիմնարկից),

գ. անվտանգության ապահովման հեռակառավարման կենտրոն՝ հիմնարկի ամբողջ տարածքում տեղակայված տեսախցիկների, ահազանգման և կանխարգելման/պահպանման համակարգերի վերահսկողություն (բացի բաց տեսակի ուղղիչ հիմնարկից),

դ. հանձնուժների ընդունման հանգույց,

ե. կարճատև տեսակցությունների կազմակերպման հեռակենտրոն,

զ. մուտք գործող անձանց զննման սենյակ,

է. տեսակցողների և հանձնուժեր բերողների փաստաթղթերի ձևակերպում,

ը. մեքենաների ստուգման հանգույց՝ շյուզ (բացի բաց տեսակի ուղղիչ հիմնարկից),

թ. խուզարկության անցկացման սենյակներ,

ժ. անհրաժեշտ ծառայողական սենյակներ,

8) անհրաժեշտ է, որ ազատությունից զրկված անձանց բնակեցման համար նախատեսված բնակելի մասնաշենքն ունենա հետևյալ հանգույցները՝

ա. կացարանային,

բ. ստացիոնար բուժսպասարկման,

գ. խոհանոցային,

դ. կարանտինային,

ե. պատժախցային,

զ. կարճատև և երկարատև տեսակցությունների կազմակերպման:

Կացարանային հանգույցը անհրաժեշտ է նախատեսել այնպես, որ յուրաքանչյուր անձին բաժին հասնի առնվազն 5 քառակուսի մետր խցային կամ կացարանային տարածք: Կացարանային հանգույցում անհրաժեշտ է զբոսանքը կազմակերպել յուրաքանչյուր բլոկում՝ պահպանելով միջազգային՝ բաց «երկինք և բացօթյա» չափանիշը.

9) ազատազրկված անձը պետք է հնարավորություն ունենա առանց բնակելի հիմնական տեղանքից դուրս գալու ստանալ ամբուլատոր բուժում, սոցիալական, հոգեբանական և իրավական աջակցություն, կարճատև հեռատեսակցություն (փակ կամ կիսափակ ուղղիչ հիմնարկ) կամ տեսակցություն (կիսաբաց կամ բաց ուղղիչ

հիմնարկ), հեռախոսային զանգի հնարավորություն: Տարածքային պահանջները պետք է համապատասխանեն միջազգային չափանիշներին,

10) խցերը և կացարանները պետք է ունենան սանհանգույց և լոգանքի հարմարություններ:

Խցերում և կացարաններում կոմունիկացիաները պետք է նախագծվեն այնպես, որ նվազագույնի հասցվեն դրանք որպես թաքստոցներ օգտագործելու, ինչպես նաև դիտավորյալ վնասելու հնարավորությունը: Խցերի և կացարանների կոմունիկացիաները պետք է հնարավորություն ընձեռեն դրանց միջանցքից անջատման:

Խցերի և կացարանների պատերը, առաստաղը և հատակը պետք է ապահովվեն առավել բարձր պաշտպանությամբ՝ փորվածքների դեմ:

11) ստացիոնար բուժսպասարկման հանգույցի կազմակերպումը պետք է նախատեսված լինի տվյալ հիմնարկի լրակազմի 10%-ի հաշվարկով, յուրաքանչյուր խցում կամ կացարանում՝ 2-3 հոգու հաշվարկով: Յուրաքանչյուր անձին պետք է բաժին հասնի առնվազն 5 քառակուսի մետր տարածք: Բնակելի հիմնական տեղանքները պետք է ունենան զբոսանքի կազմակերպման հնարավորություն: Առանձնահատկությունն այն է, որ նման հնարավորությունը նպատակահարմար է ստեղծել ընդամենը մեկ հիմնարկում՝ աստիճանաբար հրաժարվելով ստացիոնարների լայն կիրառումից, միաժամանակ՝ շեշտը դնելով ամբուլատոր բուժման վրա:

12) պատժախցային հանգույցը պետք է կազմակերպվի տվյալ հիմնարկի 5%-ի հաշվարկով, (ընդ որում՝ մեծ մասը մենախուց): Յուրաքանչյուր անձին պետք է բաժին հասնի առնվազն 5 քառակուսի մետր խցային տարածք: Բլոկը պետք է ունենա զբոսանքի կազմակերպման հնարավորություն: Յուրաքանչյուր խուց պետք է ունենա սանհանգույց, սակայն լոգանքի հնարավորությունը պետք է ապահովվի բլոկի ընդհանուր լոգարանում:

13) կարանտինային բլոկը պետք է կազմակերպել տվյալ հիմնարկի 2,5%-ի հաշվարկով, երկու, չորս և վեց տեղանոց: Յուրաքանչյուր անձին պետք է բաժին հասնի առնվազն 5 քառակուսի մետր խցային տարածք: Բլոկը պետք է ունենա զբոսանքի կազմակերպման հնարավորություն,

14) խոհանոցային հանգույցը անհրաժեշտ է նախատեսել կալանավորվածներին պահելու վայրերի, փակ և կիսափակ ուղղիչ հիմնարկների համար սնունդը խուց մատակարարելու սկզբունքով, իսկ կիսաբաց և բաց ուղղիչ հիմնարկներում՝ ճաշարանային ձևով՝ իր ֆունկցիոնալ և պահեստային համապատասխան հարմարություններով:

15) երկարատև տեսակցությունների կազմակերպման հանգույցը պետք է ներառի սանիտարահիգիենիկ և խոհանոցային պայմաններ ունեցող սենյակներ՝ յուրաքանչյուրը առնվազն 12 քառ.մետր,

16) կարճատև տեսակցությունները, ելնելով դատապարտյալի դրսևորած վարքագծից, կազմակերպվում են՝

ա. փակ կամ կիսափակ ուղղիչ հիմնարկում՝ հեռահաղորդակցության կամ տեսանելի, բայց ոչ անմիջական շփման ձևով,

բ. կիսաբաց ուղղիչ հիմնարկում տեսանելի, բայց ոչ անմիջական շփման կամ անմիջական շփման ձևով,

գ. բաց ուղղիչ հիմնարկում՝ անմիջական շփման ձևով,

17) քրեակատարողական հիմնարկներում պետք է կազմակերպվեն սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների, այդ թվում՝ համապատասխան զբաղվածության հանգույցներ, ինչպես նաև բարելավվեն անչափահասների ուսումնառության, ժամանցի համար համապատասխան պայմանները,

18) կանանց համար նախատեսված ազատագրկման վայրերում անհրաժեշտ է կառուցել հղի կանանց և ծննդկանին խնամելու մասնաշենք՝ մանկատուն:

Այսպիսով, տնտեսական արդյունավետության և քրեակատարողական ծառայության առջև դրված խնդիրները լիարժեք կատարելու նպատակով, նպատակահարմար է առաջիկա 10 տարիների ընթացքում շահագործման հանձնել փակ, կիսափակ և կիսաբաց ուղղիչ հիմնարկի, ինչպես նաև կալանավորվածներին պահելու վայրի (բաշխվածությունը՝ ըստ տարածաշրջանների) պայմաններին բավարարող քրեակատարողական հիմնարկներ՝ ըստ անհրաժեշտ տեսակների հնարավոր համադրմամբ:

Նախատեսվում է քրեակատարողական ծառայության ենթակառուցվածքային բարեփոխումներն իրականացնել երեք պայմանական փուլով, որտեղ 1-ին փուլում կապիտալ շինարարական աշխատանքների շեշտադրումը կլինի ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի ենթակառուցվածքների ստեղծումը, 2-րդ փուլում՝ ՀՀ արդարադատության նախարարության «Գորիս» քրեակատարողական հիմնարկինը, իսկ 3-րդ փուլում՝ ՀՀ արդարադատության նախարարության «Երևան» (ստեղծվելիք հիմնարկի անվանումը՝ պայմանական) քրեակատարողական հիմնարկինը:

Քրեակատարողական ծառայության ենթակառուցվածքային բարեփոխումների ֆինանսական ապահովումը խոշորացված հաշվարկով կկազմի մոտ 20 000 000.0 հազ. ՀՀ դրամ, որն իր մեջ ներառում է շենք-շինությունների և դրանց նախագծա-նախահաշվային աշխատանքների և կոմունալ-կենցաղային համակարգի ձևավորման գումարը (սակայն ոչ ինժեներատեխնիկական միջոցներով հագեցման, անհրաժեշտ գույքի և հողատարածքների ձեռքբերման գումարը): Քրեակատարողական ծառայության ենթակառուցվածքային բարեփոխումներով ՀՀ արդարադատության նախարարության «Էրեբունի», «Վարդաշեն», «Նուբարաշեն», «Սևան», «Հրազդան», «Կոշ», «Երևան-կենտրոն» և «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկների գործունեության դադարեցման արդյունքում (բացատրությունը՝ ստորև) օտարման ենթակա կլինեն մոտ 70,3 հա հողատարածք և 137,8 հազ. քառ. մետր շենք-շինություն: Դրանց փոխարեն մոտ 37,0 հա հողատարածքի վրա կկառուցվեն և շահագործման կհանձնվեն քրեակատարողական հիմնարկների նոր ենթակառուցվածքներ՝ մոտ 57,0 հազ. քառ. մետր շենք-շինություն:

Հ/Հ	ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկի անվանումը	Զբաղեցրած հողատարածքը (հա)	Կառուցվելիք շենք-շինությունների մակերեսը (հազ. քմ)	Ֆինանսավորման անհրաժեշտ չափը (հազ. դրամ)
1	«Արմավիր»	մոտ 11,5	18,0	9 000 000.0
2	«Գորիս»	մոտ 10,6	4,0	2 000 000.0
3	«Երևան»	մոտ 14,9	20,0	9 000 000.0
	Ընդհանուր՝	մոտ 37,0	57,0	20 000 000.0

Հատկանշական է այն, որ 2013 թվականի պետական բյուջեով նախատեսված ֆինանսական հատկացումները ներառյալ մոտ 6 000 000.0 հազ. դրամ արդեն իսկ կատարվել են (կամ նախատեսված է կատարել) ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի շինարարության համար, որի արդյունքում տվյալ հիմնարկի շինարարական աշխատանքներն ավարտելու համար անհրաժեշտ է մոտ 3 000 000.0 հազ. դրամ:

Քրեակատարողական ծառայության ենթակառուցվածքային բարեփոխումների արդյունքում կգործեն թվով 5 քրեակատարողական հիմնարկներ, մասնավորապես. ՀՀ արդարադատության նախարարության «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկ՝ 245 լրակազմով, որից 110-ը՝ փակ, 30-ը՝ կիսափակ, 15-ը՝ կիսաբաց և 10-ը բաց ուղղիչ հիմնարկ, իսկ 80-ը՝ կալանավորվածներին պահելու վայր: Այս հիմնարկի հիմնական խնդիրը կլինի հանրապետության հյուսիսային տարածաշրջանների համար կալանավորված անձանց պահելու գործառույթի կատարումը: Քրեակատարողական տվյալ հիմնարկի շենք-շինությունները շահագործման են հանձնվել 1980-ական թվականներին: 2007 թվականին իրականացված շինարարական և վերականգնողական աշխատանքների արդյունքում հիմնարկի շենք-շինությունները հիմնականում բավարարում են նվազագույն պահանջներին: Սակայն միջազգային չափորոշիչներին լիարժեք համապատասխանեցնելու նպատակով դրանք նույնպես կարիք ունեն որոշակի բարեփոխումների: Այդ կապակցությամբ, ծրագրվում է տվյալ հիմնարկում իրականացնել որոշակի կապիտալ և ընթացիկ վերանորոգման աշխատանքներ՝ առկա ենթակառուցվածքի բազայի հիման վրա:

ՀՀ արդարադատության նախարարության «Արթիկ» քրեակատարողական հիմնարկ՝ մոտ 350 լրակազմով, որից 200-ը՝ կիսափակ, 70-ը կիսաբաց ուղղիչ հիմնարկ, մոտ 10-ը՝ բաց, իսկ մոտ 70-ը՝ կալանավորվածներին պահելու վայր: Այս հիմնարկի հիմնական խնդիրը կլինի հանրապետության արևելյան տարածաշրջանների համար կալանավորված անձանց պահելու գործառույթի կատարումը: Քրեակատարողական տվյալ հիմնարկի շենք-շինությունները շահագործման են հանձնվել 1930-ից 1970-ական թվականներին: 2005-ից 2007 թվականներին իրականացված շինարարական և վերականգնողական աշխատանքների արդյունքում հիմնարկի շենք-շինությունները հիմնականում բավարարում են նվազագույն

պահանջներին: Սակայն միջազգային չափորոշիչներին լիարժեք համապատասխանեցնելու նպատակով դրանք նույնպես կարիք ունեն որոշակի բարեփոխումների: Այդ կապակցությամբ, ծրագրվում է տվյալ հիմնարկում իրականացնել որոշակի կապիտալ և ընթացիկ վերանորոգման աշխատանքներ առկա ենթակառուցվածքի բազայի հիման վրա:

ՀՀ արդարադատության նախարարության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկ՝ մոտ 270 լրակազմով, որից 150-ը՝ փակ, կիսափակ և կիսաբաց ուղղիչ հիմնարկ, իսկ 100-ը՝ կալանավորվածներին պահելու վայր: Այս հիմնարկը կլինի ապագա ՀՀ արդարադատության նախարարության «Երևան» քրեակատարողական հիմնարկի առանձնացված տեղամաս, որի հիմնական խնդիրը կլինի կին և անչափահաս կալանավորված անձանց և դատապարտյալներին պահելու գործառույթների իրականացումը: Այստեղի շենք-շինությունները շահագործման են հանձնվել 1958-ից 1973 թվականներին: 2008 թվականին կապիտալ վերանորոգվել է կալանավորվածներին պահելու մասնաշենքը, կատարվել են մասնակի վերանորոգման այլ աշխատանքներ: Իրականացված շինարարավերականգնողական աշխատանքների արդյունքում հիմնարկի շենք-շինությունները հիմնականում բավարարում են նվազագույն պահանջներին: Սակայն միջազգային չափորոշիչներին լիարժեք համապատասխանեցնելու նպատակով դրանք նույնպես կարիք ունեն որոշակի բարեփոխումների: Այդ կապակցությամբ, ծրագրվում է տվյալ հիմնարկում իրականացնել կապիտալ և ընթացիկ վերանորոգման աշխատանքներ առկա ենթակառուցվածքի բազայի հիման վրա:

ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկ՝ 1470 լրակազմով, որից 600-ը՝ փակ ուղղիչ հիմնարկ, 800-ը՝ կիսափակ ուղղիչ հիմնարկ, 40-ը՝ կիսաբաց ուղղիչ հիմնարկ, իսկ 30-ը՝ բաց ուղղիչ հիմնարկ : Այս հիմնարկը հիմնականում իր վրա կվերցնի քրեակատարողական ծառայության փակ և կիսափակ ուղղիչ հիմնարկների գործառույթների ծանրաբեռնվածությունը, որի գործունեության համար կառուցվում է ամբողջությամբ նոր ենթակառուցվածք, որի նախագծա-նախահաշվային աշխատանքներն ավարտվել են, ձեռք է բերվել հողատարածք, որտեղ 2007 թվականին իրականացվել են տարածքի համահարթեցման և արտաքին պարագծով պարսպապատման աշխատանքներ, իսկ կապիտալ

շինարարական հիմնական աշխատանքները սկսվել են 2008 թվականին: Նախատեսվում է 2013 թվականի վերջում շահագործման հանձնել մոտ ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի 400 անձի համար նախատեսված բնակելի հատված, իսկ 2014 թվականի վերջում՝ ամբողջությամբ (որի կապակցությամբ էլ կդադարեցվի ՀՀ արդարադատության նախարարության «Հրազդան», ինչպես նաև «Կոշ» կամ «Սևան» քրեակատարողական հիմնարկի գործունեությունը):

ՀՀ արդարադատության նախարարության «Գորիս» քրեակատարողական հիմնարկ՝ 460 լրակազմով, որից մոտ 320-ը՝ փակ, կիսափակ և կիսաբաց ուղղիչ հիմնարկ, իսկ մոտ 80-ը՝ կալանավորվածներին պահելու վայր: Այս հիմնարկի հիմնական խնդիրը կլինի հանրապետության հարավային տարածաշրջանների համար կալանավորված անձանց պահելու, ինչպես նաև դեպի Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն տարանցման գործառույթների կատարումը (որն ինքնին ենթադրում է կարանտինային բաժանմունքի՝ համեմատական կարգով ավելի հզոր բաժանմունքի առկայություն): Այս քրեակատարողական հիմնարկի գործունեության համար անհրաժեշտ է կառուցել ամբողջությամբ նոր ենթակառուցվածք Գորիս քաղաքին հարակից տարածքում և դադարեցնել ներկայիս շինությունների շահագործումը, քանի որ հիմնարկի կառույցը 1870 թվականի շինություններ են (առկա է նաև ավելի վաղ շահագործման հանձնված շինություն) և այն, շինությունների անմխիթար վիճակից ելնելով, գնահատվում է վթարային: Հետևանքալից է այն, որ հիմնարկն իր մեջ կներառի նաև Մեղրու տեղամասը՝ ինչպես ներկայումս:

ՀՀ արդարադատության նախարարության «Երևան» քրեակատարողական հիմնարկ՝ 1820 լրակազմով (չհաշված ներկայիս ՀՀ արդարադատության նախարարության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի լրակազմը), որից 200-ը՝ փակ, 200-ը՝ կիսափակ, 800-ը՝ կիսաբաց ուղղիչ հիմնարկ, իսկ 600-ը՝ կալանավորվածներին պահելու վայր: Այս հիմնարկի հիմնական խնդիրը կլինի Երևան քաղաքի համար կալանավորված անձանց պահելու, քրեակատարողական ծառայության բուժական ուղղիչ հիմնարկում (այն որպես ուղղիչ հիմնարկի տեսակ օրենսդրական բարեփոխումների արդյունքում կդադարի գոյություն ունենալուց) անձանց պահելու գործառույթների կատարումը: Այս քրեակատարողական հիմնարկի

գործունեության համար Նուբարաշենի հողերի սողանքների պատճառով ներկայիս շահագործվող շինությունների փոխարեն անհրաժեշտ է կառուցել ամբողջությամբ նոր ենթակառուցվածք: ՀՀ արդարադատության նախարարության «Երևան» քրեակատարողական հիմնարկի նոր շինությունների շահագործումից հետո կդադարեցվի ՀՀ արդարադատության նախարարության «Էրեբունի», «Վարդաշեն», «Նուբարաշեն», «Սևան» կամ «Կոշ», «Երևան-կենտրոն» և «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկների գործունեությունը: ՀՀ արդարադատության նախարարության «Էրեբունի», «Վարդաշեն» և «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկները մյուս հիմնարկների համեմատ կառուցվել են ավելի ուշ՝ 20-րդ դարի երկրորդ կեսին, սակայն ունեն ընդերքային խնդիրներ: Հիմնարկները կառուցվել են սողանքային-աղային գոտում, որոնց հոսքերի հետևանքով թուլանում են բոլոր շինությունների հիմքերը: Ուշագրավ է նաև այն, որ նմանատիպ վթարային շենքերում միասին վերցված սահմանված է 1385 մարդ լրակազմ, դրանով իսկ հանդերձ մշտապես առկա է գերբնակեցվածության խնդիրը:

Ելնելով հիմնարկների ունիվերսալության սկզբունքից, բաց տեսակի ուղղիչ հիմնարկի գործառույթը կիրականացվի գրեթե բոլոր քրեակատարողական հիմնարկներում, որը դատապարտյալների ընդհանուր թվի չնչին տոկոսն է կազմում: Միաժամանակ, հատկանշական է նաև այն հանգամանքը, որ սույն հայեցակարգում ներառված չեն շենք-շինությունների ընթացիկ վերանորոգման աշխատանքների իրականացումը, որոնք անհրաժեշտ են դրանց շահագործման և պահպանման համար:

Այսպիսով, քրեակատարողական ծառայության ենթակառուցվածքային բարեփոխումների արդյունքում ներկայիս 4395 անձի լրակազմ ունեցող (Հավելված 1) գործող 13 քրեակատարողական (այդ թվում՝ ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկը, որը կշահագործվի 2014 թվականից) հիմնարկների փոխարեն կգործեն հինգ քրեակատարողական հիմնարկներ, որոնք բացի բաց ուղղիչ հիմնարկի լրակազմից կունենան ընդհանուր մոտ 4500 լրակազմ (Հավելված 2):

Համաձայն ՀՀ կառավարության 2001 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1015 որոշման ՀՀ արդարադատության նախարարության համակարգում ստեղծված քրեակատարողական ծառայությունը ներկայումս ունի 2423 հաստիքային միավոր:

Քրոնոմետրաժ ուսումնասիրությունների արդյունքը ցույց է տալիս, որ քրեակատարողական ներկայիս թվով 12 հիմնարկներում կալանավորվածներին և դատապարտյալներին լիարժեք պահելու համար անհրաժեշտ են ևս մոտ 500 հաստիքային միավոր: Իսկ սույն հայեցակարգով նախատեսված ծրագրի իրագործման արդյունքում թվով 6 քրեակատարողական հիմնարկների շահագործման համար անհրաժեշտ է լինելու մոտ 1700 հաստիքային միավոր (<< ԱՆ քրեակատարողական համապատասխան հիմնարկները. «Վանաձոր»՝ 240, «Արթիկ»՝ 250, «Արմավիր»՝ 340, «Գորիս»՝ 280, «Երևան»՝ 470, ինչպես նաև ծառայության կենտրոնական մարմինը՝ 120 հաստիքային միավոր): Դրա մոտավոր ֆինանսական գնահատականը 2013 թվականի (իհարկե ենթադրելի է, որ հետագա տարիներին աշխատավարձի ֆոնդն ունի աճողական միտում) դրությամբ հետևյալն է. հիմք ընդունելով այն, որ պետական բյուջեով նախատեսված աշխատավարձի ֆոնդը մոտ 4 750 000.0 հազ. դրամ է և քրեակատարողական ծառայությունն ունի 2423 հաստիքային միավոր, ապա մեկ հաստիքային միավորի խիստ միջին աշխատավարձի բյուջետային տարեկան ծախսը կազմում է մոտ 1 960.0 հազ (ամսեկան միջին աշխատավարձը՝ մոտ 163000) << դրամ, այսինքն՝ պետական բյուջեի տնտեսումը տարվա կտրվածքով կկազմի՝ 1960.0 հազ. x 723 հաստիքային միավոր = մոտ 1 417 080.0 հազ. դրամ:

ԳԼՈՒԽ 8. ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Վերջին տասնամյակում, մի շարք երկրներում հանցագործությունների թվաքանակի աճի միտումը, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկների գերբեռնվածությունն ու հասարակության անվտանգության երաշխիքների նվազումը հանգեցրել են արդարադատության համակարգի նկատմամբ դժգոհության և արդարադատության ավանդական պրակտիկայի նկատմամբ նվազող հետաքրքրության: Այս հանգամանքը կարևորում է այլընտրանքային և հակազդեցության նոր միջոցների կիրառման անհրաժեշտությունը:

Զարգացած և զարգացող մի շարք երկրներում (որպես այլընտրանք) քրեական վերականգնողական արդարադատությունը ներկայումս ապահովում է առավել ճկուն հակազդում հանցագործությանը: Այդ հակազդումը հավասար պայմաններ է ստեղծում երկու կողմերի արժանապատվությունը հարգելու, ինչպես նաև կողմերի միջև փոխըմբռնման ձևավորման համար: Ավելին, վերականգնողական արդարադատության միջոցով մեծանում է հասարակության դերը՝ որպես հանցագործությունների և այլ իրավախախտումների դեմ պայքարի կարևոր գործոն: Եվ վերջապես, քրեական վերականգնողական արդարադատությունը մատչելի միջոց է, որը հնարավոր է հեշտությամբ հարմարացնել տվյալ երկրի ներքին իրավական համակարգում: Այս առումով, քրեական վերականգնողական արդարադատության սկզբունքները որդեգրած պետությունների փորձի ուսումնասիրությունը փաստում է, որ այդ պետություններում վերականգնողական ծրագրերի իրականացման առաքելությունն իրականացնում են պրոբացիոն ծառայությունները³՝ ապահովելով պատժի նպատակների իրացումը՝ ազատազրկման փոխարեն, անձին պահելով ազատության և հասարակության մեջ: Այս ծառայությունների հիմքում դրվեց հասարակությունում (համայնքում) անձի վերասոցիալականացման գաղափարախոսությունը, ինչը մասնակիորեն նպաստեց նաև քրեակատարողական հիմնարկների բեռնաթափման խնդրի լուծմանը:

Այս առումով, արդարադատության ողջ ոլորտում իրականացվող բարեփոխումները պետք է ենթադրեն ազատազրկման ավանդական

³ UN Office on Drugs and Crime, Handbook on Restorative Justice Programmes

գաղափարախոսությունից անցում դեպի վերասոցիալականացման և վերականգնողական արդարադատության գաղափարախոսությանը, որի էությունը ազատագրկմանն այլընտրանքային միջոցներով պատժի նպատակներին հասնելն է, այդ թվում նաև՝ պրոբացիայի ծառայությունների գործունեության արդյունքում:

Պետք է փաստել, որ ՀՀ Նախագահի 2012թ. հունիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված միջոցառումների ցանկի քրեական արդարադատության և քրեական պատիժների համակարգի արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներում առաջնայնություններից են քրեակատարողական համակարգի բարեփոխումները, որտեղ ամրագրված է նաև ՀՀ արդարադատության նախարարության ենթակայությամբ գործող պրոբացիայի պետական ծառայության ստեղծման անհրաժեշտությունը: Թերևս փաստ է, որ քրեակատարողական համակարգը կազմում է իրավական համակարգի բաղկացուցիչ մասը, և դրա բարեփոխումները փոխկապված են իրավական ողջ համակարգում տեղի ունեցող օրենսդրական և գործնական բարեփոխումների հետ: Դրանով պայմանավորված, անհրաժեշտ է բարեփոխումներով խթանել փոփոխություններ երեք մակարդակներում.

1) ռազմավարական մակարդակով անհրաժեշտ է զգալիորեն ավելի մեծ օժանդակություն ապահովել այլընտրանքային պատժատեսակների ներդրմանը՝ հաշվի առնելով, որ արդարադատության համակարգում չափազանց շատ են կիրառվում ազատագրկման ձևով պատիժները (նույնը՝ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու առումով),

2) գործառնական մակարդակով անհրաժեշտ է խթանել աշխատանքի արդյունավետ մեթոդները, որոնք նկարագրված են համայնքային պատիժների և միջոցների վերաբերյալ եվրոպական կանոններում («European Rules on Community Sanctions and Measures») և Պրոբացիայի եվրոպական կանոններում («European Probation Rules», 2010 թ.),

3) կազմակերպական մակարդակով անհրաժեշտ է օգնել պրոբացիայի ծառայության ներդրմանը, վերջինիս համար ապահովելով իր գործառույթների արդյունավետ իրականացում՝ երկրի ողջ տարածքում:

Հատկանշական է պրոբացիա արտահայտության ընկալումը սույն հայեցակարգի տեսանկյունից: Թարգմանաբար «պրոբացիա» նշանակում է փորձաշրջան կամ փորձություն: Պրոբացիա հասկացության բնորոշման վերաբերյալ առկա են տարբեր մոտեցումներ. որոշ հեղինակներ, գտնում են, որ պրոբացիայի էությունը կայանում է նրանում, որ դատավճիռն ամբողջությամբ կամ մասնակիորեն կասեցվում է, փոխարենը հանցագործություն կատարած անձը ազատություն է ստանում՝ պրոբացիայի մարմնի վերահսկողության և հատուկ պայմանների առկայությամբ⁴: Մեկ այլ աղբյուրի համաձայն⁵ պրոբացիան հատուկ ընտրված հանցագործություն կատարած անձանց հետ աշխատանքներ տանելու մեթոդ է, որը բնութագրվում է պատժի պայմանական կասեցմամբ և իրավախախտի նկատմամբ վերահսկողության սահմանմամբ: Ըստ մեկ այլ բնորոշման՝ պրոբացիան լայն հասկացություն է, պատժի յուրահատուկ մեթոդ, որը հիմնվում է սոցիալ-մանկավարժական սկզբունքների վրա և բնութագրվում է հանցագործություն կատարած անձի նկատմամբ վերահսկողություն սահմանելու և օգնություն տրամադրելու համակցությամբ: Հաջորդ մոտեցման համաձայն՝ պրոբացիան ազատ համակարգ է, որը կիրառվում է այն իրավախախտների նկատմամբ, ովքեր առանձնանում են իրենց քրեական անհատականությամբ, կատարված հանցանքի բնույթով, գործող համակարգի նկատմամբ ունեցած վերաբերմունքով (Cartledge et al. 1981, in Harris 1995: 3-4):

Այդուհանդերձ, պրոբացիա արտահայտության իրավական բացատրությունը տրվել է Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեի կողմից անդամ-պետություններին ուղղված թիվ 2010/1 հանձնարարականով⁶ (այսուհետ նաև՝ ԵԽ հանձնարարական), համաձայն որի. «Պրոբացիան վերաբերում է օրենքով սահմանված և հանցագործություն կատարած անձի նկատմամբ նշանակված պատիժների ու միջոցների կատարմանը հասարակությունում: Այն ներառում է մի շարք

⁴ Handbook on Probation Services, UN Interregional Crime and Justice Research Institute

⁵ United Nations 1951: 4

⁶ Recommandation CM/Rec(2010)1 du Comité des Ministres aux Etats membres sur les règles du Conseil de l'Europe relatives à la probation

գործողություններ և միջամտություններ, որոնց թվում են վերահսկողությունը, ուղղորդումն ու աջակցությունը՝ ուղղված հանցագործություն կատարած անձի սոցիալական ներգրավմանը, ինչպես նաև հանրային անվտանգությանը նպաստելուն»՝ օրենքով սահմանված կարգով նշանակված ցանկացած մարմին, ով իրականացնում է վերը թվարկած գործառույթները, ձևավորում է պրոբացիայի ծառայությունը: Սա այն մոտեցումն ու գիտակցումն է, որից բխում է նաև սույն հայեցակարգով նախատեսված մոտեցումները:

ԳԼՈՒԽ 9. ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գոյություն չունի պրոբացիայի առանձին ծառայություն, սակայն վերջինիս բնորոշ մի շարք գործառույթներ իրականացնում են ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժինը (իր տարածքային բաժանմունքներով) և սոցիալական, հոգեբանական ու իրավական աշխատանքներ իրականացնող ստորաբաժանումները՝ քրեակատարողական հիմնարկներում:

1) Արդեն ավելի, քան 10 տարի է, ինչ Հայաստանի Հանրապետության ազատագրկման վայրերում գործում են սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների (այսուհետ նաև՝ ՍՀԻ աշխատանքներ) իրականացման ստորաբաժանումները: ՀՀ քրեակատարողական համակարգում այս ծառայությունների ձևավորումը սերտորեն կապված է համակարգում տեղի ունեցող արմատական փոփոխությունների և վերակազմավորումների հետ, որոնք սկսվել են դեռևս 1999 թվականից: Նշված բարեփոխումների արդյունքում նոր ծառայությունում որպես կառուցվածքային ստորաբաժանումներ ստեղծվեցին սոցիալ-հոգեբանական վերականգնման բաժինները: Չնայած այս միավորները ստեղծվեցին նախկին քաղաքական դաստիարակչական բաժինների աշխատակազմի հենքի վրա՝ շարունակելով նախկին որոշ գործառույթների իրականացումը, սակայն գաղափարական առումով դրանք նոր կազմավորումներ էին, քանի որ հիմնված էին այլ գիտատեսական հենքի վրա և ներառեցին տվյալ ոլորտի համար սկզբունքորեն նոր մասնագիտություններ: Այսպիսով, նորաստեղծ միավորները ստեղծման սկզբնական ժամանակահատվածում կոչվեցին սոցիալ-հոգեբանական վերականգնման, ապա՝

սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժիններ՝ ներառելով երեք առանձին ծառայություններ և մասնագիտական ուղղություններ՝ սոցիալական աշխատանք, հոգեբանական ծառայություն և իրավական աշխատանք: Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժինները կոչված են գործնականում կյանքի կոչել պատժի կատարման մարդասիրության ու անհատականացման սկզբունքները, ինչն էլ ընկած էր ողջ բարեփոխումների գաղափարական հիմքում:

Բաժնի առջև դրվեցին մի շարք գործառույթներ, որոնց իրականացումն ըստ էության պետք է ապահովեր դատապարտյալների ուղղումը, վերականգնումը և հասարակության մեջ նրանց հետագա վերաինտեգրման համար կայուն երաշխիքների ստեղծումը: Այս հիմնարար խնդիրն արտացոլվեց նաև ոլորտը կանոնակարգող ՀՀ արդարադատության նախարարի 2008թ. մայիսի 30-ի «Կալանավորվածների և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգը հաստատելու մասին» թիվ 44-Ն հրամանով, որտեղ ամրագրվեց գործառույթների այն շրջանակը, որոնք պետք է կատարվեն տվյալ ստորաբաժանումների կողմից: Մասնավորապես՝ սոցիալական աշխատանք, հոգեբանական աշխատանք, իրավական աշխատանք, արտաքին աշխարհի հետ կապի պահպանման աշխատանքներ և մի շարք մասնավոր այլ գործառույթներ, ինչպիսիք են՝ կրթական, մարզական, մշակութային, հոգևոր-կրոնական միջոցառումների կազմակերպումը, օգտակար զբաղվածության խթանումը (ստեղծագործական գործունեության խթանում), հասարակական և այլ կազմակերպությունների ներգրավումը համատեղ վերականգնողական ծրագրերում և այլն:

Ընդհանուր առմամբ, քրեակատարողական հիմնարկներում իրականացվող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների սակավ արդյունավետության վերլուծությունը հանգում է հիմնականում 3 խումբ խնդիրների.

ա. իրավական դաշտի կատարելագործման անհրաժեշտություն (ներառյալ՝ այլ պետական ու ոչ պետական կառույցների հետ համագործակցության ամրագրում, անձի ու վարքի գնահատման հստակ և ունիվերսալ չափորոշիչների ամրագրում, պայմանական վաղաժամկետ ազատման ներկայացման կարգի հստակեցում և այլն).

բ. անձնակազմի որակական ու քանակական անբավարարություն (ներառյալ՝ նեղ մասնագիտական կադրերի առկայություն, հստակ և նեղ մասնագիտական վերապատրաստումների, հաճախ նաև պատրաստումների անհրաժեշտություն, ինչպես նաև մեկ մասնագետին բաժին ընկնող դատապարտյալների թվաքանակի հավասարակշռում և այլն)։

գ. նյութատեխնիկական բազայի բարելավման անհրաժեշտություն (աշխատակազմի սենյակների անբավարար կահավորվածություն, համակարգչային թերհագեցվածություն, տնայցերի կամ սոցիալական աշխատանքի համար անհրաժեշտ այլ գործողությունների կատարման համար տրանսպորտային միջոցի և վառելիքի բացակայություն և այլն)։

2) Հետխորհրդային Հայաստանում քրեական արդարադատության համակարգի բարեփոխումների պահանջներից մեկը ազատազրկմանն այլընտրանքային պատիժների ենթահամակարգի զարգացումն է։ Հանցագործությունների կանխարգելման նպատակով եվրոպական պատժիչ համակարգը որդեգրեց այլընտրանքային պատիժների կատարման պրակտիկան, որին փորձում է հետևել նաև Հայաստանը։ Այդպիսի պատժատեսակները թույլ են տալիս պատժի ենթարկել անձին՝ նրան հնարավորին չափով քիչ «վնասելով»։

Բարեփոխումների հաջորդ, ավելի ուշ փուլում, դատապարտյալների նկատմամբ այլընտրանքային պատիժների կատարման և նրանց ուղղման ու վերականգնման աշխատանքները հասարակությունում իրականացնելու նպատակով, 2005 թվականին ստեղծվեցին ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման ստորաբաժանումները (այսուհետ նաև՝ ԱՊԿԲ)՝ ՀՀ վարչատարածքային բաժանմանը համապատասխան բաժանմունքներով։ Կազմավորված նորաստեղծ ստորաբաժանումների առջև խնդիր դրվեց ապահովել ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարումը, որոնք են. տուգանքը, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, հանրային աշխատանքները։ Այնուհետև, ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 26-ի «ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի տարածքային մարմինների

գործունեության կարգը հաստատելու մասին» թիվ 1561-Ն որոշմամբ բաժնի առջև դրվեցին նաև հետևյալ խնդիրները՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու հետևանքով փորձաշրջանի մեջ գտնվող դատապարտյալների, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատված անձանց, պատժի կրման հետաձգումով հղի կանանց կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձանց նկատմամբ վերահսկողությունը:

Հանրային աշխատանքներ պատժատեսակը կատարելիս, որպես կանոն, հիմնականում որոշ աշխատանքներ են տարվում աշխատատեղի հայտնաբերման և դատապարտյալների կողմից կատարվող աշխատանքի վերահսկման ուղղությամբ: Իսկ բուն իրավախախտման պատճառների բացահայտման և դրանց հաղթահարման ուղղությամբ աշխատանքները դեռևս անբավարար են: Սակայն, ինչպես ազատազրկման տեսքով պատժատեսակները, այնպես էլ այլընտրանքայինի դեպքում նույնպես, պատժին զուգահեռ հիմնական գործառույթներից մեկը հանդիսանում է դատապարտյալի ուղղումը: Իսկ դա նշանակում է, որ պատիժը կրելու ընթացքում դատապարտյալն, իր կարիքներին համապատասխան, պետք է ներգրավված լինի ուղղիչ և վերականգնողական ծրագրերի մեջ: Այս առումով, հանրային աշխատանքներ պատիժը սահմանվում է միայն դատապարտվող անձի համաձայնությամբ, ինչը թույլ է տալիս ակնկալել, որ նա ցանկություն ունի կատարել որոշակի ներանձնային և վարքային փոփոխություններ, և մասնագետներին ավելի հեշտ է նրա վարքում փոփոխություններ կատարել:

Հանրային աշխատանքների դատապարտումը, ինչպես նաև ազատազրկման մյուս այլընտրանքները հիմնված են այն մարդասիրական գաղափարի վրա, որ անհատին նորից հնարավորություն տրվի օրինապահ վարքին վերադառնալու համար: Հանրային աշխատանքներն ուղղակի միջոց պետք է լինեն, որպեսզի մասնագետները կապ պահպանեն դատապարտյալի հետ՝ նրան թողնելով իր ընտանիքում և համայնքում, վերահսկելով նրա սոցիալական կապերը, ուժեղացնելով նրան սոցիալապես, մեծացնելով նրա հարմարվածությունը: Սակայն, թերի են դեռևս նաև շահառուների կարիքների գնահատման, նրանց քրեական վարքագծի հաղթահարման նպատակով իրականացվող աշխատանքները:

Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկվելու դատապարտված անձինք նույնպես հանդիսանում են այլընտրանքային պատիժների իրականացման բաժինների շահառուները: Սակայն նման պատժի դատապարտված անձանց հետ ոչ մի ուղղիչ ու վերականգնողական աշխատանք չի տարվում: Նույնն է վիճակը նաև փորձաշրջանում գտնվողների և պայմանական վաղաժամկետ ազատվածների վարքի նկատմամբ վերահսկողության դեպքում:

Առկա են նաև մի շարք այլ խնդիրներ ևս. այլընտրանքային պատիժների կատարման ստորաբաժանումների ստեղծման օրվանից՝ սոցիալական աշխատողի և հոգեբանի հաստիքներ առհասարակ չեն նախատեսվել և այսօր էլ գոյություն չունեն: Այն դեպքում, երբ ՀՀ կառավարության՝ ոլորտը կանոնակարգող որոշմամբ, ամրագրված են որոշակի գործառույթներ, որոնք ուղղակիորեն պահանջում են համապատասխան մասնագիտական գիտելիքներ ու հմտություններ:

Մյուս խնդիրը, որ նկատվում է այս ստորաբաժանումներում, դա սոցիալական ծառայությունների հետ առկա համագործակցության ցածր աստիճանն է, հատկապես՝ զբաղվածության ծառայությունների հետ: Կան մի շարք իրավական, կազմակերպչական ու մասնագիտական ռեսուրսների բարելավման խնդիրներ, որոնց լուծումն այսօր ևս խիստ հրատապ է դարձել: Հաշվի առնելով այն, որ օրենսդրությամբ սահմանված պատժի անհատականացման սկզբունքը և պատժի նպատակներից մեկը՝ ուղղումը (առավելապես մասնագիտական միջամտությունների ձևով) ազատազրկման ընթացքում իրականացվում է քրեակատարողական ծառայության ՍՀԻ աշխատանքների բաժինների միջոցով, անհրաժեշտ է խիստ ուշադրություն դարձնել նաև մասնագետների գործառույթների և նրանց միջև համագործակցության եզրերի հստակ սահմանմանը, մասնագետների թվաքանակի և նրանց համար սահմանված գործառույթների հավասարակշռությանը, մասնագետների անընդհատյա և կանոնավոր պատրաստմանն ու վերապատրաստմանը:

Ինչ վերաբերում է այլընտրանքային պատիժների կատարման ստորաբաժանմանը, ապա պրոբացիայի ծառայությունը, համագործակցելով ազատազրկման ձևով պատիժ կատարող հիմնարկի մասնագիտական անձնակազմի

հետ, կիրականացնի դատապարտյալի վերականգնման և վերաինտեգրման երաշխիքների ստեղծման գործառույթները՝ միևնույն ժամանակ ստանձնելով ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված այլընտրանքային պատիժների կատարումը (մանրամասն՝ ստորև): Հաշվի առնելով այն, որ անձի դիրքորոշումներն ու արդարադատության նկատմամբ վերաբերմունքը ձևավորվում, և նրա վերաինտեգրման և վերասոցիալականացման հիմքերը դրվում են դեռևս նախաքննական շրջանում, ուստի անհրաժեշտ է նույնանուն բազմամասնագիտական միջամտություն ցուցաբերել ոչ միայն արդեն դատապարտված անձի, այլև մեղադրյալի նկատմամբ՝ հենց նախաքննական փուլից սկսած: Այս առումով, միջազգային պրակտիկան վկայում է, որ նշված գործառույթները լավագույնս իրականացվում են պրոբացիայի ծառայությունների կողմից:

ԳԼՈՒԽ 10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Հայաստանում պրոբացիայի ծառայության ստեղծումը և զարգացումը հիմնավորվում է առնվազն հետևյալ հանգամանքներով. պրոբացիայի ծառայության ստեղծումը բխում է քրեական արդարադատության ոլորտում եվրոպական երկրների որդեգրած քաղաքականությունից: Մասնավորապես, մարդու իրավունքների և ազատությունների առաջնայնությունը, մյուս կողմից դրանց պաշտպանությունը, այն հիմնարար արժեքներն են, որոնք երաշխավորվում են պետության կողմից, և պետական հարկադրանքի բոլոր միջոցները, այդ թվում՝ պատիժը, պիտի հիմնված լինեն այդ արժեքների վրա: Պետական հարկադրանքի և վերահսկողության գործառույթներ ունեցող ոլորտում առավել ցայտուն և նկատելի է, թե որքանով է Հայաստանը իրապես որդեգրել այս քաղաքականությունը, և որքանով է պատրաստ իրականացնել այն բարեփոխումները, ստեղծել այն օրենսդրական, իրավական դաշտը, որի վերաբերյալ ստանձնել է համապատասխան պարտավորություններ:

Պրոբացիայի ծառայության ստեղծումը հիմնավորվում է նաև Հայաստանի Հանրապետության դատական պրակտիկայով: Նախ, քրեական գործերի մինչդատական քննության փուլում մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվում է մեծամասամբ կալանավորումը, իսկ որպես որոշումների հիմնավորում,

մեծամասամբ է նշվում նաև մեղադրյալի կողմից քննությունից խուսափելը, կամ վերջինիս խոչընդոտելը, ապացուցողական տվյալների վրա ազդեցությունը, նոր իրավախախտումների կատարման հավանականությունը: Այս առումով, հատկանշական է նաև այն, որ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու դեպքում, որպես կանոն, ամբաստանյալը չի «խուսափում» ազատազրկում պատժատեսակից և ստացվում է այնպես, որ հանցանք կատարած անձանց նկատմամբ դատարանների կողմից նշանակվող պատժատեսակը գերազանցապես ազատազրկումն է (2010թ. ընթացքում դատարանների կողմից քննված քրեական գործերով 20 տոկոս դեպքերում է, որ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, ցածր է նաև ազատազրկման հետ չկապված պատիժների նշանակման տոկոսը. ուսումնասիրված 2446 ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժները՝ ազատազրկումը որպես պատժատեսակ կիրառվել է 1792 (73.3%) ամբաստանյալների նկատմամբ: Այս պատժատեսակով պատժաչափի միջին տևողությունը կազմել է 38.3 ամիս: Առավելագույն պատժաչափը կազմել է 15 տարի և կիրառվել է երկու ամբաստանյալների նկատմամբ: Դատարանի կողմից պատիժը պայմանականորեն չի կիրառվել 506 ամբաստանյալների նկատմամբ, ինչը կազմում է ամբաստանյալների ընդհանուր թվի 20.7%-ը⁷):

Նման պայմաններում պրոբացիայի ծառայության ներդրումը կնպաստի ինչպես դատարանների կողմից ազատությունից զրկելու հետ կապված պատիժների անհարկի նշանակման, այնպես էլ մեղադրյալների նկատմամբ կալանավորումը՝ որպես խափանման միջոց ընտրելու դեպքերի նվազմանը և կնվազեցնի նաև քրեակատարողական հիմնարկների գերբնակեցվածությունը: Հետևություն. Հայաստանի Հանրապետությունում պրոբացիայի ծառայության ներդրման անհրաժեշտությունը բխում է նաև քրեակատարողական հիմնարկների գերծանրաբեռնվածության խնդրից: Ներկայումս, ինչպես մինչդատական վարույթի ընթացքում կալանավորված, այնպես էլ ազատազրկման դատապարտված անձինք պահվում են քրեակատարողական գերծանրաբեռնված հիմնարկներում: Այս խնդիրը բազմիցս բարձրաձայնվել է նաև

⁷ Զեկույց, Պատժողական քաղաքականությունը ՀՀ-ում: «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ, Երևան, 2010

խոշտանգումների կանխարգելման Եվրոպական կոմիտեի կողմից ներկայացված գեկույցներում⁸:

Բացի այդ, պրոբացիայի ծառայությունն ապացուցել է իր տնտեսական արդյունավետությունը կիրառության բոլոր ձևերում և մոդելներում: Միանշանակ է, որ անձին ազատությունից զրկելով՝ պետությունը որոշակի նյութական միջոցներ է ծախսում նրան պահելու համար: Եթե հասարակության անվտանգությունը առավել վտանգված կարող է լինել, ապա հանրությունը նախընտրում է ազատագրվումը: Սակայն, եթե անձի վտանգավորության չափը չի ազդում համընդհանուր անվտանգության վրա, ապա ընդհանուր հասարակական շահը պահանջում է, որպեսզի նա կրի այլընտրանքային պատիժ: Անձը, կատարելով հանցագործություն, արդեն իսկ որոշակի վնաս է հասցնում պետությանը, իսկ ազատագրվմամբ ոչ միայն չի հատուցվում այդ վնասը, այլև, հասարակությունը շարունակում է հարկեր վճարել պետությանը, որպեսզի վերջինս պահի դատապարտյալին: Այսպիսով, եթե խնդիրը նաև տնտեսական հիմնավորման տեսանկյունից դիտարկվի, ապա Հայաստանը որպես սահմանափակ ռեսուրսներ, այդ թվում՝ բնակչություն ունեցող երկիր, չի կարող իր վրա վերցնել պատժի այնպիսի անարդյունավետ տեսակ, ինչպիսին ազատագրվումն է և կիրառել հանցագործությունների 90 տոկոսից ավելիի նկատմամբ: Այսպես.

2013թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պատիժը կրող դատապարտյալների ընդհանուր՝ 3527 թվաքանակը ըստ հանցագործության ծանրության աստիճանի կազմել է՝

- 1) մոտ 959 դատապարտյալ կատարել են առանձնապես ծանր հանցագործություն,
- 2) մոտ 1670 դատապարտյալ կատարել են ծանր հանցագործություն,
- 3) մոտ 852 դատապարտյալ կատարել են միջին ծանրության հանցագործություն,
- 4) մոտ 46 դատապարտյալ կատարել են ոչ մեծ ծանրության հանցագործություն:

Մոտավոր նույն տոկոսային համեմատականն է կալանավորված անձանց կապակցությամբ, որոնց ընդհանուր թվաքանակը 2013թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 1229 անձ:

2012թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պատիժ են կրում կյանքի և առողջության դեմ

⁸ Հայաստանի Հանրապետության վերաբերյալ նյութերը տես՝ <http://www.cpt.coe.int/en/states/arm.htm>

ուղղված (ՀՀ քրեական օրենսգրքի 104-ից 130-րդ հոդվածներ) հանցագործություն կատարած թվով 956 դատապարտյալ: Նույն օրվա դրությամբ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պատիժ են կրում առաջին անգամ ազատազրկման դատապարտված թվով 1724 դատապարտյալ:

Վերոգրյալ թվերի վերլուծությունը և միջազգային փորձի հետ համեմատականը թույլ է տալիս եզրակացնելու, որ առկա ազատությունից զրկված (կալանավորված և որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված) անձանցից ոչ մեծ և միջին ծանրության հանցագործություն կատարած կամ դրա կատարման մեջ մեղադրվող՝ թվով մոտ 1350 անձանց գրեթե երկու երրորդը՝ 900-ը պոտենցիալ հնարավորություն ունի լինելու պրոբացիայի ծառայության «վերահսկողության» ներքո: Իսկ այս թվին եթե ավելացվի պատժից պայմանական վաղաժամկետ ազատման և պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ինստիտուտների կատարելագործման արդյունքում ազատազրկման դատապարտման անձանց «հոսքը» դեպի պրոբացիայի ծառայություն, ապա կարելի է նշել, որ այդ անձանց ընդհանուր թվաքանակը կկազմի առնվազն մոտ 1300 անձ: Այս պարագայում, եթե համեմատենք մեկ անձի քրեակատարողական հիմնարկում պահվելու՝ 2012 թվականի պետական բյուջեով նախատեսված ծախսը (ընդհանուր տարեկան 1312.0 հազ. կամ օրական 3595 դրամ) պրոբացիայի ծառայության «վերահսկողության» ներքո գտնվող անձի վրա կատարվելիք ծախսի (տարեկան 150.0 հազ. կամ օրական 410 դրամ, որի բացվածքը կբերվի ստորև) հետ, ապա տարբերությունը կկազմի տարեկան՝ $1300 * (1312.0 \text{ հազ.} - 150.0 \text{ հազ.}) =$ մոտ 1510600.0 հազ. դրամ (իսկ քրեակատարողական հիմնարկում պահվող մեկ անձի միայն սննդի, հագուստի և կենցաղի կազմակերպման համար կատարվելիք՝ ոչ ընդհանուր ծախսը՝ տարեկան 401.5 հազ. կամ օրական մոտ 1100 դրամի դեպքում՝ $1300 * (401.5 \text{ հազ.} - 150.0 \text{ հազ.}) =$ մոտ 326950.0 հազ. դրամ):

Միևնույն ժամանակ, Հայաստանի Հանրապետությունում իրականացվող իրավական և դատական բարեփոխումների շրջանակներում նոր քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի ընդունումը ևս (ինչը պայմանավորում է նաև փոփոխություններ քրեակատարողական օրենսգրքում) հանգեցնում է պրոբացիայի ծառայության ստեղծման անհրաժեշտության: ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի մշակման հայեցակարգով նախանշված մի շարք փոփոխությունների

արդյունավետ իրականացումը մեծապես պայմանավորված է այս ծառայության ստեղծմամբ (մասնավորապես՝ նոր այլընտրանքային խափանման միջոցների, մեդիացիայի ինստիտուտի ներմուծումը):

ԳԼՈՒԽ 11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՐԴՐՎՈՂ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

1) Պրոբացիայի ծառայության իրավական ապահովումը և հիմնարար սկզբունքները. Ոլորտի կարգավորման տեսակետից, հիմնարար են Եվրոպայի Խորհրդի անդամ պետություններին ուղղված՝ Նախարարների կոմիտեի CM/Rec(2010)1 առաջարկությունը «Պրոբացիայի մասին Եվրոպայի խորհրդի կանոնների վերաբերյալ», որոնք ուղեցույց պետք է լինեն դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների ստեղծման ու պատշաճ գործունեության համար: Կանոնները կիրառվում են նաև այլ կազմակերպությունների նկատմամբ՝ տվյալ Կանոններով կարգավորվող խնդիրներն իրականացնելիս՝ ներառյալ այլ պետական կազմակերպությունների, հասարակական և առևտրային կազմակերպությունների նկատմամբ: Այդուհանդերձ, նշված Կանոնները չեն գործում և չեն կարող գործել ինքնուրույն և առանձին վերցրած, քանի որ դրանք խիստ կապված են անդամ պետություններին ուղղված մի շարք այլ հանձնարարականներով ու առաջարկություններով: Այս առումով, հիշատակված Կանոնները ևս ամրագրում են, որ դրանք անհրաժեշտ է մեկնաբանել «Այլընտրանքային պատիժների և միջոցների մասին եվրոպական կանոնների վերաբերյալ» թիվ R (92) 16 առաջարկության համատեքստում: Ավելին, նշված կանոնները լրացնում են «Պատիժների կամ միջոցների կատարման հետ առնչվող անձնակազմի վերաբերյալ» թիվ R (97) 12 առաջարկության, «Քրեական գործերով միջնորդության վերաբերյալ» թիվ R (99) 19 առաջարկության, «Այլընտրանքային պատիժների և միջոցների մասին եվրոպական կանոնների իրականացումը բարելավելու վերաբերյալ» Rec(2000)22 առաջարկության, «Պայմանական ազատման (պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման) վերաբերյալ» Rec(2003)22 առաջարկության, «Քրեակատարողական հիմնարկների վարչակազմի կողմից ցմահ ազատազրկվածների և երկարաժամկետ ազատազրկվածների պատժի կրումը կազմակերպելու վերաբերյալ» Rec(2003)23

առաջարկության, «Եվրոպական բանտային կանոնների վերաբերյալ» Rec(2006)2 առաջարկության, «Կալանավորման, դրա կիրառման պայմանների և չարաշահման դեմ երաշխիքների վերաբերյալ» Rec(2006)13 առաջարկության համապատասխան դրույթները և պետք է մեկնաբանվեն դրանց համատեքստում:

Թերևս, բացի եվրոպական միասնական օրենսդրությունից, կարևոր է նշել նաև Միավորված Ազգերի կազմակերպության «Ազատությունից զրկելու հետ չկապված պատժամիջոցների վերաբերյալ նվազագույն կանոնները» կամ, ինչպես ընդունված է կոչել՝ Տոկիոյի Կանոնները⁹: Այս փաստաթուղթը սահմանում է հիմնական և կարևորագույն սկզբունքները, որոնց միջոցով խթանվում է ազատությունից զրկելու հետ չկապված՝ այլընտրանքային պատժամիջոցների կիրառությունը: Դրա արժեքավոր դերը կայանում է նրանում, որ ազատությունից զրկելու հետ չկապված պատժամիջոցները մանրամասն ներկայացված են մինչդատական, դատական, վճռի հրապարակման փուլերի և դատապարտումից հետո եկող գործընթացի համար:

Ներկայումս գրեթե բոլոր եվրոպական երկրներում¹⁰ պրոբացիայի ծառայության վերաբերյալ օրենսդրական դրույթները նախատեսված են կամ քրեական օրենսդրությամբ (Բելգիա, Էստոնիա, Չեխիա, Ֆրանսիա, Հունգարիա, Լատվիա, Մոլդովա, Հոլանդիա, Նորվեգիա, Շվեդիա, Շվեյցարիա, Ռումինիա) կամ առանձին իրավական ակտերով (Իռլանդիա, Մեծ Բրիտանիա): Կան երկրներ, որտեղ քրեական արդարադատության համակարգում պրոբացիայի ծառայության դերը նախատեսված է քրեական դատավարության օրենսգրքով: Այս առումով, ի լրումն պրոբացիայի ծառայության լիազորությունների՝ ՀՀ քրեական, ՀՀ քրեական դատավարության և ՀՀ քրեակատարողական օրենսգրքերով (դրանց խնդիրների լույսի ներքո) պետք է նախատեսվեն համապատասխան փոփոխություններ և լրացումներ: Իսկ պրոբացիայի ծառայության խնդիրները, լիազորությունները, կառուցվածքը, պրոբացիայի ծառայության ծառայողի իրավական և սոցիալական ապահովման պետական երաշխիքները, ինչպես նաև նյութատեխնիկական ապահովման, ֆինանսավորման և

⁹ [United Nations Standard Minimum Rules for Non-custodial Measures \(The Tokyo Rules\), G.A. res. 45/110, annex, 45 U.N. GAOR Supp. \(No. 49A\) at 197, U.N. Doc. A/45/49 \(1990\).](#)

¹⁰ [European Probation Service Systems, a comparative overview by Anton van Kalmthout and Ioan Durnescu](#)

գործունեության վերահսկման կարգը համապարփակ պետք է կարգավորվի «Պրոբացիայի ծառայության մասին» ՀՀ օրենքով: Կլինի վերոհիշյալ օրենքից բխող նաև իրավական այլ ակտերի ընդունման անհրաժեշտություն ևս, մասնավորապես ՀՀ կառավարության որոշմամբ կկանոնակարգվեն համապատասխան հիմնարկի ստեղծումը և դրա հետ կապված հարաբերությունները, ծառայության գործունեությանը վերաբերող որոշակի խնդիրներ, ինչպես նաև այլ հարաբերություններ:

Ինչպես ցանկացած մարմնի, այնպես էլ պրոբացիայի ծառայության հիմնադրման և արդյունավետ գործունեության համար, առավել ևս, երբ այդ ծառայությունը պետք է իրականացնի բազմամասնագիտական լայնածավալ աշխատանքներ, խիստ անհրաժեշտ է օրենսդրորեն սահմանել այն հիմնարար սկզբունքները, որոնք ապահովելու և ամրագրելու են տվյալ ծառայության գործունեության ու գործողությունների շրջանակը:

Ինչպես պրոբացիայի ծառայությանը վերաբերող այլ հստակեցումներ, այնպես էլ ծառայությունների գործունեության հիմնարար սկզբունքներն ամրագրված են ԵԽ հանձնարարականով, որոնք գործունեության ուղենիշ պետք է լինեն նաև Հայաստանում ստեղծվելիք պրոբացիայի ծառայության համար: Այդ սկզբունքներն են.

ա. պրոբացիայի ծառայության նպատակներից պետք է լինի կրկնահանգագործության կրճատումը՝ հանցագործություն կատարած անձի հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու միջոցով նրանց վերահսկելու (ներառյալ՝ հարկ եղած դեպքում հսկելու), ուղղորդելու ու աջակցելու և նրանց բարեհաջող սոցիալական ներգրավումը խթանելու նպատակով,

բ. պրոբացիայի ծառայությունը պետք է հարգի հանցագործություն կատարած անձանց իրավունքները: Դրա բոլոր միջամտությունների դեպքում պետք է պատշաճ կերպով հաշվի առնվեն հանցագործություն կատարած անձանց արժանապատվությունը, առողջությունը, անվտանգությունն ու բարեկեցությունը,

գ. բոլոր դեպքերում, երբ պրոբացիայի ծառայությունը զբաղվում է հանցագործությունից տուժած անձանց վերաբերող հարցերով, պետք է հարգվեն նրանց իրավունքներն ու կարիքները,

դ. պրոբացիայի ծառայությունը պետք է ամբողջությամբ հաշվի առնի հանցագործություն կատարած անձանց անհատական առանձնահատկությունները,

պայմանները և կարիքները՝ ապահովելու համար, որպեսզի յուրաքանչյուր դեպքում ցուցաբերվի արդարացի և համարժեք վերաբերմունք: Միջամտությունները պետք է իրականացվեն՝ բացառելով խտրականությունը որևէ հիմքով, ինչպես օրինակ՝ սեռը, ռասան, մաշկի գույնը, լեզուն, կրոնը, հաշմանդամությունը, սեռական կողմնորոշումը, քաղաքական կամ այլ հայացքները, ազգային կամ սոցիալական ծագումը, էթնիկ փոքրամասնությանը պատկանելությունը, գույքային դրությունը, ծնունդը կամ այլ կարգավիճակը,

ե. որևէ պատժի կամ միջոցի կատարման ժամանակ պրոբացիայի ծառայությունը հանցագործություն կատարած անձին չպետք է ծանրաբեռնի կամ սահմանափակի նրա իրավունքներն ավելի, քան նախատեսված է դատական մարմնի որոշմամբ և պահանջվում է յուրաքանչյուր առանձին դեպքում՝ կախված հանցագործության ծանրությունից կամ կրկնահանցագործության՝ պատշաճ կերպով գնահատված ռիսկից,

զ. պրոբացիայի ծառայությունը, որքանով հնարավոր է, պետք է ձգտի հանցագործություն կատարած անձանց տեղեկացված համաձայնությունը ստանալուն և համագործակցությանը՝ նրանց առնչությամբ կատարվող միջամտության կապակցությամբ,

է. մեղքի վերջնական հաստատմանը նախորդող ցանկացած միջամտության համար պետք է պահանջվի հանցագործություն կատարած անձանց տեղեկացված համաձայնությունը, և այդպիսի միջամտությունը չպետք է հակասի անմեղության կանխավարկածին,

ը. պրոբացիայի ծառայությունը, դրա խնդիրներն ու պարտականությունները, ինչպես նաև պետական և այլ մարմինների հետ հարաբերությունները պետք է սահմանվեն ազգային օրենսդրությամբ,

թ. պետական մարմինները պետք է շարունակեն պատասխանատվություն կրել պրոբացիայի համար նույնիսկ այն դեպքում, երբ ծառայությունները մատուցվում են այլ մարմինների կամ կամավորների կողմից,

ժ. պրոբացիայի ծառայության համար պետք է ապահովվի համապատասխան հեղինակություն, ճանաչում և ռեսուրսներ,

ժա. որոշում կայացնող մարմինները, հարկ եղած դեպքում, պետք է դիմեն պրոբացիայի ծառայությանը, որպեսզի վերջինս կրկնահանցագործությունը

նվազեցնելու և ազատությունից զրկելու այլընտրանքների կիրառումը խթանելու նպատակով տրամադրի մասնագիտական խորհրդատվություն և իրականացնի վերահսկողություն,

ժբ. պրոբացիայի ծառայությունը պետք է համագործակցի այլ պետական կամ մասնավոր կազմակերպությունների և տեղական մարմինների հետ՝ հանցագործություն կատարած անձանց սոցիալական ներգրավումը խթանելու նպատակով: Հանցագործություն կատարած անձանց համալիր կարիքները բավարարելու և հանրային անվտանգությունն ամրապնդելու համար անհրաժեշտ է կատարել համակարգված ու լրացուցիչ միջգերատեսչական և միջոլորտային համագործակցված աշխատանք,

ժգ. պրոբացիայի ծառայության կողմից ձեռնարկվող բոլոր գործողություններն ու միջամտությունները պետք է համապատասխանեն ազգային և միջազգային, էթիկական ու մասնագիտական չափանիշներին,

ժդ. անհրաժեշտ է ունենալ պրոբացիոն բնույթի գործունեության հետ կապված բողոքարկման մատչելի, անկողմնակալ և արդյունավետ ընթացակարգեր,

ժե. պրոբացիայի ծառայությունը պետք է ենթակա լինի պարբերական պետական ստուգումների և (կամ) անկախ դիտանցման,

ժզ. իրավասու մարմինները պետք է բարձրացնեն պրոբացիոն բնույթի աշխատանքների արդյունավետությունը՝ խթանելով հետազոտական աշխատանքները, որոնք պետք է օգտագործվեն ուղղորդելու պրոբացիոն քաղաքականությունը և պրակտիկան,

ժէ. իրավասու մարմինները և պրոբացիոն ծառայությունը պետք է տեղեկացնեն լրատվամիջոցներին և լայն հասարակությանը դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների աշխատանքի մասին՝ հասարակությունում նրանց դերի և արժեքի մասին առավել լավ պատկերացման ձևավորումը խթանելու նպատակով:¹¹»:

¹¹ [Recommandation CM/Rec\(2010\)1 du Comité des Ministres aux Etats membres sur les règles du Conseil de l'Europe relatives à la probation](#)

2) Պրոբացիայի ծառայության առաքելությունը. Հիմք ընդունելով ԵԽ Նախարարների Խորհրդի Պրոբացիայի եվրոպական կանոնների վերաբերյալ հանձնարարականը («European Probation Rules», 2010 թ.)՝ Հայաստանի Հանրապետության պրոբացիայի ծառայության առաքելությունն է հանրային անվտանգության և քրեական արդար դատավարության ապահովումը:

3) Պրոբացիայի ծառայության նպատակները և խնդիրները.

Պրոբացիայի ծառայության նպատակն է նպաստել հանրային անվտանգության ապահովմանը, քրեական արդարադատության անաչառ իրագործմանն ու հանցագործություն կատարած անձանց սոցիալական ներգրավվածությանը՝ հանցագործությունների կատարումը կանխելու և նվազեցնելու միջոցով:

Պրոբացիայի ծառայությունը՝

ա. ներկայացնում է մասնագիտական ուսումնասիրությունների իրականացմամբ խորհրդատվական զեկույցներ համապատասխան մարմիններին՝ խափանման միջոց ընտրելու, պատիժ նշանակելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման գործընթացներում առավել տեղեկացված և հիմնավոր որոշումների կայացմանը նպաստելու նպատակով.

բ. վարչական վերահսկողությունը և տնային կալանքը որպես խափանման միջոցներ կիրառելու դեպքերում ապահովում է դրանց իրականացումը,

գ. կատարում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված, դատարանի նշանակած սույն կետով նախատեսված պատիժները՝ տուգանքը, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը՝ որպես հիմնական պատիժ նշանակվելու դեպքում, հանրային աշխատանքները,

դ. իրականացնում է անձանց վարքագծի նկատմամբ վերահսկողություն՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատիժը կրելը հետաձգելու կամ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելով՝ քրեական պատասխանատվությունից ազատելու դեպքերում,

ե. իրականացնում է մասնավոր մեղադրանքի գործերով տուժողի և մեղադրյալի, ինչպես նաև պատժից պայմանական վաղաժամկետ ազատվելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու դեպքերում տուժողի և դատապարտյալի հաշտեցումը:

4) Պրոբացիայի ծառայության ընդհանուր նկարագիրը. Քրեական արդարադատության համակարգում պատժի ինստիտուտն այն կարևոր բաղադրիչներից է, որն ապահովում է արդարադատության ամբողջականությունը, նաև տեսանելի և արդյունավետ դարձնում արդարադատության իրականացումը: Այս համակարգերի արդի միտումների միջազգային փորձը ցույց է տալիս, որ պատժի և արդարադատության իրականացումը գնում է դեպի այլընտրանքային պատժամիջոցների կիրառման ընդլայնում և վերականգնողական արդարադատության համակարգ: Ընդ որում, զուտ իրավական գիտելիքների կիրառումից անցում է կատարվում բազմամասնագիտական թիմի կիրառությանը՝ շեշտ դնելով սոցիալական աշխատանք, սոցիալական մանկավարժություն և հոգեբանություն մասնագիտություններին: Առաջնորդվելով այս մոտեցմամբ, արդի առաջավոր երկրները նախորդ դարի կեսերից առավել ինտենսիվ ձևով վերանայեցին պատժի ողջ էությունը և դրա կիրառման արդյունավետությունը:

Հատկապես Մեծ Բրիտանիան առաջատարն էր այս ոլորտում, որը և համաշխարհային պրակտիկային առաջարկեց նոր՝ պրոբացիայի ծառայությունը: Պրոբացիան մեծ տարածում գտավ մի շարք եվրոպական երկրների իրավական համակարգերում: Վերջին տասնամյակի ընթացքում պրոբացիայի պետական ծառայություն է ստեղծվել նաև նախկին ԽՍՀՄ անդամ պետություններում՝ Լատվիայում, Էստոնիայում, Մոլդովայում, Վրաստանում: Գոյություն ունեն այնպիսի երկրներ, որտեղ պրոբացիոն բնույթի աշխատանքները սկզբում թույլատրվել են միայն անչափահասների դեպքում: Մասնավորապես, Հունգարիայում և Լեհաստանում պրոբացիայի ծառայությունների խնդիրն էր դատարանների համար անչափահասների վերաբերյալ տեղեկատվության հավաքումը և ծնողական հսկողության ներքո գտնվող անչափահասներին լրացուցիչ խնամքի տրամադրումը: Մեծ թվով երկրներում (ինչպես օրինակ Ավստրիան, Չեխիան, Լատվիան, Էստոնիան, Ֆինլանդիան և այլն)

պրոբացիայի ծառայությունների գործառույթներն ընդգրկում են ինչպես չափահասներին, այնպես էլ անչափահասներին: Որոշ երկրներում էլ պրոբացիայի ծառայություններն իրականացնում են հանցագործությունների կանխարգելման ծրագրեր անչափահասների շրջանում (Բուլղարիայում դա օրենքով սահմանված հստակ պարտավորություն է, Լատվիայում և Լիտվայում դա իրականացվում է պրոբացիայի ծառայության նախաձեռնությամբ): Եվ, չնայած մի շարք նմանությունների ու տարբերությունների, այնուամենայնիվ, Եվրոպական երկրների համար գլխադասային իրավական կարգավորում է տրված Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեի կողմից ԵԽ անդամ-պետություններին ուղղված թիվ 2010/1 հանձնարարականով:¹²

Աշխարհում գոյություն ունեցող յուրաքանչյուր երկիր առանձնանում է իր սոցիալ-մշակութային արժեքներով և ավանդույթներով, ինչը բնականաբար ազդեցություն է ունենում տվյալ երկրի իրավական համակարգի և, մասնավորապես, պրոբացիոն բնույթի ծրագրերի իրագործման և կազմակերպման կոնկրետ համակարգի վրա: Որոշ երկրներում գործում են պրոբացիայի այնպիսի ծառայություններ, որոնք ներառում են հանրային ծառայություններ (աշխատանքներ), տուժող ու հանցագործություն կատարած անձ հաշտեցում և այլն: Երկրների մեծամասնությունը պատկանում է այս երկրների շարքին, սակայն համակարգի ներսում տարբերություններ և առանձնահատկություններ միշտ էլ լինում են: Հաշվի առնելով առկա նմանություններն ու տարբերությունները, այնուամենայնիվ, միջազգային փորձի ուսումնասիրությունից բխում է, որ պրոբացիայի ծառայության ենթակայությունը հանգում է հիմնականում հետևյալ մի քանի ձևերի.

ա. դատական իշխանության մեջ. այդպիսի պետություններ են օրինակ՝ Էստոնիան, Չեխիան: Դրանցում ընդհանուր իրավասության յուրաքանչյուր դատարանին կից գործում է պրոբացիայի ծառայության առանձին ստորաբաժանում, իսկ պրոբացիայի ծառայողները հանդիսանում են դատական ծառայողներ:

¹²Recommandation CM/Rec(2010)1 du Comité des Ministres aux Etats membres sur les règles du Conseil de l'Europe relatives à la probation

բ. Գործադիր իշխանության մեջ. եվրոպական պետությունների մեծ մասն ընտրել է այս իրավակարգավորումը՝ Անգլիան, Շվեդիան, Դանիան, Ֆինլանդիան, Հունգարիան, Վրաստանը, Մոլդովան, Լատվիան և ուրիշներ: Այս դեպքում պրոբացիայի ծառայությունը կարող է հանդես գալ որպես արդարադատության համակարգի առանձին վարչություն, առանձնացված ստորաբաժանում կամ այլ կից ծառայություն, ինչպես օրինակ՝ Հունգարիայում և Բելգիայում է:

Արդարադատության համակարգի ներսում՝ բանտային համակարգի հետ միացված պրոբացիայի ծառայությունները նույնպես ունեն իրենց առանձնահատկությունները: Մասնավորապես, Ֆրանսիայում պրոբացիայի ծառայությունը աչքի է ընկնում տարաբնույթ գործառույթներով: Սակայն, խնդիրը կայանում է նրանում, որ այս խումբ պետություններում մեծամասամբ գործառույթները ոչ միայն սահմանափակ են, այլ նաև բացակայում է մինչդատական փուլում և հետազատման փուլում (Pre Trial Phase, Post Release Phase) վերահսկողություն սահմանելը, անձին տարաբնույթ օժանդակություն տրամադրելը (թմրամոլության, գինեմոլության դեմ պայքարում) և այլն: Հետևաբար, այս դեպքում պրոբացիայի ծառայությունը նոր հանցագործությունները կանխելու և դատապարտյալին վերաինտեգրելու հարցում ավելի քիչ արդյունավետ է (արդարադատության նախարարության կառուցվածքում են պլանավորում ստեղծել պրոբացիայի ծառայություն նաև Ռուսաստանն ու Ուկրաինան):

գ. Լիովին անկախ. այդպիսի պետություններ են հանդիսանում Ավստրիան և Հոլանդիան: Մասնավոր ոլորտի կողմից պրոբացիայի իրագործումը դեռևս այդքան էլ տարածված չէ, սակայն դրա առանձնահատկություններն ու առավելությունները արդեն իսկ նկատելի են: Նախ՝ պրոբացիայի ծառայության իրականացումը մասնավոր կազմակերպությունների կողմից ապահովում է դրա գործառույթների իրագործումը պրոբացիայի ողջ ընթացքում (փորձաշրջանից առաջ, դրա ընթացքում) և ազատության մեջ լինելու ընթացքում: Պրոբացիայի ծառայությունները, որոնք ստեղծված են և գործում են դատական կամ գործադիր իշխանության համակարգում, անձի՝ ազատության մեջ գտնվելու ժամանակ այդքան էլ ակտիվ չեն: Այսպես, երկրներում, որտեղ պրոբացիայի ծառայությունը բանտային համակարգին կից կամ որպես ինքնուրույն մարմին է հանդիսանում, բացակայում են փորձաշրջանից հետո ազատության մեջ գտնվող անձի նկատմամբ վերահսկողության իրագործումը (Post

Release Phase), նրա վերաբերյալ հաշվետվությունների կազմումը, ուսուցողական և կրթական դասընթացների կազմակերպումը, օժանդակության ցուցաբերումը այն անձանց, ում գործը պայմանական դադարեցվել է և այլն: Ի տարբերություն այս ամենի, մասնավոր կազմակերպությունները պրոբացիայի ծառայություններ իրականացնելիս ակտիվ են բոլոր փուլերում: Դրանք իրականացնում են ոչ միայն վերը ներկայացված գործառույթները, այլ նաև հանրային աշխատանքներ կատարելիս միջնորդի դերում են հանդես գալիս, աջակցում են կացարանի հարցում և այլն: Այսուհանդերձ, այս երկրներում ևս, այդ կազմակերպությունները վերահսկվում և ֆինանսավորվում են արդարադատության նախարարության կողմից:

- դ. Խառը կամ ինքնատիպ մոտեցումներ. մասնավորապես.
 - դատախազության կառույցում, ինչպիսին գործում է միայն Լյուքսեմբուրգում,
 - ներքին գործերի նախարարության համակարգում գործող պրոբացիայի և բանտային համակարգի կազմում, ինչպիսին է Իտալիան¹³,
 - տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ սոցիալական ծառայությունների միջոցով, ինչպիսին Շոտլանդիայում է,
 - ոստիկանության և արդարադատության միասնական նախարարության կազմում, ինչպիսին գործում է Նորվեգիայում,
 - իրավաբանական օգնության, պրոբացիայի և կորեկցիայի նախարարության կազմում, ինչպիսին գործում է Վրաստանում:

Ինչպիսին պետք է լինի պրոբացիայի պետական ծառայության ենթակայությունը Հայաստանի Հանրապետությունում, որ հանրապետական գործադիր մարմնի համակարգում պետք է ընդգրկված լինի այն, եթե ՀՀ արդարադատության նախարարության, ապա արդյոք այն պետք է գործի քրեակատարողական ծառայության ներսում, թե պետք է կազմակերպական և գործառույթային առումով հանդես գա որպես վերջինից լիովին անկախ և առանձին մարմին, և ինչ հարաբերակցություն պետք է ունենան այս երկու կառույցները. միջազգային որևէ իրավական ակտի բացակայությունից (որը կպարտադրեր այս կամ այն մոտեցումը) և միջազգային տարածված փորձից ելնելով՝ պրոբացիայի ծառայությունը Հայաստանում

¹³ European Probation Service Systems, a comparative overview by Anton van Kalmthout and Ioan Durnescu

պետք է ստեղծվի Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համակարգում՝ անջատ քրեակատարողական ծառայությունից՝ հետևյալ հիմնավորումներով.

ա. ՀՀ Նախագահի 2012թ. հունիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված միջոցառումների ցանկի համաձայն՝ նախատեսվում է ՀՀ արդարադատության նախարարության կառուցվածքում ստեղծել քրեակատարողական ծառայությունից անկախ և առանձին պրոբացիայի ծառայություն.

բ. քրեակատարողական գործող համակարգում մասնագիտական որակների անբավարարությունը վկայում է այն մասին, որ համակարգն անկարող է արդյունավետորեն կազմակերպել պրոբացիոն ծառայության բազմամասնագիտական գործունեությունը.

գ. պրոբացիայի անկախ ծառայությունը գործնականում ավելի հեշտորեն կկարողանա շահել դատարանների վստահությունը, որն էական նախապայման է արդարադատության առավել անաչառ համակարգ ունենալու համար, որում, ի տարբերություն ներկայումս տիրող իրավիճակի, դատարաններ մուտք լինող գործերի մեծ մասի դեպքում չի կիրառվի ազատությունից զրկելու հետ կապված խափանման միջոց կամ պատիժ.

դ. պրոբացիայի անկախ ծառայությունն ի վիճակի կլինի կառավարել և վերահսկել իր ֆինանսական և կադրային ռեսուրսները՝ այդ կերպ երաշխավորելով համարժեք ռեսուրսների ներգրավումն իր գործունեության կազմակերպման համար.

ե. պրոբացիայի անկախ ծառայությունն ավելի մեծ հնարավորություններ կունենա՝ հաղթահարելու դատարանների, ոստիկանության և քրեակատարողական ծառայության միջև հորիզոնական հաղորդակցության ոլորտում առկա ներկայիս խոչընդոտները.

զ. պրոբացիայի անկախ ծառայությունն ավելի լավ կկարողանա երաշխավորել պրոբացիայի ժամանակակից փիլիսոփայությունների ներդրումը՝ լինելով ոչ ուժային և ի սկզբանե ապառազմականացված.

է. պրոբացիայի անկախ ծառայությունը կնպաստի պատժի համակարգի որոշակի բաղադրիչների՝ պայմանական վաղաժամկետ ազատման և պատժի չկրած մասի ավելի մեղմ պատժատեսակով փոխարինման համակարգերի բարեփոխումներին:

Ծառայությունը պետք է լինի ոչ ուժային կառույց: Ծառայության կազմակերպահրավական տեսակի խնդրի առումով նախատեսվում է հետևյալ լուծումը. պրոբացիայի ծառայությունը գործում է որպես կառավարչական հիմնարկ (այսուհետ նաև՝ հիմնարկ), որի առանձնահատկությունները կսահմանվեն օրենքով:

Պրոբացիայի ծառայությունն իր գործունեության ընթացքում պետք է սերտ համագործակցի նաև պետական մարմինների հետ, որոնք կարող են դասակարգվել երկու տեսակի՝ պրոբացիայի ծառայության շահառուներ և պրոբացիայի ծառայությանը հնարավոր ծառայություններ մատուցողներ: Առաջին խմբի մարմիններն են դատարանները, դատախազությունը, ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, որոնց քրեական դատավարության վարույթի տարբեր փուլերում պրոբացիոն ծառայությունն օժանդակում է՝ իրենց լիազորություններն իրականացնել: Իսկ երկրորդ խմբի մարմիններն են պետական կրթական հաստատությունները, տեղական ինքնակառավարման մարմինները, խնամակալության և հոգաբարձության մարմինները, սոցիալական ծառայությունները:

Պրոբացիայի ծառայության վերաբերյալ միջազգային փաստաթղթերի և արտասահմանյան պետությունների օրենսդրության փորձի ուսումնասիրությունը փաստում է, որ տարբեր իրավական համակարգերում պրոբացիայի ծառայություններն օժտված են տարբեր ծավալի իրավասությամբ և լիազորություններով: Հնարավոր չէ նախապատվություն տալ որևէ կոնկրետ մոդելի, քանի որ դրանք հիմնված են տեղական, պատմական, ավանդական, մշակութային, սոցիալական և տնտեսական առանձնահատկությունների վրա: Հետևաբար, Հայաստանի Հանրապետության պրոբացիայի ծառայության հիմնումն ու զարգացումը նույնպես պետք է ելնի ինչպես պրոբացիայի համակարգի վերաբերյալ միջազգային նորմերից, այնպես էլ Հայաստանի Հանրապետության քրեական արդարադատության և քրեակատարողական համակարգի առանձնահատկություններից և վերոնշյալ հանգամանքների պահանջներից:

Քրեակատարողական ծառայությունում գործող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների ստորաբաժանումները կատարում են որոշակի ժամկետով և ցմահ ազատազրկում պատժատեսակի հիմնական նպատակներից մեկի՝ դատապարտված անձի ուղղմանը նպաստելը՝ ապահովելով պատժի անհատականացման սկզբունքի կիրարկումը: Եվ այս առումով, նշված ստորաբաժանումների և պրոբացիայի ծառայության կողմից սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների կատարման կրկնությունից խուսափելու նպատակով, համագործակցության սահմանագծի որոշման հարցում որպես չափանիշ պետք է ընտրել անձի ազատության կամ անազատության մեջ լինելը: Այսինքն՝ ազատության մեջ պատիժ կրող դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների կատարումը դուրս են քրեակատարողական ծառայության գործառույթներից և պետք է իրականացվեն պրոբացիայի ծառայության կողմից: Այս ստորաբաժանումները պետք է սերտորեն համագործակցեն պրոբացիայի ծառայության հետ (գործողությունների մակարդակով համագործակցության մասին մանրամասն՝ ստորև): Պրոբացիայի ծառայության գործունեության հետ համատեղ՝ պետք է մշակվի նաև սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող բաժինների զարգացման նոր ռազմավարություն՝ ներառելով նվազագույնը. մասնագետների տարանջատված ու հստակ գործառութային պարտականություններ, մասնագետների վերապատրաստումներ, դատապարտյալների անձնային և վարքային դրսևորումների գնահատման հստակ չափորոշիչներ, գնահատման մեխանիզմի ներդրում, կրթական ու աշխատանքային ռեսուրսների հզորացում, պետական ու ոչ պետական կազմակերպությունների հետ համագործակցության ամրագրում ու իրագործում, այս ամենի (և ոչ միայն) ամրագրում ոլորտը կանոնակարգող իրավական ակտում և դրանից բխող մեթոդական ձեռնարկներում:

Պրոբացիայի ծառայության կողմից այլընտրանքային պատժատեսակների կատարման հնարավորության հարցը քննարկելիս անհրաժեշտ է պարզել, թե Հայաստանի Հանրապետությունում պրոբացիայի պետական ծառայությունը, իր բնույթով կարող է արդյոք ապահովել ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարումը, որոնք են.

տուգանքը, որոշակի պաշտոն զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, հանրային աշխատանքները: Նշված պատժատեսակների կատարումը դրված է ՀՀ քրեակատարողական ծառայության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի վրա:

ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 26-ի «ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի տարածքային մարմինների գործունեության կարգը հաստատելու մասին» թիվ 1561-Ն որոշմամբ հաստատված Կարգից բխում է, որ դրանք կարող են կատարվել նաև այլ մարմնի կողմից, քան քրեակատարողական ծառայությունն է, քանի որ այլընտրանքային պատիժների կատարման ստորաբաժանումները «միջնորդի» դեր են կատարում պատժի կատարման նպատակով: Դրանցից միայն հանրային աշխատանքներն են, որոնց կատարումը ենթադրում է դատապարտյալի նկատմամբ վերահսկողական միջոցառումների անմիջական իրականացում և կրում է պարբերական բնույթ: Սակայն միջազգային փորձի ուսումնասիրությունից բխում է, որ պրոբացիայի ծառայություն ունեցող բոլոր պետությունները հանրային աշխատանքների կատարումը վերապահել են ոչ թե քրեակատարողական, այլ պրոբացիայի ծառայությանը:

Ելնելով վերոգրյալից՝ արդարացված է այն, որ այլընտրանքային բոլոր պատիժների կատարումը պետք է վերապահել պրոբացիայի ծառայությանը, բացառությամբ գույքի բռնագրավումից և հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելուց, եթե դրանց հետ որպես հիմնական պատիժ է նշանակվել ազատազրկումը: Այդ դեպքում, այդ երկու պատիժների կատարումը պետք է ապահովի համապատասխան քրեակատարողական հիմնարկը: Այսինքն՝ տուգանքի, որոշակի պաշտոն զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու, հանրային աշխատանքների կատարումը պետք է ապահովի պրոբացիայի ծառայությունը:

Ելնելով պրոբացիայի ծառայության առջև դրված խնդիրների արդյունավետ և ամբողջական իրականացման, հնարավորինս բարձր որակի հատուկ մասնագիտական ծառայություններ մատուցելու նկատառումներից, ինչպես նաև ֆինանսական միջոցների

սղությունից կամ դրանց տնտեսման նպատակահարմարությունից՝ պրոբացիայի ծառայության գործունեությանն անհրաժեշտ է ներգրավել նաև հասարակական և առևտրային կազմակերպություններին, պետական, տեղական ինքնակառավարման մարմիններին և կամավորներին՝ նրանց փոխանցելով կամ պատվիրակելով պրոբացիայի ծառայության որոշակի գործառույթներ: Նման կարգավորման հնարավորություն է նախատեսվում «Ազատագրկման հետ չկապված միջոցների վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնների» 16-րդ և 19-րդ կետերով (նման կարգավորում է նախատեսվում նաև նախկին ԽՍՀՄ անդամ պետություններում, օրինակ՝ Էստոնիայում):

Պրոբացիայի ծառայության որոշ գործառույթների կատարումը կարող է փոխանցվել այլ կազմակերպությունների՝ պրոբացիայի ծառայության կողմից կնքված համապատասխան պայմանագրի հիման վրա ընդունված ՀՀ արդարադատության նախարարի հրամանով: Այդ կազմակերպություններն իրենց գործունեության ընթացքում ղեկավարվում են նույն օրենսդրությամբ, ինչ պրոբացիայի ծառայության աշխատակիցները: Նրանց համապատասխան ներկայացուցիչները և կամավորները կրում են նույն պարտականությունները և օգտվում են նույն իրավունքներից, ինչ պրոբացիայի ծառայության աշխատակիցները:

Մասնավոր ոլորտի ներկայացուցիչների կամ կամավորների ներգրավումը պրոբացիայի ծառայության լիազորությունների իրականացմանը չի բացառում պետության պատասխանատվությունը պրոբացիայի ծառայության գործունեության որակի համար:

Սերտ համագործակցելով արդեն իսկ գործող հասարակական և առևտրային կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, կրթական հաստատությունների, զբաղվածության գործակալությունների, սոցիալական ծառայությունների հետ, պրոբացիայի ծառայությունը կարող է պատվիրակել վերջիններիս իրականացնելու սոցիալական, կրթական, մշակութային, հոգեբանական ծրագրեր, որոնք ուղղված կլինեն հանցանք կատարած անձանց վերասոցիալականացմանը:

Պրոբացիայի ծառայության գործունեությանը կարող են ներգրավվել նաև կամավորներ, որոնց հետ կնքվում է համագործակցության պայմանագիր, ինչպես

օրինակ՝ Լատվիայում և Էստոնիայում: Տոկիոյի Կանոնների համաձայն՝ կամավորների ընտրությունը կատարվում է՝ հաշվի առնելով նրանց ունեցած վերաբերմունքը այն աշխատանքի նկատմամբ, որին նրանք ներգրավվելու են: Նրանք պետք է ապահովագրված լինեն իրենց պարտականությունները կատարելիս ստացած ֆիզիկական վնասվածքներից կամ պատահարներից: Կամավորները հիմնականում ներգրավվում են այնպիսի աշխատանքներում, ինչպիսիք են. դատապարտյալներին օգնություն տրամադրել աշխատանք փնտրելիս, օգնել այլ կամավորներին ծառայություններին ներգրավվելու հարցում, ինչպես նաև գրագիտության հետ խնդիրներ ունեցող դատապարտյալների համար ծառայել որպես ուսուցիչներ և այլն:

Այլ կազմակերպությունների և կամավորների ակտիվ ներգրավումը պրոբացիայի ծառայության գործունեությանը լայն կիրառումը Հայաստանի Հանրապետությունում կարող է որոշակի չափով լուծել պրոբացիայի ծառայության ստեղծման առաջին փուլում նրա առջև ծառայած մի շարք խնդիրներ, որոնցից են տվյալ ոլորտում ֆինանսական միջոցների և կադրերի անբավարարության հարցը, ինչպես նաև կնպաստի ռեսուրսների ճիշտ տեղաբաշխմանն ու տնտեսմանը:

Հասարակական կազմակերպություններն ի թիվս այլ գործառույթների, կարող են օգտակար լինել նվազագույնը հետևյալ ոլորտներում.

ա. մատուցել սոցիալական ծառայություններ (օրինակ՝ ժամանակավոր կացարանի տրամադրում, խորհրդատվություն, ուղղորդում աշխատանքի հարցերում և այլն),

բ. իրականացնել հանցավոր վարքի ուղղմանը նպաստող ծրագրեր,

գ. զբաղվել համայնքային աշխատանքների համար հարմար աշխատատեղերի որոնմամբ,

դ. կատարել հետազոտություններ,

ե. կազմակերպել կամավորների կամ մենտորների (մեդիատոր կամ հաշտարար) աշխատանքը և այլն:

Պրոբացիայի ծառայության առջև դրված խնդիրներն իրականացնելու նպատակով, այլ պետական մարմինների հետ նշված կառույցի համագործակցությունը պետք է ենթադրի նվազագույնը համագործակցություն հետևյալ մարմինների հետ և պետք է հստակ ամրագրվի օրենսդրությամբ. ՀՀ կրթության և գիտության, ՀՀ առողջապահության, ՀՀ սպորտի և երիտասարդության, ՀՀ մշակույթի, ՀՀ

աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություններ: Այն իր հերթին պետք է ներառի նաև համագործակցություն տեղական ինքնակառավարման մարմինների, սոցիալական ծառայությունների, վերականգնողական կենտրոնների, խնամատար հաստատությունների, զբաղվածության գործակալությունների, կրթական հաստատությունների հետ:

5) Պրոբացիայի ծառայության կառուցվածքը, անձնակազմը, կառավարման որոշակի առանձնահատկություններ. Հայաստանի Հանրապետության պրոբացիայի ծառայության կառավարման լիազորությունները պետք է վերապահվեն ՀՀ արդարադատության նախարարության համակարգում գործող կառավարչական հիմնարկի ղեկավարին, որին պաշտոնում նշանակելու և պաշտոնից ազատելու լիազորություն պետք է ունենա ՀՀ արդարադատության նախարարը: Ծառայությունը կունենա կենտրոնական մարմին և տարածքային ստորաբաժանումներ (ՀՀ վարչատարածքային բաժանմանը համապատասխան), որոնց մեջ, ելնելով աշխատանքային ծավալից, առանձնահատկություն կունենա Երևան քաղաքը (ստորաբաժանման ղեկավարը կունենա երեք տեղակալներ): Ծառայության, այդ թվում՝ կենտրոնական մարմնի, կառուցվածքը կբխի իրականացվելիք խնդիրներից (ծառայության կառուցվածքը բերված է հավելված 1-ում):

ՀՀ պրոբացիայի ծառայության տարածքային ստորաբաժանումները պետք է ստեղծվեն յուրաքանչյուր մարզում և Երևան քաղաքում, մարզերում մարզային ստորաբաժանումը կունենա նստավայրեր տարբեր համայնքներում (նպատակահարմար է նստավայրերը լինեն 40 համայնքներում): Յուրաքանչյուր տարածքային ստորաբաժանման գործունեությունը պետք է կառավարվի և վերահսկվի Պրոբացիայի կենտրոնական մարմնի կողմից: Յուրաքանչյուր տարածքային ստորաբաժանում (մասնավորապես տարածքային ստորաբաժանման ղեկավարը) պետք է պատասխանատու լինի ստորաբաժանման տարբեր գործառույթների ղեկավարումն իրականացնելու համար: ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայությունը պետք է պատասխանատու լինի պրոբացիայի ծառայության համընդհանուր կառավարման համար: Պրոբացիայի գործակալության

գործառույթները հիմնականում պետք է իրականացվեն պարբերական հաշվետվություններ մշակելու և ստուգումներ իրականացնելու միջոցով:

Աշխատակազմի առումով գրեթե բոլոր ծառայությունները եռաստիճան համակարգ ունեն. ղեկավարություն, պրոբացիոն աշխատողներ և վարչակազմ: Պրոբացիոն բնույթի աշխատանքների մեջ կարող են ներգրավվել նաև աշխատանքային այլ խմբեր: Նախ, հատուկ պարտականություններով պրոբացիոն աշխատողներ, ովքեր ապահովում են վերահսկողության իրականացումը:

Էլեկտրոնային վերահսկողության բաժինը պետք է կազմակերպվի պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնում՝ ամբողջ հանրապետության համար (մեկ պահախմբով, երկու ծառայողով և 4 հերթափոխով):

Պրոբացիայի ծառայության գործունեության արդյունավետությունը ուղղակիորեն կախված է նաև անձնակազմի ճիշտ թվաքանակից, որի հաշվարկման համար ճիշտ ուղեցույց կարող է հանդիսանալ ծառայության կենտրոնական մարմնի խնդիրների և տարածքային մարմիններում ծառայության կողմից իրականացվող գործառույթների համար կադրային ռեսուրսների ճիշտ հաշվարկը: Այս տեսանկյունից պրոբացիոն բնույթի աշխատանքների համար գործերի լավագույն քանակը մեկ աշխատակցի համար որոշելը չափազանց կարևոր հարց է, որի ժամանակ պետք է հաշվի առնել, որ բոլոր հանցագործություն կատարած անձանց նկատմամբ միատեսակ վերահսկողություն չի իրականացվում և կարևորություն տալ պրոբացիայից ազատ արձակվելուն մոտ ժամանակահատվածին: Միջազգային փորձի համաձայն՝ մեկ աշխատակցի վերահսկողության ներքո եղած պրոբացիոն գործերի քանակը (մեկ աշխատակցի հաշվով թվաքանակի սահմանումը) տատանվում է 40-ից մինչև 70-ը: Այս իսկ պատճառով կարևոր է սահմանել պրոբացիայի ենթակա հանցագործություն կատարած անձանց համար հստակ դասակարգում և գործերի կառավարման համակարգ: Մոդելային համակարգը ներառում է դասակարգում, որտեղ կա նաև «աշխատանքի ծավալը» որոշելու մոդել՝ հիմնված գործերի տարբերակման վրա:

Ելնելով ծառայության ընդհանուր խնդիրների և մեկ աշխատակցի կողմից իրականացվող գործառույթների համար միջինում 50 գործ չափանիշից՝ ՀՀ պրոբացիայի ծառայության ընդհանուր անձնակազմը կկազմի մոտ 220 անձ:

Այլ երկրների փորձը ցույց է տալիս, որ պրոբացիայի ծառայության աշխատակիցները հիմնականում հանրային ծառայողներ են, ովքեր պետք է համապատասխանեն սահմանված պահանջներին: Ինչ վերաբերում է կրթական չափանիշներին, ապա աշխատակիցները պետք է սոցիալական գիտությունների, մանկավարժության կամ իրավաբանության, հոգեբանության ոլորտում բակալավրի կոչում ունենան: Կան երկրներ (Իռլանդիա և Ֆրանսիա), որտեղ աշխատակիցները պետք է նաև աշխատանքային փորձ ունենան, սակայն նման ցենզ սահմանելը ծառայության ստեղծման շեմին Հայաստանի դեպքում նպատակահարմար չէ: Շատ հաճախ աշխատանքի անցնելուց հետո աշխատակիցները նախապատրաստական դասընթացների են մասնակցում, որպեսզի ավելի ծանոթ լինեն աշխատանքներին, որոնց պետք է մասնակցեն: Արդարադատության նախարարության կամ բանտային համակարգի կողմից հաճախ կազմակերպվում են ուսումնական հատուկ դասընթացներ կոնկրետ աշխատանքներ կատարելու համար: Այդպիսիք են, օրինակ թմրանյութերի կամ ալկոհոլի օգտագործման դեմ տարվող աշխատանքները:

Պրոբացիայի ծառայությունում պետք է աշխատեն անչափահասների գործերով վերապատրաստումներ անցած առանձին մասնագետներ, որոնք պետք է զբաղվեն անչափահասների առնչությամբ պրոբացիայի ծառայության լիազորությունների իրականացմամբ: Անչափահասների գործերով պետք է ներգրավվեն նաև հատուկ մասնագիտացում ունեցող մասնագետներ՝ պրոբացիոն բնույթի ծրագրերում անչափահաս օրինախախտների սոցիալական, հոգեբանական, իրավական և մտավոր ծրագրային առանձնահատկություններից ելնելով:

Պրոբացիոն գործառույթների իրականացման արդյունավետ մոնիթորինգի եղանակ է նաև ազգային տեղեկատվական համակարգի կազմակերպումը ու ցանցի հիմնադրումը: Նման տեղեկատվական համակարգի միջոցով կառավարումը կարող է հիմնվել շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը հավաքագրելու և վերլուծելու համակարգչային եղանակի վրա, այնպես, որ յուրաքանչյուր հաշվետու ժամանակահատվածի վերջում ՀՀ արդարադատության նախարարության տվյալների բազան թարմացված լինի, ինչն էլ հիմք կհանդիսանա պրոբացիայի

քաղաքականության վերաբերյալ որոշումներ ընդունելու և պրոբացիայի ծառայությունը կառավարելու համար:

Համապատասխան տվյալների համակարգը կարող է կարևոր հենասյուն ծառայել ծառայության վարչարարության համար, այդ իսկ պատճառով մուտքեր կատարելու և յուրաքանչյուր մուտքի համար տվյալի կամ աղբյուրի, հանցագործություն կատարած անձի գրանցված տվյալների մեջ ներառվելիք տեղեկության տեսակի տարբերակման պարտականության իրագործումը պետք է լավ մշակվի և ենթարկվի խիստ կանոնների: Նախատեսվում է տվյալ «աշխատանքային գործիքի» ներդրմամբ սահմանել և իրագործել քաղաքականություն ու ընթացակարգ, որոնք կապահովեն հստակեցված, թարմացված տեղեկությունների առկայություն, որոնց պահպանումը կկատարվի անհատական տվյալների պաշտպանության մասին օրենսդրությամբ սահմանված կանոններին համապատասխան:

Համակարգը պետք է հագեցած լինի տեխնիկական երաշխիքներով, որոնք կապահովեն տեղեկատվության հասանելիությունն ու դրա սահմանափակումը: Պետք է սահմանվի այն պետական հաստատությունների ցանկը, որոնց տեղեկությունները կարելի է տրամադրել: Տեղեկատվության պահպանման տևողությունը և դրա ոչնչացման մեթոդները պետք է հստակ կերպով սահմանվեն, ինչպես նաև պետք է նշանակվի այդ գործողությունների համար պատասխանատու անձը: Սա նշանակում է, որ դատարանի կողմից պրոբացիայի ծառայության ուղղորդված յուրաքանչյուր անձի տվյալները պետք է գրանցվեն «գրանցամատյանի» առանձին բաժնում: Հավաքագրված և վերլուծության ենթարկված տվյալներն ու վիճակագրությունը հիմք կծառայեն ռացիոնալ քաղաքականության վերաբերյալ որոշումներ կայացնելու և առանձին դեպքերում առանց ազատագրկման միջոցառումների արդյունավետ իրականացման համար:

Միաժամանակ, համակարգը պետք է ունենա համագործակցային տեխնիկական հնարավորություններ քրեակատարողական հիմնարկներում օգտագործվող համակարգչային համապատասխան «աշխատանքային գործիքի» հետ (նկատի ունենալով նույն նախարարության համակարգում լինելը՝ սպասարկման և երաշխիքային տեսանկյունից նպատակահարմար է համակարգչային բազան լինի նույն հենքով):

Ծառայության թափանցիկության և հասարակական մոնիթորինգի հնարավորության նպատակով կատեղծվի նաև հասարակական կազմակերպություններից ձևավորված հասարակական վերահսկողության խումբ կամ համապատասխան լիազորություններով կօժտվի ՀՀ արդարադատության նախարարի կողմից հաստատված և այսօր քրեակատարողական հիմնարկներում գործող նույնանման խմբին:

6) Պրոբացիայի ծառայության ֆինանսավորման առանձնահատկություններ. Պրոբացիայի ծառայության գործառույթների իրականացումն ու նպատակների իրագործումը տեսականորեն և գործնականում անհնարին կլինի, եթե պրոբացիայի ծառայությունները չունենան դրանց համար նախատեսված ֆինանսական միջոցներ:

Այլ երկրների փորձը ցույց է տալիս, որ մի շարք երկրներում պրոբացիայի ծառայությունները ֆինանսավորում ստանում են արդարադատության նախարարության կողմից: Սա, ըստ էության գործում է այն երկրներում, որտեղ պրոբացիայի ծառայությունները գործադիր իշխանության համակարգի մաս են կազմում (օրինակ՝ Ավստրիայում պրոբացիայի ծառայության ֆինանսավորման 87%-ը ստացվում է Արդարադատության նախարարությունից, սակայն 3,2%-ը շրջաններից, իսկ մնացած մասը տեղական իշխանություններից և հանրային ծառայություններից): Շոտլանդիայում պրոբացիայի ծառայության ֆինանսավորումն ապահովում է գործադիր իշխանությունը, իսկ ահա Շվեյցարիայում գոյություն ունեն տարատեսակ կազմակերպություններ, որոնք կատարում են ծառայությունների ֆինանսավորումը: Հատկանշական է, որ բազմաթիվ եվրոպական պետություններում (ինչպիսիք են՝ Ավստրիան, Բուլղարիան, Չեխիան, Ռումինիան, Անգլիան, Հունգարիան և այլն) օգտագործում են Եվրամիության տրամադրած ֆինանսական միջոցները: Պրոբացիայի ծառայությունները կարող են ֆինանսավորում ստանալ նաև դատական իշխանությունից կամ պետական մարմիններից բացի այլ աղբյուրներից: Սրա լավագույն օրինակը Հոլանդիան է, որտեղ պրոբացիայի ծառայությունը կարող է ֆինանսավորում ստանալ առևտրային կազմակերպություններից: Մյուս հատկանշական օրինակը վերաբերում է Բուլղարիային և Ռումինիային, որտեղ

պրոբացիայի ծառայության բյուջեն առանձնացված է դատական և բանտային համակարգի բյուջեներից, սակայն ինքնուրույն բնույթ չի կրում¹⁴:

Ծառայության խնդիրները և գործառույթներն ինքնին ենթադրում են վերջինիս պետական ֆինանսավորում՝ պետական բյուջեի միջոցների հաշվին: Սակայն այն չի սահմանափակի նաև արտաբյուջետային միջոցներ ունենալու հնարավորությունը: Նմանօրինակ լուծման պարագայում կլուծվի նաև օրենքով չարգելված կարգով ֆինանսավորում ստանալու և բյուջետային ծախսերը թեթևացնելու խնդիրները: Նշված արտաքին ֆինանսական ռեսուրսները տնօրինելու միջոցով, կարող է լուծվել նաև հիմնարկի կողմից տարբեր հասարակական կազմակերպություններին պրոբացիայի որոշ գործառույթներ փոխանցելու կամ պատվիրակելու և նրանց ֆինանսավորելու խնդիրը:

Ստորև ներկայացվող աղյուսակ 1-ում բերված են ներկայիս ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման ստորաբաժանումում առկա և պրոբացիայի ապագա ծառայությանն անհրաժեշտ նյութատեխնիկական կամ այլ հիմնական ռեսուրսների համեմատականը (հաշվարկը՝ բյուջետային նույն հոդվածային չափանիշներից ելնելով):

Աղյուսակ 1.

Հ/հ	Նյութատեխնիկական կամ այլ ռեսուրսը	Ներկայիս ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման ստորաբաժանում	Ապագա պրոբացիայի ծառայություն
1	Հաստիքային միավորները	83 (8-ը կենտրոնական մարմնում, 21-ը Երևանում, իսկ 54-ը մարզերում)	210 (55-ը կենտրոնական մարմնում, 35-ը Երևանում, իսկ 120-ը մարզերում)
2	Տարածքային ստորաբաժանումները	17 (10-ը՝ մարզերում, 7-ը՝ Երևանում)	13 (10-ը մարզերում, 1-ը՝ Երևանում)
3	Նստավայրերը	39-ը՝ մարզերում և 2-ը՝ Երևանում (փաստացի են, միայն երկուսն են ՀՀ ԱՆ	40՝ մարզերում, 1-ը՝ Երևանում՝ կենտրոնական մարմնի և Երևանի

¹⁴ European Probation Service Systems, a comparative overview by Anton van Kalmthout and Ioan Durnescu

		հաշվեկշռում)	տարածքայինի համար
4	Տրանսպորտային միջոցները	11 մարդատար (դուրսգրման ենթակա)	26 մարդատար, 1 ավտոբուս, 1 միկրոավտոբուս
5	Համակարգչային ապահովումը	25 համակարգիչ, 2 պատճենահանող սարք, 1 սկաներ (բոլորը դուրս գրման ենթակա)	170 համակարգիչ, 15 պատճենահանող սարք, 15 սկաներ, 1 սերվեր
6	Հիմնական ծախսերի բյուջետային ապահովումը	Ընդհանուր՝ մոտ 200 000.0 հազ. դրամ	Ընդհանուր՝ մոտ 600 000.0 հազ. դրամ

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման ստորաբաժանման հաստիքային միավորների թվաքանակը (83 հաստիքային միավոր) այսօրվա խնդիրների հետ համեմատ բավարար չեն, իսկ պրոբացիայի ծառայության ստեղծման՝ խնդիրների ավելացման կապակցությամբ այն կլինի խիստ անբավարար: Նախատեսվում է, որ ծառայության հաստիքային միավորների ողջամիտ թվաքանակը կկազմի 200-ը (այն բերված է հավելված 3-ում): Որպես ելակետային ցուցանիշ հիմք է ընդունվել մինչդատական վարույթում, դատական քննության ընթացքում և հետ դատական շրջանում կալանավորված և դատապարտված անձանց ընդհանուր թիվը, որը 2013թ. մարտի 1-ի դրությամբ կազմել է 4716 մարդ (այդ թվում՝ զեկույցների առումով), ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարության այլընտրանքային պատիժների կատարման ստորաբաժանման վարույթում նույն օրվա դրությամբ առկա ընդհանուր դատապարտյալների թիվը՝ 1757 գործ (որոնցից պատիժներ՝ 909, վերահսկողություն՝ 954, որոնք կարող են նույն դատապարտյալի առումով մեկտեղվել՝ 106 դեպքով): Աշխատողների թվաքանակի հաշվարկը կատարված է պրոբացիոն աշխատողների թիվը հարաբերակցած 5000 դատապարտյալի կամ մինչդատական վարույթում և դատական քննության ընթացքում գտնվող անձանց հաշվով, ինչպես նաև պրոբացիայի՝ այլընտրանքային պատժի դատապարտված և վերահսկողության տակ գտնվող անձանց ենթադրյալ՝ 4000 (ներկայիս այլընտրանքային պատիժների կատարման ստորաբաժանումների կողմից համաներմանը ոչ հաջորդիվ ժամանակահատվածում վարույթ է ընդունվել ավելի, քան 2600 գործ, և դրան

ավելացվել է քրեակատարողական հիմնարկներից դեպի պրոբացիայի ծառայություն «հոսող» գործերի քանակը՝ մոտ 1500) թվին՝ ելնելով այն հանգամանքից, որ պրոբացիոն մեկ աշխատող նման գործառության ծանրաբեռնվածությամբ կարող է արդյունավետ աշխատել առավելագույնը 40 դեպքով:

Պետության կողմից մեկ ծառայողի (սոցիալական աշխատող կամ հոգեբան կամ պրոբացիոն բնույթի աշխատող) ծախսը կկազմի է տարեկան մոտ 2400.0 հազ. դրամ (180.0 հազ. դրամ միջին ամսական աշխատավարձի դեպքում), իսկ ամբողջ անձնակազմի համար այն տարեկան կկազմի 504000.0 հազ. դրամ՝ ներառյալ հարկային պարտավորությունները և պարտադիր այլ վճարները:

Գրասենյակային ապահովման (այդ թվում նաև՝ տարածքային գրասենյակների) հարցն ամբողջությամբ խնդրահարույց է, քանի որ այսօրվա դրությամբ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման ստորաբաժանման համար նախատեսված շենք շինություններ չկան (բացի Իջևանի գրասենյակից): Դա իր հերթին ենթադրում է, որ պրոբացիայի ծառայության տարածքային գրասենյակները պետք է ստեղծվեն կամ տրամադրվեն կառավարության կողմից կամ վարձակալվեն: Մարզային ստորաբաժանումների մոտ 40 գրասենյակները վարձակալելու դեպքում ֆինանսական ծախսը կկազմի մոտ՝ 25.0 հազ. դրամ * 12 * 40 գրասենյակ = 12000.0 հազ. դրամ:

Ծառայության կենտրոնական մարմնում կամ յուրաքանչյուր պրոբացիոն աշխատող կամ հոգեբան իր աշխատանքային պարտականությունների կատարման համար պետք է ունենա համակարգիչ (հաշվարկված չեն էլեկտրոնային վերահսկողության իրականացման համար անհրաժեշտ էլեկտրոնային տեխնիկայի ձեռք բերման և սպասարկման ծախսերը՝ նկատի ունենալով այն, որ դրանք կիրականացվեն հետագա արտաբյուջետային կամ դոնորների միջոցների հաշվին), իսկ տարածքային յուրաքանչյուր ստորաբաժանում՝ ավտոմեքենա (կասկածյալի հիմնարկ կամ տուժողի և/կամ դատապարտյալի տուն, աշխատանքի/ուսման վայր մեկնելու, նրա կենցաղային, ընտանեկան, աշխատանքային պայմաններին ծանոթանալու ու վերլուծելու նպատակով): Հետևաբար, համակարգիչ ձեռք բերելու արժեքը կկազմի 220.0 հազ. դրամ * 170 հատ = 39600.0 հազ. դրամ, համակարգիչների հետ առնչվող այլ սարքավորումների և գրենական պիտույքների ձեռքբերման և սպասարկման

ծախսերը՝ տարեկան մինչև 10.0 մլն.դրամ: Ավտոմեքենաների ձեռքբերման ծախսերը կկազմեն նվազագույնը 6000.0 հազ. դրամ * 27 հատ = 162000.0 հազ. դրամ, ինչպես նաև մեկական ավտոբուսն ու միկրոավտոբուսը՝ համապատասխանաբար մոտ 14 և 10 մլն դրամ, իսկ մեքենաների տարեկան սպասարկման ծախսը կկազմի առնվազն 20.0 մլն.դրամ:

Այսպիսով, ելնելով վերոգրյալից, չանդրադառնալով ծախսերի մյուս տեսակների բովանդակային մեկնաբանմանը, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2004թ. սեպտեմբերի 23-ի թիվ 1536-Ն, 2004թ. դեկտեմբերի 12-ի թիվ 1956-Ն, 2005թ. փետրվարի 17-ի թիվ 194-Ն, 2005թ. ապրիլի 28-ի թիվ 629-Ն և 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2335-Ն որոշումները, պրոբացիայի ծառայության պահպանման տարեկան ընդհանուր ծախսը կկազմի մոտ 840 000.0 հազ. դրամ, այդ թվում՝

- ա. աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ՝ 504 000.0 հազ. դրամ,
- բ. գրասենյակների վարձակալություն՝ 12 000.0 հազ. դրամ,
- գ. վարչական սարքավորումների (համակարգչային տեխնիկա) ձեռքբերում՝ 39 600.0 հազ. դրամ,
- դ. տրանսպորտային միջոցների ձեռքբերում՝ 162 000.0 հազ. դրամ,
- ե. գործուղումներ՝ 1 000.0 հազ. դրամ,
- զ. տրանսպորտային նյութեր՝ 24500.0 հազ. դրամ,
- է. կապի ծառայություն՝ 15000.0 հազ. դրամ,
- ը. էներգետիկ, ջեռուցման, կոմունալ ծառայություններ՝ 17500.0
- թ. մեքենաների և այլ սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում՝ 5000.0 հազ. դրամ,
- ժ. համակարգչային ծառայություններ՝ 5000.0 հազ. դրամ,
- ժա. ապահովագրական ծախսեր՝ 2000.0 հազ. դրամ,
- ժբ. կահույք և օդորակիչներ՝ համապատասխանաբար 28000.0 հազ. և 12000.0 հազ. դրամ,
- ժգ. չհաշվարկված և չնախատեսված այլ ծախսեր՝ 12 400.0 հազ. դրամ:

Դա այն դեպքում, երբ մոտ 240000.0 հազ. դրամը լինելու է մեկանգամյա ծախս¹⁵ նկատի է առնվում ավտոմեքենաների, կահույքի, օդորակիչների և համակարգչային տեխնիկայի ձեռք բերման համար նախատեսված ծախսերը: Այսինքն՝ պրոբացիայի ծառայության գործունեությունն ընդհանրապես ապահովելու համար անհրաժեշտ է լինելու մոտ 600000.0 հազ. դրամ (այսինքն՝ պրոբացիայի տակ գտնվող անձի վրա կատարվելիք ծախսը ենթադրյալ 4000 անձի դեպքում կազմելու է տարեկան 150.0 հազ. դրամ կամ օրական մոտ 410 դրամ):

Արդյունքում՝ պրոբացիայի ծառայության գործունեության ծախսը մոտ երեք անգամ թանկ է, քան այսօրվա՝ այլընտրանքային պատիժների կատարման ստորաբաժանումների ծախսը: Սակայն դրա փոխարեն, պրոբացիայի ծառայությունն ունենում է մոտ երեք անգամ ավելի գործառույթներ, միաժամանակ գործունեության անհամեմատ լավ որակ՝ լիարժեք հագեցված կառույցի ու մոտ փոքր ինչ ավելի վարձատրություն ստացող աշխատողների առկայությամբ: Իսկ ամենակարևոր ձեռքբերումը դա ֆինանսական միջոցների բավականաչափ տնտեսումն է, որը գոյանում է ազատությունից զրկելու ձևով պատժի դատապարտված անձանց թվաքանակի շեշտակի կրճատմամբ (նման հաջողություն վերջին երկու տարում գրանցել է նույնիսկ Ռուսաստանի Դաշնությունը, որը երկրորդն էր աշխարհում ազատազրկվածների թվաքանակով):

ԳԼՈՒԽ 12. ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ պրոբացիայի ծառայություններն օժտված են ավելի, քան երկու տասնյակ տարաբնույթ լիազորություններով ու գործառույթներով՝ սկսած հանցավորության նվազեցման նեղ մասնագիտական ծրագրերից, տուժողների վերականգնումն ապահովող ծրագրերից, մինչև ազատված նախկին դատապարտյալներին տարբեր ծառայությունների մատուցումը:

¹⁵ Ինչպես նշվել է, տվյալ հաշվարկը չի ներառում էլեկտրոնային մոնիթորինգի ծախսերը, որը խիստ մոտավոր հաշվարկով կկազմի 50000.0 հազ. ՀՀ դրամ

Պրոբացիայի գործունեության հիմնական շրջանակն ընդհանրապես ներառում է նվազագույնը հետևյալը.

ա. վարույթն իրականացնող և հանցանք կատարած անձի առնչությամբ որոշում կայացնելու իրավասություն ունեցող այլ մարմիններին տարբեր փուլերում համապարփակ զեկույցի տեսքով տեղեկատվության տրամադրում, այդ թվում՝ սոցիալական հարցումների կամ նախքան դատավճռի հրապարակումը զեկույցների ներկայացում,

բ. պրոբացիոն բնույթի «պատիժների» կամ «պայմանների» կատարման նկատմամբ վերահսկողություն,

գ. պատիժը պայմանականորեն չկիրառելու, դատավճռի կատարման հետաձգման, պայմանական վաղաժամկետ ազատման ժամանակ, ինչպես նաև այլ հիմքերով պատժից ազատված անձի նկատմամբ վերահսկողություն (եթե օրենքով նախատեսված է պատժի կրման հնարավորությունը),

դ. թմրամոլների կամ գինեմոլների համար ոչ հարկադիր բուժման ծրագրերի կամ այլ տեսակի հանցագործություն կատարած անձանց համար նախատեսվող վերականգնողական ծրագրերի, հատուկ միջոցառումների իրականացում (կրթական, մշակութային, սոցիալ-հոգեբանական),

ե. հանցանք կատարած անձանց ուղղորդում, վերահսկողություն և աջակցություն քրեական վարույթի ողջ ընթացքում,

զ. հանրային աշխատանքների նկատմամբ վերահսկողությունը և դրանց կազմակերպումը,

է. մեղադրյալի և տուժողի հաշտեցում (մեղիացիա),

ը. ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների և խափանման միջոցների կիրառման ապահովումը, սոցիալական, կրթական, մշակութային, հոգեբանական ծրագրերի իրականացում՝ հանցանք կատարած անձի վերասոցիալականացումն ապահովելու նպատակով վարույթի ողջ ընթացքում, ինչպես նաև ազատությունից զրկելու հետ չկապված պատիժը կրելու ընթացքում,

թ. դատապարտյալների գնահատում, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացնելիս,

ժ. անհատական պլանի մշակման համար մասնագիտական խորհրդատության տրամադրում քրեակատարողական ծառայությանը,

ժա. ներման հարցերով խորհրդատվական զեկույցների ներկայացում,

ժբ. էլեկտրոնային մոնիթորինգ,

ժգ. պատժից պայմանական վաղաժամկետ ազատված անձանց օժանդակության տրամադրում:

Տարբեր երկրներում պրոբացիայի ծառայության հիմնադրման և զարգացման հետ միասին պրոբացիայի ծառայություններն ընդլայնում են իրենց լիազորությունները՝ ընդգրկելով նոր գործառույթներ՝ սկսած այլընտրանքային պատիժների կատարումից և մեդիացիայից, մինչև քրեական գործերով մինչդատական վարույթի ընթացքում կալանավորմանն այլընտրանք հանդիսացող խափանման միջոցների կիրառման ապահովումը (հսկողության հանձնելը, տնային կալանք): Չնայած լիազորությունների այդ տարբեր շրջանակներին, ներկայումս գրեթե բոլոր երկրներում պրոբացիայի ծառայության գործառույթները իրականացվում են ոչ ուժային կառույցների կողմից և հիմնականում պրոբացիայի հետևյալ չորս փուլերով.

ա. մինչդատական,

բ. դատական,

գ. պենիտենցիար,

դ. պոստպենիտենցիար:

Հայաստանի Հանրապետությունում պրոբացիայի ծառայության լիազորությունների և գործառույթների շրջանակը պետք է ընդգրկի՝

ա. մինչդատական փուլում՝ խափանման միջոցի ընտրության նպատակով մինչդատական զեկույցի պատրաստում և կալանավորմանն այլընտրանք խափանման միջոցներից տնային կալանքի և հսկողության իրականացում,

բ. դատական փուլում՝ մինչև պատժի նշանակելը զեկույցի տրամադրում և մեդիացիա,

գ. պատժի կատարման (պենիտենցիար) փուլում՝ այլընտրանքային պատիժների կատարում, պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում փորձաշրջանի կազմակերպում և իրականացում, վերականգնողական աշխատանքներ, պատժից ազատված անձի վարքի վերահսկողություն, պատիժը հետաձգված անձանց նկատմամբ

վերահսկողություն, ազատագրկման տեսքով պատժի կրման ընթացքում պատժի անհատական պլանավորմանն աջակցություն, դատապարտյալի վարքի պարբերական գնահատում, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինման նպատակով զեկույցների տրամադրում, ներման խնդրագրերով զեկույցների տրամադրում,

դ. հետպատժյա (պոստպենիտենցիար) փուլում՝ դատվածությունը հանելու առնչությամբ որոշում կայացնելու իրավասություն ունեցող մարմնին զեկույցի ներկայացում:

1) Մինչդատական փուլում պրոբացիայի բնութագիրը. Մինչդատական պրոբացիան իրենից ենթադրում է քրեական գործի մինչդատական քննության ընթացքում պրոբացիայի ծառայության կողմից իրականացվող գործառույթները: Այս փուլում այլ երկրների պրոբացիայի ծառայությունների կողմից հիմնականում իրականացվում է մեղադրյալի վերաբերյալ զեկույցի պատրաստում, այլընտրանքային խափանման միջոցների իրականացում, ազատության մեջ գտնվող մեղադրյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն, օժանդակություն և աջակցություն, ինչպես նաև սոցիալական ծրագրերի իրականացում՝ դատապարտյալի վերասոցիալականացումն ապահովելու նպատակով:

Նախատեսվում է, որ Հայաստանում պրոբացիայի ծառայությունը մինչդատական փուլում պետք է պատրաստի մեղադրյալի վերաբերյալ զեկույցներ և իրականացնի այլընտրանքային խափանման միջոցներ:

Պրոբացիայի ծառայությունների դերակատարության մեջ կենտրոնական դեր են զբաղեցնում վարույթն իրականացնող մարմնի համար պրոբացիայի ծառայության աշխատակիցների կողմից պատրաստված զեկույցները, որոնք այդ մարմինների կողմից հաշվի են առնվում որոշումներ կայացնելիս: Այս զեկույցները խորհրդատվական բնույթի են և դրանք հաշվի առնելը վերը նշված մարմինների համար պարտադիր պայման չէ, վերջիններս ազատ են որոշումներ կայացնելիս: Զեկույցը յուրաքանչյուր դեպքում պետք է լինի օբյեկտիվ, իրական ու անկողմնակալ, պետք է բխի հանցագործություն կատարած անձի և տուժողի շահերից ու ներառի դատապարտյալի վարքագծի պոտենցիալ փոփոխության և սոցիալական

վերաինտեգրման մասին տեղեկատվություն¹⁶: Զեկույցներ ներկայացնելու պարտականությունը նախատեսված է նաև Տոկիոյի Կանոններով¹⁷: Կանոնների համաձայն՝ հաշվետվությունը վարույթն իրականացնող, այդ թվում՝ դատական մարմիններին ներկայացնում են դրա համար իրավասու մարմիններն ու պաշտոնյաները: Այն պետք է սոցիալական տեղեկություն ու խորհրդատվություն պարունակի ինչպես դատապարտյալի, այնպես էլ դատավարության վերաբերյալ:

Մինչդատական փուլում վարույթն իրականացնող մարմնի ներկայացուցիչը կամ դատավորը կարող են գրավոր դիմել պրոբացիայի ծառայությանը՝ կասկածյալի կամ մեղադրյալի վերաբերյալ մինչդատական զեկույց տրամադրելու համար: Նման գրավոր դիմումը պետք է ներկայացվի պրոբացիայի ծառայության պետին, որն էլ, ըստ սահմանված կարգի, պետք է հանձնարարի համապատասխան ստորաբաժանմանը (կամ աշխատակցին) պատրաստել մինչդատական զեկույց, որը պետք է կցվի քրեական գործին (միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ընդհանուր մոտեցումներով հանդերձ՝ յուրաքանչյուր երկիր ունի իր լուծումները և հատկանիշները, տվյալ գործառույթի նկարագրությունը հիմնված է ոչ թե մեկ, այլ մի քանի երկրների (Հունգարիա, Էստոնիա, Լատվիա, Դանիա) փորձից վերցված առանձին տարրերի վրա):

Մինչդատական զեկույցը պետք է տրամադրվի այն քրեական գործերով, որոնց դեպքում վարույթն իրականացնող մարմինը պատրաստվում է դիմել դատարան՝ կալանավորումը որպես խափանման միջոց նշանակելու միջնորդությամբ: Այն պետք է պարտադիր լինի անչափահասների ցանկացած գործով (այս մասին առավել մանրամասն կխոսվի համապատասխան բաժնում): Մինչդատական զեկույցի նպատակը որոշում կայացնելուց առաջ հանցագործություն կատարած անձի մասին տեղեկություն ունենալն է, ինչն էլ հաշվի է առնվում որոշում կայացնելիս: Զեկույցում պարունակվող տեղեկատվությունը ստացվում է ինչպես անմիջականորեն հանցագործություն կատարած անձից՝ հարցազրույցների միջոցով, այնպես էլ նրա ընտանիքից, համայնքից, ոստիկանության աշխատակիցներից կամ սոցիալական ծառայություններից: Տեղեկությունը վերաբերվում է հանցագործություն կատարած

¹⁶ [Handbook on Probation Services, Guidelines for Probation Practitioners and Managers, Jon Klaus](#)

¹⁷ [UN Standard Minimum Rules for Non-Custodial Measures](#)

անձի անձին, աշխատունակությանը և աշխատանքային պատմությանը, կրթությանը, սոցիալական, գույքային և ընտանեկան դրությանը, առողջությանը, որոշակի հակումներին, հնարավոր կախվածություններին, նախասիրություններին, հանցագործության մանրամասներին, գործադրված բռնության մանրամասներին, հանցանքի նկատմամբ ունեցած վերաբերմունքին և այլն: Այն սովորաբար ավարտվում է եզրափակիչ դրույթներով, որտեղ կենտրոնական դեր ունեն դատավճռի վերաբերյալ առաջարկություններն ու երաշխավորագրերը: Այն պատրաստելիս պրոբացիայի ծառայության ծառայողը պետք է առաջնորդվի սահմանված չափորոշիչներով: Անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու համար, պրոբացիայի ծառայության ծառայողը կարող է հանդիպել և զրուցել ինչպես կասկածյալի կամ մեղադրյալի, այնպես էլ, նրա հարազատների, բարեկամների և ընկերների, ինչպես նաև կասկածյալի կամ մեղադրյալի հետ կապ ունեցող այլ անձանց հետ: Անձի վերաբերյալ օբյեկտիվ պատկերացում կազմելու համար, պրոբացիայի ծառայության ծառայողը կարող է դիմել այն հաստատություններին, որտեղ սովորել և աշխատել է անձը, տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև այլ մարմինների, որոնք կարող են բնութագրական տեղեկություններ տրամադրել նրա վերաբերյալ:

Ջեկույցի արժանահավատությունը երաշխավորելու նպատակով, պրոբացիայի ծառայության ծառայողը պետք է հիմնավորի զեկույցում ներկայացված տեղեկատվությունը և փաստերը:

Հաշվի առնելով այն, որ մինչդատական զեկույցը ներկայացվում է դիմող մարմնին և այն ներառում է քրեական գործի նյութերում՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից մինչդատական զեկույցը պետք է օգտագործվի «հանցագործի» անձի վերաբերյալ օբյեկտիվ պատկերացում կազմելու, համապատասխան խափանման միջոց ընտրելու և մեղադրական եզրակացությունը կազմելու համար:

Դատարանը կարող է դիմել պրոբացիայի ծառայությանը՝ ներկայացնել նոր մինչդատական զեկույց կամ լրացնել քրեական գործի նյութերում արդեն իսկ առկա զեկույցը: Դատարանի կողմից մինչդատական զեկույցն օգտագործվում է խափանման միջոց նշանակելիս՝ անձի վերաբերյալ համակողմանի և օբյեկտիվ պատկերացում ունենալու, ինչպես նաև անձի վտանգավորության աստիճանի և ռեցիդիվի ռիսկի վերաբերյալ գնահատական ունենալու համար:

Ներկայիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կալանավորմանն այլընտրանքային խափանման միջոց միայն գրավն է: ՀՀ ապագա քրեական դատավարության օրենսգրքի հայեցակարգով ամրագրված է կալանավորման, որպես խափանման միջոցի կիրառման սահմանափակման անհրաժեշտությունը: Նախագծի հիմնական բնութագրական գծերից մեկը խափանման միջոցների շրջանակի ընդլայնումն է: Կալանավորման և այլընտրանքային խափանման միջոցների հստակ նշումը, նոր այլընտրանքային խափանման միջոցների սահմանումը, ինչպես նաև գրավը որպես ինքնուրույն խափանման միջոց նախատեսելը պետք է նպաստեն իրավակիրառ պրակտիկայում անհիմն կամ հարկադրված կալանավորումների թվի կրճատմանը: Կալանավորումը մեղադրյալի նկատմամբ կարող է ընտրվել միայն այն դեպքում, երբ խափանման մյուս միջոցները չեն կարող ապահովել կամ երաշխավորել մեղադրյալի պատշաճ վարքագիծը և հանրային շահերի համաչափ պաշտպանությունը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը որպես կալանավորմանն այլընտրանքային խափանման միջոցներ նախատեսում է տնային կալանքը, վարչական վերահսկողությանը հանձնելը և գրավը: Այս մոտեցումը վերանայման կարիք ունի՝ ՀՀ-ում պրոբացիայի ծառայության ստեղծման և երկրում իրականացվող քրեական և քրեադատավարական բարեփոխումների, ինչպես նոր՝ վերականգնողական արդարադատության համատեքստում՝ դրա կիրառումը պետք է նախատեսվի իրականացնել պրոբացիայի ծառայության կողմից: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մի շարք երկրներում հենց պրոբացիայի ծառայությունն է իրականացնում նման խափանման միջոցը (այդ երկրներից են օրինակ՝ Իտալիան, Ֆրանսիան, Լեհաստանը, Կատալոնիան)¹⁸

Նոր քրեական դատավարության օրենսգրքով սահմանվող կալանավորում խափանման միջոցին այլընտրանքային խափանման միջոց կիրառելու դեպքում, հասարակությունում տվյալ մեղադրյալի վարքի նկատմամբ պրոբացիայի ծառայության կողմից իրականացվող վերահսկողությունը կլուծի մի շարք խնդիրներ: Մասնավորապես, նվազագույնի կհասցվի անձի շփումը իրավապահ մարմինների հետ՝

¹⁸ European Probation Service systems, Comparative overview, by Anton M. van Kalmthout and Ioan Durnescu, p.22

դրանով իսկ կրելով ավելի սոցիալական ուղղվածություն, վերահսկողության ընթացքում հանցագործության մեջ մեղադրվող անձը կստանա հոգեբանական օժանդակություն և աջակցություն՝ դրանով իսկ նվազեցնելով վարույթի բացասական ազդեցությունը անձի բարոյահոգեբանական վիճակի վրա, պրոբացիայի ծառայության կողմից իրականացվող սոցիալական աշխատանքների շնորհիվ կապահովվի անձի առավել սահուն վերականգնումը և վերասոցիալականացումը: Մյուս կողմից, կլուծվի նաև կալանավորված անձանց պահելու վայրերի գերբնակեցման խնդիրը, ինչպես նաև կնվազի հանցագործությունների կատարման մեջ մեղադրվող տարբեր անձանց շփումը և հանցավոր փորձառության փոխանցումը:

Պրոբացիայի ծառայության կողմից իրականացվող այլընտրանքային խափանման միջոցներից տնային կալանքը այնպիսի խափանման միջոց է, որի դեպքում անձը պարտավոր է չլքել դատարանի որոշման մեջ նշված բնակության վայրը: Դատարանի որոշմամբ կարող են սահմանվել նաև լրացուցիչ այլ սահմանափակումներ: Տնային կալանք կիրառելու մասին դատարանի որոշման մեջ նշվում են այն կոնկրետ սահմանափակումները, որոնք տարածվում են մեղադրյալի նկատմամբ: Իսկ հսկողությանը հանձնելը մեղադրյալի տեղաշարժման և գործողությունների ազատության սահմանափակումն է, որի պայմաններում նա պարտավոր է ոչ հաճախ, քան շաբաթը երեք անգամ գրանցվել դատարանի որոշման մեջ նշված պրոբացիայի ծառայությունում: Դատարանի որոշմամբ մեղադրյալին կարող է արգելվել նաև առանց քրեական վարույթի իրականացնող մարմնի թույլտվության փոխելու մշտական կամ ժամանակավոր բնակության վայրը, այցելելու որոշման մեջ նշված որոշակի վայրեր, տեսակցելու որոշակի անձանց, օրվա որոշակի ժամերին լքելու իր բնակության վայրը: Այս արգելքները սահմանելիս հաշվի են առնվում մեղադրյալի աշխատանքի կամ ուսման պայմանները կամ առողջական վիճակը:

Մեղադրյալին հսկողությանը հանձնելու մասին որոշման պատճենը կատարման նպատակով պետք է ուղարկվի պրոբացիայի ծառայությանը: Այն անհապաղ պետք է գրանցի մեղադրյալին և նրան հսկողության ընդունելու մասին տեղյակ պահի քրեական վարույթի իրականացնող մարմնին:

Մեղադրյալի վարքագծի նկատմամբ հսկողությունը դատարանի որոշմամբ կարող է իրականացվել նաև հատուկ էլեկտրոնային միջոցներով: Մեղադրյալը պարտավոր է

իր վրա մշտապես կրել նշված էլեկտրոնային հսկողության միջոցները, դրանք պահել սարքին վիճակում, ինչպես նաև արձագանքել պրոբացիայի ծառայության հսկողության ազդանշաններին: Մեղադրյալի կողմից տնային կալանքի պայմանները խախտելու դեպքում պրոբացիայի ծառայության միջնորդության հիման վրա դատարանն այն կարող է փոխարինել կալանավորմամբ:

2) Դատական փուլում պրոբացիայի բնութագիրը. դատական փուլում պրոբացիան ենթադրում է քրեական գործի դատական քննության ընթացքում պրոբացիայի ծառայության կողմից իրականացվող գործառույթները: Այս փուլում պրոբացիայի ծառայության կողմից հիմնականում իրականացվում է ամբաստանյալի վերաբերյալ զեկույցի պատրաստում և ներկայացում դատարանին, ազատության մեջ գտնվող մեղադրյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն, օժանդակություն, սոցիալական ծրագրերի իրականացում, մեղադրյալի և տուժողի հաշտեցում:

Նախատեսվում է, որ Հայաստանում պրոբացիան դատական փուլում պետք է ներառի ներքոհիշյալը:

«Ապագա քրեական դատավարության օրենսգրքի հայեցակարգը նախատեսում է դատավճռի կայացման երկփուլ համակարգ: Առաջին փուլում կողմերի և դատարանի համար քննարկման առարկա է դառնում ամբաստանյալի մեղավորության կամ անմեղության հարցը, որի լուծումից կախված երկրորդ փուլում որոշվում են դատավճռի կոնկրետ տեսակից բխող մյուս հարցերը: Երկրորդ փուլում դատարանը, հրավիրված լրացուցիչ դատական նիստում, քննարկման առարկա դարձած ամբաստանյալի նկատմամբ պատիժ նշանակելու կամ չնշանակելու, նրա պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները ուսումնասիրելու, կոնկրետ պատժատեսակը կամ պատժաչափն ընտրելու հետ կապված հարցերը լուծելու համար, հստակ կողմնորոշիչներ ունենալու նպատակով կարող է հանձնարարել պրոբացիայի ծառայությանը կազմել հատուկ զեկույց, որը կրում է խորհրդատվական բնույթ: Այս զեկույցը բավական նման է մինչդատական փուլում տրամադրվող զեկույցին և ներառում է անձի սոցիալական–հոգեբանական բնութագիրը: Սակայն տարբերակիչ հատկանիշներից է այն, որ այս զեկույցի պատրաստման ժամանակ պրոբացիայի ծառայության ծառայողն ավելի երկար ժամանակ կունենա անձի հետ շփվելու, ինչպես

նաև արդեն իսկ առկա կլինի որոշակի նախապատմություն, ինչը թույլ կտա ավելի խորքային վերլուծություն կատարելու: Բացի այդ, զեկույցը պարունակում է նաև եզրակացություն անձի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու, օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու, պատժի կրումը հետաձգելու կամ պատժից ազատելու հնարավորության վերաբերյալ և այդ դեպքում նրա վրա դրվելիք պարտավորությունների մասին (այդպիսի կարգ նախատեսված է նաև Շվեդիայիում, Լատվիայում, Մոլդովայում և այլն¹⁹):

Զեկույցը պետք է ներառի անձի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն, նվազագույնը պարունակելով հետևյալ տեղեկությունները՝ սոցիալական, ընտանեկան դրությունը, նախկին հնարավոր դատվածությունները կամ առնչությունը իրավապահ մարմինների հետ, որոշակի հակումները, առողջական վիճակը, հնարավոր կախվածությունները, կրթությունը, աշխատանքային պատմությունը, գույքային դրությունը և այլն: Այն պատրաստելիս պրոբացիայի ծառայության ծառայողը պետք է առաջնորդվի սահմանված չափանիշներով: Անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու համար, նա պարբերաբար կարող է հանդիպել և զրուցել նախ ամբաստանյալի, հետո նաև նրա հարազատների, բարեկամների և ընկերների, նրա հետ կապ ունեցող այլ անձանց հետ: Ամբաստանյալի հետ զրույցներին, վերջինիս ցանկությամբ, կարող է ներկա լինել նաև նրա պաշտպանը:

Զեկույցը պատրաստելիս, պրոբացիայի ծառայության ծառայողը կարող է դիմել նաև համապատասխան դատավորին գործի նյութերն իրեն տրամադրելու կամ դրանցից օգտվելու համար: Անձի անձնական կյանքին վերաբերող տվյալները հավաքագրելիս և մշակելիս, պրոբացիայի ծառայության ծառայողը պետք է առաջնորդվի անձնական կյանքի անձեռնմխելիության և անձնական կյանքի գաղտնիության ապահովման սկզբունքներով:

Հավաքագրված տեղեկատվության, ինչպես նաև ամբաստանյալի հետ անձամբ ունեցած զրույցների արդյունքում, պրոբացիայի ծառայության ծառայողը պետք է տա անձի օբյեկտիվ սոցիալ-հոգեբանական նկարագիրը: Զեկույցի արժանահավատությունը երաշխավորելու նպատակով, պրոբացիայի ծառայության

¹⁹ Տես՝ http://www.cep-probation.org/default.asp?page_id=157&map_id=59

ծառայողը պետք է հիմնավորի զեկույցում ներկայացված տեղեկատվությունը և փաստերը:

Դատարանին նման եզրակացության ներկայացումը կնպաստի առավել իրազեկ ու անաչառ որոշման կայացմանը՝ հաշվի առնելով պատժի համաչափությունը անձի և նրա կողմից կատարված արարքին: Նման պրակտիկան կնպաստի նաև պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտի և այլընտրանքային պատիժների կիրառման ընդլայնմանը:

Անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանել պրոբացիայի ծառայության աշխատակիցների պարտականությունը զեկույցում ներկայացնել ճշմարտացի տեղեկություններ և նախատեսել պատասխանատվություն՝ տվյալ պահանջը խախտելու համար: Միաժամանակ, դատավարության կողմերին իրավունք վերապահել ներկայացնել առարկություններ և ապացույցներ պրոբացիայի ծառայության կողմից ներկայացված զեկույցում տեղ գտած տեղեկությունների առնչությամբ:

«Նոր քրեական դատավարության օրենսգրքի հայեցակարգը նախատեսում է մասնավոր մեղադրանքի վարույթը: Այս վարույթի գործերով տուժողի բողոքն անմիջականորեն հասցեագրվում է դատարանին, որն էլ կողմերի ներկայացված և հետազայում դատարանի կողմից ձեռք բերված նյութերի հիման վրա ամբողջ ծավալով քննում և լուծում է գործը: Մասնավոր մեղադրանքի ինստիտուտը նախատեսվում է միայն ոչ մեծ ծանրության հանցագործությունների համար և նպատակ է հետապնդում գործի քննության ծանրությունը տեղափոխել դատարան: Ի տարբերություն «Վ գործող քրեական դատավարության օրենսգրքի, ըստ որի մասնավոր մեղադրանքի գործերով քննությունը կարող էր ավարտվել մինչդատական փուլում՝ տուժողի և մեղադրյալի հաշտության դեպքում («Վ քրեական դատավարության օրենսգրքի 36-րդ հոդված), ներկայիս նախագծով մասնավոր մեղադրանքի վարույթն անմիջապես տեղափոխվում է դատական փուլ: Այս իսկ պատճառով մեղիացիան, որը մի շարք երկրներում, նախատեսված է որպես մինչդատական փուլում իրականացվող գործառույթ, մեր երկրում կարող է դիտվել որպես դատական փուլում իրականացվող գործառույթ (ինչպես օրինակ Մալտայում, Նորվեգիայում, Հյուսիսային Իռլանդիայում է): Չնայած դրան, մասնավոր մեղադրանքի գործերով մեղիացիայի ինստիտուտը (հաշտեցում) հանդիսանում է գործի դատական լուծման այլընտրանք և համարվում է

արտադատական միջամտության տեսակ: Մեդիացիայի ընդգծված առավելություններից է այն, որ այս ինստիտուտը հնարավորություն է տալիս արագ փոխհատուցել տուժողի վնասները, հանդիսանում է ավելի սոցիալական, քան դատական միջամտությունը, և նախատեսում է հանցագործության մեջ մեղադրվողի և տուժողի առավել ակտիվ ներգրավում գործընթացում:²⁰ Որպես արտադատական լուծում, հիմնավորվում է նաև այն հանգամանքով, որ հնարավորություն է տալիս (առավել ևս անչափահասների դեպքում) զերծ պահել անձին դատական քննությանը հատուկ լարվածությունից և լրացուցիչ սթրեսային ապրումներից: Այս առումով, ենթադրվում է, որ անձի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանավորումը չի եղել, և անձը զերծ է մնում նաև քրեակատարողական հիմնարկի ենթամշակույթին բախվելուց:

Այս վարույթի շրջանակներում, դատարանի որոշմամբ և կողմերի համաձայնությամբ, գործի քննությունը կարող է փոխանցվել պրոբացիայի ծառայությանը: Դատարանը կկասեցնի գործի դատական քննությունը և մեդիացիա անցկացնելու վերաբերյալ որոշումը կուղարկի պրոբացիայի ծառայության պետին, ով էլ, ըստ սահմանված կարգի, պետք է հանձնարարի պրոբացիայի ծառայության համապատասխան ստորաբաժանմանը (կամ աշխատակցին) սահմանված ժամկետում իրականացնել տվյալ գործով հաշտեցումը:

Մեդիացիայի գործընթացը սկսվում է մեղադրյալի կողմից իր մեղքի խոստովանությամբ և իր կողմից պատճառված վնասներն ամբողջությամբ հատուցելու պատրաստակամության և հնարավորության արտահայտմամբ: Մեդիացիայի գործընթացը մինչև վերջ շարունակելու համար, դրա ողջ ընթացքում պետք է առկա լինի և մեղավոր, և տուժող կողմերի՝ գործը արտադատական կարգով լուծելու կամավորությունը և ցանկությունը:

Այս գործընթացն ավարտվում է կողմերի միջև կնքված համաձայնությամբ, որը ներկայացվում է դատարան: Վերջինս էլ, ստուգելով համաձայնության կամավորությունը և իրավաչափությունը, դրա հիման վրա կարճում է քրեական գործը:

Մեդիացիայի նպատակը կողմերի միջև հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման ձևի և չափի վերաբերյալ համաձայնություն ձեռք բերելն է: Պրոբացիայի

²⁰ European Probation Service systems, Comparative overview, by Anton M. van Kalmthout and Ioan Durnescu, p.30

Ճառայողն այս գործընթացում պետք է հանդես գա որպես համակարգող: Պրոբացիայի ճառայողը մեդիացիայի գործընթացը կազմակերպելու հմտություններ և կարողություններ ունեցող երրորդ անձ է: Գործընթացի ամբողջ ընթացքում նա պետք է պահպանի անկողմնակալությունը և չպետք է գործում անձնական շահագրգռվածություն ունենա: Պրոբացիայի ճառայողը ակտիվորեն մասնակցում է մեդիացիայի գործընթացին, կազմակերպում և անցկացնում է կողմերի միջև բանակցություններ և հետևում կողմերի պարտավորությունների կատարմանը: Պրոբացիայի ճառայողը պետք է հետևի մեդադրյալի կողմից համաձայնությամբ սահմանված վնասի հատուցման պատշաճ կատարմանը (սահմանված չափով և ձևով): Պրոբացիայի ճառայողի գործառույթներն ավարտվում են համաձայնությամբ սահմանված պարտավորությունների պատշաճ կատարմամբ:

Արդյունքում տուժողը ստանում է իրեն պատճառված վնասի հատուցում, իսկ մեդադրյալը ազատվում է քրեական պատասխանատվությունից՝ ազատվելով նաև դրանով պայմանավորված բոլոր բացասական հետևանքներից:

3) Պատժի կատարման փուլում պրոբացիայի բնութագիրը. Պենիտենցիար պրոբացիան ենթադրում է դատարանի դատավճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո պրոբացիայի ճառայության կողմից իրականացվող գործառույթները: Տվյալ փուլում պրոբացիայի ճառայության կողմից իրականացվում են

ա. դատարանի կողմից նշանակված՝ ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարումը,

բ. ազատությունից զրկելու հետ չկապված պատժի դատապարտված անձի սոցիալական, հոգեբանական և իրավական օժանդակություն ու աջակցություն,

գ. դատարանի կողմից պատժից ազատված անձանց վարքագծի նկատմամբ վերահսկողություն,

դ. պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում անձի վարքագծի և դատարանի դատավճռով վերջինիս վրա դրված պարտականությունների կատարման նկատմամբ վերահսկողություն,

ե. դատարանի կողմից կիրառված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացում,

զ. ազատագրկման ձևով պատիժ կրող դատապարտյալներին պատժից պայմանական վաղաժամկետ ազատման կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինման վերաբերյալ զեկույցների տրամադրում,

է. ներման վերաբերյալ խորհրդատվական զեկույցների տրամադրում,

ը. բանտային աշխատակիցներին անհրաժեշտության դեպքում մասնագիտական խորհրդատվության, աջակցության տրամադրում,

թ. պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատված անձանց վարքագծի նկատմամբ վերահսկողություն, վերջիններիս օժանդակություն ու աջակցություն:

«Քրեական օրենսգիրքը նախատեսում է պատժից ազատելու հիմքեր, ինչպիսիք են՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը, ազատագրկում կրող անձի պատժի չկրած մասի փոխարինում ավելի մեղմ պատժատեսակով, ազատագրկման դատապարտված հղի կանանց կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձանց պատժի կրման հետաձգում կամ ազատում, պատժից ազատում ծանր հիվանդությունների հետևանքով, արտակարգ հանգամանքների հետևանքով, մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետն անցնելու կապակցությամբ: Այս փուլում պրոբացիայի ծառայությունը պետք է պատժից ազատված անձանց նկատմամբ իրականացնի վերահսկողություն (այդ թվում՝ էլեկտրոնային վերահսկողություն, վերահսկողություն այցելությունների միջոցով):

Նշված վերահսկողությունն իրականացնելիս պրոբացիայի ծառայությանը տեղեկատվություն է տրամադրվում վերահսկվող անձի իրավունքների ու պարտականությունների մասին, վերահսկվողի ցանկալի վարքագծի վերաբերյալ, վերահսկողության նպատակների, իրականացման մեթոդների և պայմանների մասին, ինչպես նաև նախատեսված պարտականությունների մասին:

Վերահսկողություն իրականացնելիս պրոբացիայի ծառայությունը, կախված ընտրված միջոցից, կարող է իրականացնել տարբեր գործառույթներ: Օրինակ՝ բնակության վայրը չփոխելու պարտականության դեպքում իրականացնել պարբերական ստուգիչ այցելություններ, որոշակի վայրեր հաճախելու արգելքի դեպքում կապեր հաստատել տեղական մարմինների, այլ կազմակերպությունների և ընտանիքի անդամների հետ, ովքեր տեղեկություն կտրամադրեն անձի կողմից

նշանակված պայմաններին հետևելու կամ դրանք խախտելու մասին, պատճառված վնասը հատուցելու և տուժողին նյութական օժանդակություն ցուցաբերելու պարտականության դեպքում պարբերաբար ստուգել անձի եկամուտները և հսկել, որ դատարանի կողմից սահմանված ժամկետում անձը կատարի իր պարտականությունը և այլն:

Վերահսկողության ընթացքում պրոբացիայի ծառայության կարևոր գործառույթներից պետք է լինի վերասոցիալականացման ծրագրերի իրականացումը, սոցիալական, հոգեբանական և իրավական աջակցությունը պատժից ազատված անձանց նկատմամբ, կրթամշակութային, հոգևոր, մարզական, աշխատանքային և այլ զբաղվածության ապահովման գործունեությունը:

Նշված ծրագրերի միջոցով պրոբացիայի ծառայությունը նպաստում է սոցիալական վերականգնման աշխատանքների իրականացմանը, կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի հիմնելուն, ուսումնական ծրագրերի կազմակերպմանը, թմրանյութերի և ալկոհոլի օգտագործման դեմ պայքարի հատուկ ծրագրերի իրականացմանը, թմրանյութերից կախվածություն ունեցողների նկատմամբ հսկողության ապահովմանը:

Այս փուլում, մասնավորապես, պատժից ազատման նախապատրաստական փուլում, պրոբացիայի ծառայությունը պետք է աջակցություն ցուցաբերի քրեակատարողական հիմնարկների սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների ստորաբաժանումներին՝ դատապարտյալների վարքի գնահատման և նրանց ուղղման անհատական ծրագրերի կազմման աշխատանքներում:

Պրոբացիայի ծառայության կարևոր գործառույթը պետք է լինի դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման հարցը քննելու դեպքում այդ անձի վերաբերյալ զեկույցների, սոցիալական–հոգեբանական բնութագրերի ներկայացումը, որը պետք է ներառի նվազագույնը՝ այդ դատապարտյալի և նրա վարքի եզրակացությունը, գնահատի կրկնահանցագործության ռիսկը, կատարվող սոցիալական, հոգեբանական, իրավական աշխատանքների արդյունավետությունը, անհրաժեշտ վերահսկողական միջոցները, ալկոհոլային կամ թմրանյութերից կախվածության առումով որոշակի կուրսեր անցնելու հնարավորությունը:

Եթե քրեակատարողական հիմնարկի աշխատակիցների գործառույթը սահմանափակվում է դատապարտյալի վարքը գնահատելով՝ ելնելով պատժի կրման ընթացքում ցուցաբերած կարգապահությունից, ապա պրոբացիոն աշխատակցի խնդիրը անձի պատրաստվածության գնահատումն է՝ ապրել ազատության պայմաններում: Ռիսկերը գնահատվում են, թե որքանով է անձի ներկա վիճակը անհրաժեշտ ու բավարար հասարակությունում վերաինտեգրվելու համար և ինչպիսի աշխատանքներ են անհրաժեշտ նրա ուղղման գործընթացն ավարտելու համար:

Այս փուլում պրոբացիայի ծառայությունը կարող է նաև ներկայացնել զեկույցներ վերահսկողության պայմանների փոփոխության անհրաժեշտության մասին, ինչպես պայմանների խախտումների դեպքում՝ պատժի կրման հարցերի վերաբերյալ:

Տոկիոյի կանոնները նախատեսում են դատավճռի կայացումից հետո նույնպես զեկույցի պատրաստում: Մասնավորապես, Կանոնների համաձայն՝ իրավասու մարմինը վճիռը կայացնելուց հետո դատապարտյալի սոցիալական վերաինտեգրումը խթանելու համար պետք է իր տրամադրության տակ այլընտրանքներ ունենա:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատապարտյալի ներման խնդրագրերի քննման և դատապարտյալի ներման հարցը ՀՀ Նախագահի Սահմանադրական իրավունքն է և չկան համապատասխան չափորոշիչներ, ուստի այս փուլում՝ դատապարտյալի պատժից լիովին կամ մասնակի ազատման դեպքում, պրոբացիայի ծառայության լիազորությունները կարող են ներառել զուտ խորհրդատվական զեկույցների տրամադրումը:

4) Հետպատժյա փուլում պրոբացիայի բնութագիրը. Հետպենիտենցիար պրոբացիան ենթադրում է պատժի կրումից հետո մինչև դատվածության մարումը կամ օրենքով սահմանված կարգով դրա հանումը պրոբացիայի ծառայության կողմից իրականացվող գործառույթները: Տվյալ փուլում պրոբացիայի ծառայության կողմից իրականացվում է՝ զեկույցի պատրաստում և ներկայացում դատվածությունը հանելու առնչությամբ որոշում կայացնելու իրավասություն ունեցող մարմնին:

Պրոբացիայի ծառայությունն իր մեջ կարող է ընդգրկել նաև այլ գործառույթներ այս փուլում, ինչպես օրինակ մասնավոր մեղադրանքի գործերով մեդիացիայի անցկացումը և տուժողի ու հանցագործություն կատարած անձի միջև միջնորդությունը:

Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության պրոբացիայի ապագա ծառայության կողմից հետպենիտենցիար պրոբացիայի փուլում պետք է իրականացվի պատժից պայմանականորեն ազատված, պատժից պայմանական վաղաժամկետ ազատված, պատիժը կրած անձանց նկատմամբ վերահսկողություն, նրանց օժանդակության և աջակցության տրամադրում, սոցիալական աշխատանքների իրականացում՝ վերասոցիալականացումն ապահովելու նպատակով, ինչպես նաև զեկույցի պատրաստում և ներկայացում դատվածությունը հանելու առնչությամբ որոշում կայացնելու իրավասություն ունեցող մարմինին: Պատժից ազատ արձակված անձանց համար այս փուլում պրոբացիայի ծառայությունը պետք է ստեղծի և կիրառության մեջ դնի տարբեր կրթական, սոցիալ-հոգեբանական և բարոյագիտական ծրագրեր:

5) Անչափահասների նկատմամբ իրականացվող պրոբացիոն գործառույթների առանձնահատկությունները. ՀՀ պրոբացիայի ծառայությունում պետք է գործի անչափահասների գործերով հատուկ մասնագիտացում ունեցող մասնագետներ՝ պրոբացիոն բնույթի ծրագրերում անչափահաս օրինախախտների սոցիալական, իրավական, հոգեբանական և մտավոր առանձնահատկությունները հաշվի առնելու նպատակից ելնելով: Նկատի ունենալով անչափահասների հետ աշխատանքների առանձնահատկությունները՝ պրոբացիայի ծառայությունը պետք է սերտ համագործակցի խնամակալության և հոգաբարձության մարմինների, սոցիալական և անչափահասների հետ աշխատանքներում ներգրավված այլ պետական և մասնավոր կազմակերպությունների հետ՝ հատկապես տարբեր վերականգնողական, սոցիալական ծրագրեր իրականացնելու առումով:

Անչափահասների նկատմամբ կիրառվող պրոբացիոն գործառույթների իրականացման առումով կիրառվում են որոշակի առանձնահատկություններ, որոնցից գլխավորներից են՝ զեկույցների պարտադիր տրամադրումը բոլոր փուլերում և ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառումը:

Չեկույցները պատրաստելու առանձնահատկություններից են՝

ա. պրոբացիայի ծառայության ծառայողը պարտադիր կարգով հարցազրույց է ունենում ոչ միայն անչափահասի, այլ նաև նրա օրինական ներկայացուցչի հետ, անչափահասի հետ հարցազրույցին պարտադիր պետք է ներկա լինի օրինական ներկայացուցիչը,

բ. պրոբացիայի ծառայության ծառայողը դիմում է համապատասխան խնամակալության և հոգաբարձության մարմին՝ անչափահասի վերաբերյալ տեղեկատվություն և տվյալներ ստանալու, ինչպես նաև նման մարմինների հետ անչափահասի առնչությունը պարզելու համար,

գ. զեկույցում անչափահասի անձի բնութագիրը, ընտանեկան դրությունը, առողջական վիճակը և այլ մանրամասներ ներկայացնելուց բացի, պետք է ներկայացվեն տվյալներ կրթական հաստատություններում անչափահասի առաջադիմության և վարքի վերաբերյալ, նրա հակումները, նախասիրությունները,

դ. մինչև պատժի նշանակումը տրամադրվող զեկույցը պարունակում է նաև եզրակացություն անչափահասին քրեական պատասխանատվությունից ազատելու և նրա նկատմամբ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու հնարավորության վերաբերյալ և այդ դեպքում նրա վրա դրվելիք պարտավորությունների մասին:

ՀՀ քրեական օրենսգրքի 91-րդ հոդվածի համաձայն՝ առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անչափահասի՝ դատարանի կողմից քրեական պատասխանատվությունից ազատվելու դեպքում, անչափահասի նկատմամբ դատարանի կողմից նշանակված դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներից հսկողության իրականացումը և ժամանցի ազատության սահմանափակման և վարքագծի նկատմամբ հատուկ պահանջների պահպանման վերահսկողությունը պետք է վերապահվեն պրոբացիայի ծառայությանը՝ հաշվի առնելով այս ծառայության բնույթն ու նշանակությունը:

Անչափահասի նկատմամբ հսկողության իրականացումը, ժամանցի ազատության սահմանափակման և վարքագծի նկատմամբ հատուկ պահանջների պահպանման վերահսկողությունը պետք է զուգորդվեն անչափահասի՝ տարբեր ուսումնադաստիարակչական, սոցիալ-հոգեբանական, վերականգնողական ծրագրերում ակտիվ ներգրավմամբ: Պրոբացիայի ծառայությունը պետք է նաև, այլ

կառույցների հետ համագործակցության միջոցով, ակտիվորեն աջակցի անչափահասին զբաղվածությանը կամ հետագա կրթությանը վերաբերող հարցերը լուծելիս:

Պրոբացիայի ծառայության կողմից ներկայացված գեկույցի հիման վրա դատարանն անչափահասի նկատմամբ կարող է նշանակել դաստիարակչական բնույթի հարկադրանքի այլ միջոցներ:

Եթե անչափահասը դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցից պարբերաբար խուսափում է, ապա պրոբացիայի ծառայության միջնորդությամբ նյութերն ուղարկվում են դատարան՝ նշանակված միջոցը վերացնելու և անչափահասին համապատասխան պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար:

ԳԼՈՒԽ 13. ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հայաստանում պրոբացիայի արդյունավետ համակարգ ունենալու համար անհրաժեշտ է մշակել և գործողությունների համար հիմք ընդունել Պրոբացիայի ծառայության ներդրման հայեցակարգ (սույն հայեցակարգը), որն էլ կհամարվի ծառայության ներդրման ուղղությամբ կատարվելիք աշխատանքների սկիզբ: Միաժամանակ, անհրաժեշտ է, հիմք ընդունելով նշված (կամ սույն) հայեցակարգը, մշակել հայեցակարգից բխող գործողությունների ծրագիր, որտեղ շարադրված կլինեն պրոբացիայի ծառայության՝ ներդրման համար անհրաժեշտ 2013-2015 թվականների առաջնայնությունները:

Միաժամանակ, չնայած սույն փաստաթղթով ներկայացված պրոբացիայի ծառայության գործառույթների լայն շրջանակին, ծառայության ստեղծումը և գործառույթների ներդրումը պետք է իրականացվի փուլային կարգով, որը կապահովագրի ծառայությանը հնարավոր խնդիրներից և դժվարություններից, ինչպես նաև կերաշխավորի ծառայության առջև դրված նպատակների և խնդիրների արդյունավետ իրականացումը: Նկատի է առնվում նաև ծառայության ներդրման ուղղությամբ կատարվելիք աշխատանքների ծավալն ու բազմազանությունը, ինչպես նաև դրա համար անհրաժեշտ ռեսուրսների անբավարարությունը (ծախսերի միաժամանակյա իրականացման դեպքում): Նախատեսվում է այդ աշխատանքները

բաժանել երեք՝ նախապատրաստական, ծառայության ստեղծման և ծառայության գործունեության ամբողջականացման (բոլոր լիազորությունների իրականացման) փուլերի:

1) Նախապատրաստական փուլի (մինչև 2014թ. հունվար) հիմնական խնդիրն է դրա ավարտին ունենալ Հայաստանում պրոբացիայի ծառայության ստեղծման համար անհրաժեշտ բոլոր իրավական և գործնական նախադրյալները, այդ թվում՝

ա. պրոբացիայի ծառայության ստեղծումը մեկնարկելու համար իրավասու մարմինների կողմից հաստատված անհրաժեշտ գործողությունների ծրագրի առկայությունը,

բ. իրավական համապատասխան ակտերի ընդունումը ՀՀ Ազգային ժողովի և ՀՀ կառավարության կողմից,

գ. աշխատակազմի ներգրավմանն ուղղված աշխատանքների կազմակերպումը,

դ. պետական միջոցներից ֆինանսավորման իրավական ապահովմանն ուղղված աշխատանքների և

ե. կազմակերպչական բնույթի աշխատանքների իրականացումը: Հայաստանում պրոբացիայի ծառայություն ստեղծելուն ուղղված աշխատանքների արդյունավետությունը գլխավորապես պայմանավորված է այն հանգամանքով, թե դրանք որքանով են ճիշտ պլանավորված իրենց բովանդակությամբ, հաջորդականությամբ և ժամանակի մեջ: Ծառայության ներդրման համար անհրաժեշտ՝ սույն հայեցակարգից բխող գործողությունների ծրագիրը պետք է համաձայնեցված լինի պրոբացիոն գործառույթներին առնչվող պետական բոլոր իրավասու մարմինների հետ և ընդունելի լինի նրանց համար: Միաժամանակ, այդ մարմինների՝ պրոբացիայի ծառայության ստեղծելուն ուղղված աշխատանքները ևս պետք է հստակ և ժամանակին լինեն, որպեսզի համահունչ լինեն ծրագրի ամբողջական և համաժամանակյա լինելու տեսանկյունից:

Նախատեսվում է, որ Պրոբացիայի ծառայության ներդրման հայեցակարգից բխող գործողությունների ծրագիրը հավանության կարժանացվի կամ կհաստատվի համապատասխանաբար կամ ՀՀ կառավարության նիստի արձանագրային որոշմամբ, կամ ՀՀ արդարադատության նախարարի հրամանով:

Հայաստանում պրոբացիայի ծառայություն ստեղծելու համար կպահանջվի մշակել և ընդունել «Պրոբացիայի ծառայության մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև կատարել համապատասխան փոփոխություններ ու լրացումներ ՀՀ քրեական, ՀՀ քրեական դատավարության և ՀՀ քրեակատարողական օրենսգրքերում: Աշխատանքների իրականացման ժամանակ հնարավոր է նաև այլ օրենսդրական ակտերում փոփոխություններ ու լրացումներ կատարելու անհրաժեշտություն առաջանա: Բոլոր այս օրենսդրական բնույթի աշխատանքները պետք է նախատեսվեն պրոբացիայի ծառայության ներդրման հայեցակարգից բխող գործողությունների ծրագրով: Վերոհիշյալ իրավական ակտերի ընդունումը կամ հաստատումն ինքնին ենթադրում է ծառայության տեսականորեն ստեղծում այն հաշվով, որ դրանք գործողության մեջ կդրվեն 2014թ. հունվարի 1-ից:

«Պրոբացիայի ծառայության մասին» ՀՀ օրենքով պետք է հստակ սահմանվեն ծառայության խնդիրները, լիազորությունները, կառուցվածքը, պրոբացիայի ծառայության ծառայողի իրավական և սոցիալական ապահովման պետական երաշխիքները, նյութատեխնիկական ապահովման, ֆինանսավորման և գործունեության վերահսկման կարգը, ինչպես նաև դրանց հետ առնչվող այլ իրավահարաբերություններ: Ինչպես նշվել է, կլինեն նաև վերոհիշյալ օրենքից բխող իրավական այլ ակտերի ընդունման անհրաժեշտություն ևս, մասնավորապես ՀՀ կառավարության որոշմամբ կկանոնակարգվեն համապատասխան կառավարչական հիմնարկի ստեղծումը և դրա հետ կապված հարաբերությունները, ծառայության գործունեությանը վերաբերող որոշակի խնդիրներ, ինչպես նաև այլ հարաբերություններ:

Պրոբացիայի ծառայության գործունեության արդյունավետության գրավականներից է համապատասխան որակավորմամբ, մասնագիտական կարողություններով ու գիտելիքներով զինված արհեստավարժ անձնակազմի ներգրավումը: Պրոբացիայի ծառայության անձնակազմը պետք է ապացուցի իր մոտիվացիան և միմյանց ու այլ հաստատությունների հետ համագործակցելու պատրաստակամությունը՝ պրոբացիայի ծառայության նպատակներին հասնելու առումով: Անհրաժեշտ կլինի համապատասխան իրավական ակտով սահմանել պրոբացիայի ծառայության աշխատակազմի՝ ծառայության անցնելու և պաշտոնում

նշանակվելու ընթացակարգերը (պետք է պահանջվի բակալավրի կոչում)՝ սահմանելով համապատասխան մասնագիտությունն ունենալու պահանջները, նախնական վերապատրաստումները, մինչև վեցամսյա փորձաշրջանը, աշխատանքային առաջխաղացումը, ներառյալ՝ վերապատրաստումը (նախնական և շարունակական), աշխատանքի պայմանները (լիազորությունների շրջանակը):

Նախատեսվում է, որ պրոբացիայի ծառայության ներդրման տվյալ փուլի ավարտին հավաքագրված կլինի արդեն իսկ 2014 թվականի հունվարից ծառայության անցնելու պատրաստ և համապատասխան վերապատրաստում անցած նվազագույն թվաքանակով անձնակազմ:

Հայաստանում պրոբացիայի ծառայության ստեղծումն ուղղակիորեն կապված է ֆինանսական համապատասխան ապահովմամբ: Այդ իսկ պատճառով տվյալ փուլում անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել 2014 թվականի համար բյուջետային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերում համապատասխան կարգավորումներ ունենալու՝ պետական բյուջեի միջոցներից պրոբացիայի ծառայության սահմանված կարգով ֆինանսավորման ուղղությամբ: Միաժամանակ, անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանել նաև ծառայության ֆինանսավորման արտաբյուջետային հնարավորությունները:

Պրոբացիայի ծառայության ներդրման համար կարևորվում են նաև կազմակերպչական բնույթի աշխատանքները, այն իմաստով, որ ծառայությունը պետք է ներդրվի այսօրվա՝ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության կազմում գործող այլընտրանքային պատիժների կատարման ստորաբաժանումների բազայի հենքով: Իսկ դա իր հերթին նշանակում է, որ առկա նյութատեխնիկական բազան պետք է համապատասխանեցվի նախատեսված կարիքներին, ինչպես նաև այդ ամբողջը նախապատրաստվի պրոբացիայի ծառայությանը փոխանցելու համար:

2) Ծառայության ստեղծման փուլում (2014 թվականի հունվարից 2015 թվականի հունվար) նախատեսվում է պրոբացիայի ծառայության գործնականում ստեղծում, քանի որ համապատասխան իրավական ակտերի ընդունումը կամ հաստատումը պետք է իրականացված լինի նախապատրաստական փուլում, որի արդյունքում

համապատասխան իրավական ակտերը գործողության մեջ կդրվեն 2014թ. հունվարի 1-ից:

Օրենսդրորեն ամրագրված կլինեն նաև անցումային համապատասխան դրույթեր, որոնց համաձայն կկարգավորվեն այսօրվա՝ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության կազմում գործող այլընտրանքային պատիժների կատարման ստորաբաժանումների տնօրինման տակ եղած գործերի փոխանցման կարգը պրոբացիայի նորաստեղծ ծառայությանը:

Ծառայության հին ու նոր գործառույթների լիարժեք իրականացման նպատակով կհաստատվի համապատասխան համագործակցություն այլ իրավասու մարմինների և կազմակերպությունների հետ կամ կկատարելագործվի առկա համագործակցությունը: Մասնավորապես, համընդհանուր հետաքրքրություն ներկայացնող համայնքային աշխատանքների մասով՝ պետք է կապ հաստատվի և խորացվի տարբեր մասնավոր և հանրային հաստատությունների հետ: Սա պրոբացիայի ծառայությանը կօգնի դյուրինացնել հանցագործություն կատարած անձանց հանրային աշխատանքներում ներգրավելու աշխատանքները:

Միաժամանակ, այս փուլում անհրաժեշտ է զարգացնել համագործակցությունը նաև մասնագիտական ուսուցում ապահովող հաստատությունների հետ՝ հանցագործություն կատարած անձանց որպես առանց վարձավճարի աշխատակից վերցնելու նպատակով: Թմրամոլների ու գինեմոլների մասով՝ պրոբացիայի ծառայության աշխատակիցները կարող են վերականգնողական կենտրոնների ու նրանց մասնագետների հետ համատեղ աշխատանքային քննարկումներ ու վերապատրաստումներ կազմակերպել, ստեղծել ուսումնամեթոդական ծրագրեր:

Ծառայության ստեղծման փուլում նախատեսվում է նաև զարգացնել առկա նյութատեխնիկական բազան:

3) Ծառայության գործունեության ամբողջականացման փուլում (2015 թվականի հունվարից սկսած) նախատեսվում է կյանքի կոչել այն լիազորությունների իրականացումը, որոնք հնարավոր չի եղել իրականացնել ծառայության ստեղծման փուլում: Մասնավորապես, խոսքը վերաբերում է էլեկտրոնային վերահսկողությանը (մոնիթորինգ), ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հնարավոր

ավելի ուշ գործողության մեջ դնելու հետ կապված չիրականացված լիազորություններ:
Հնարավոր տարբերակներից է նաև այն, որ էլեկտրոնային մոնիթորինգի ծառայության
համար վճարելու (ամբողջությամբ կամ մասնակի) է իրավախախտում կատարած անձը
(ծախսը մեկ անձի հաշվարկով օրական կազմելու է մոտավորապես 2000 ՀՀ դրամ):
Վճարումը կատարվելու է դատարանում՝ խափանման միջոցը ընտրելուց առաջ, եթե
իրավախախտը համաձայն է, որ իր նկատմամբ կիրառվի էլեկտրոնային մոնիթորինգ:

ԲԱԺԻՆ 5. ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

ԳԼՈՒԽ 14. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ.

Տարբեր երկրներում քրեակատարողական կամ բանտային համակարգերի կազմակերպան ոլորտում նկատվում են էական տարբերություններ (սույն բաժնում վերլուծվում է միայն քրեակատարողական ծառայության, այլ ոչ թե ամբողջ համակարգի կառավարմանը վերաբերող խնդիրները, քանի որ ենթադրվում է, որ պրոբացիայի ծառայության խնդիրներն ի սկզբանե կկարգավորվեն սույն հայեցակարգով նախատեսված ուղղություններով): Որոշ երկրներում գործում են մի քանի բանտային համակարգեր (օրինակ՝ դաշնային, նահանգի, շրջանի կամ մարզի բանտային համակարգ): Չնայած դրան, երկրների մեծամասնությունում գործում են միասնական բանտային համակարգեր, որոնց շրջանակում տեղական և տարածաշրջանային բանտային վարչությունները կամ ստորաբաժանումները ենթարկվում են կենտրոնական բանտային կառավարմանը: Առավել արդյունավետ են համարվում բանտային կառավարման այն համակարգերը, որոնց դեպքում կա հստակ ազգային օրենսդրությամբ սահմանված քաղաքականություն՝ ուղղված միջազգային և ազգային չափանիշների պահպանմանը, և դրա հետ մեկտեղ այդ քաղաքականությունը բավականին ճկուն է տեղական և տարածաշրջանային բանտային ստորաբաժանումների կողմից կիրառվելու համար: Այս կապակցությամբ, կարևորվում են այնպիսի հարցեր, ինչպիսիք են.

1) եթե կա բանտային ստորաբաժանման կազմակերպված սխեմա, ինչպիսի՞ կառավարման մակարդակներ են սահմանված (առավել նպատակահարմար կլիներ բանտային համակարգի ներսում որոշել դեպարտամենտների կամ ծառայությունների տարբեր մակարդակներ): Ինչպիսի՞ ծառայություններ կան և որոնք են դրանց լիազորությունները,

2) համակարգը հանդիսանում է կենտրոնամետ, թե՞ կենտրոնախույս: Որքնո՞վ են ինքնուրույն (եթե առկա են) տեղական և տարածաշրջանային բանտային վարչությունները: Ինչպիսի՞ հարցեր նրանք կարող են լուծել ինքնուրույն,

3) արդյո՞ք վերջին ժամանակահատվածում տեղի են ունեցել կառավարման համակարգի կամ կառուցվածքի փոփոխություններ և ինչու՞մ են դրանք կայացել:

4) ինչպե՞ս է ֆինանսավորվում բանտային կառավարումը: Բյուջետային ինչ՞ ընթացակարգ է սահմանված օրենքով և ով՞ է իրականացնում բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողություն:

Ինչպես ցանկացած համակարգի, այնպես էլ քրեակատարողական ծառայության կառավարման հասկացությունն իր մեջ ներառում է տարբեր մակարդակների սոցիալ-տնտեսական համակարգերի ու մոդելների ստեղծումը, հսկումը և մաքսիմալ արդյունավետ օգտագործումը: Այս պարագայում ևս կառավարման հիմնական գործառույթներն են՝ պլանավորումը, կազմակերպումը հիմնավորումը, հաղորդակցումը, մշակման ու որոշումների ընդունման գործընթացները և վերահսկողությունը: Այս գործառույթների փոխադարձ կապը պայմանավորված է նրանով, որ հնարավոր չէ կառավարել անկազմակերպ համակարգը, այսինքն՝ որքանով ավելի լավ է կազմակերպված տվյալ մարմինը կամ կազմակերպությունը, այնքանով այն ավելի քիչ կարիք ունի ղեկավարման: Կառավարման հասկացությունն իր մեջ ընդգրկում է նաև տվյալ համակարգի ղեկավարումը և տարբեր մակարդակների ղեկավարների ղեկավարումը ևս:

Ժամանակակից կառավարումը յուրահատուկ միջոց, գործառույթ ու գործիք է կառավարման ենթակա համակարգի կողմից արդյունք ստանալու համար: Այս գերխնդրի կատարումը պահանջում է լայնացնել կառավարման պատասխանատվության դաշտը, որի մեջ ընդգրկվում են կառավարման ենթակա համակարգի, դրա գործունեության և ստացվող արդյունքների վրա ազդող բոլոր գործոնները՝ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին, ինչպես վերահսկման ենթակա, այնպես էլ լիովին անկախ: Այս հանգամանքը պահանջում է ռազմավարական մոտեցում կառավարմանը և՛ ուղղահայացով (ստորակարգման բոլոր մակարդակներում), և՛ հորիզոնական (գործառութային ոլորտների կառավարում), ռազմավարությունը բոլոր աշխատակիցների գործն է: Մարդկային գործոնը դառնում է հաջող գործունեության առանցքային գործոնը, ինչը արտացոլում է մեր օրերում ձևավորված կառավարման սկզբունքներում, ինչպիսիք են՝

1) հավատարմություն աշխատողների հանդեպ,

2) 100 % պատասխանատվություն (որպես հաջող կառավարման պայման),

3) հաղորդակցություններ, որոնք ընդգրկում են կառավարման ենթակա համակարգը վերևից՝ ներքև, ներքևից՝ վերև և հորիզոնական,

4) կառավարման ենթակա համակարգում առկա մթնոլորտը, որը նպաստում է աշխատողների ընդունակությունների բացահայտմանը (բոլորի ուսուցումը ամեն տեղ և ամեն ժամ),

5) ժամանակին արձագանք արտաքին միջավայրի փոփոխություններին,

6) մարդկանց հետ աշխատանքի մեթոդներ, որոնք ապահովում են բավարարվածություն աշխատանքից: Անցում ավտորիտար ղեկավարման ձևից լիդեռությանը (առաջնորդությանը),

7) «կառավարիչների» անմիջական մասնակցությունը խմբերի աշխատանքների բոլոր փուլերում, որպես համաձայնեցման և ամբողջականության պայման,

8) կատարողների, ղեկավարների և այլոց հաղորդակցման հետ փոխադարձ կարողություն,

9) աշխատանքային էթիկա,

10) ազնվություն և վստահություն մարդկանց հանդեպ,

11) կառավարման հիմնարար հիմունքների կիրառումը աշխատանքի մեջ,

12) կառավարման ենթակա ծառայության տեսակետը, այսինքն՝ հատուկ պատկերացումն այն մասին, թե ինչպիսին այն պետք է լինի,

13) անհատական աշխատանքի որակ, չընդհատվող ինքնակատարելագործում:

Այնուամենայնիվ, քրեակատարողական ծառայությունում գործնականում առկա կառուցակարգերն անհրաժեշտ են համապատասխանեցնել դասական չափորոշիչներին:

Հստակեցման անհրաժեշտություն է առկա քրեակատարողական ծառայության կառավարման տարրերի առումով, մասնավորապես՝ եթե ոչ օրենսդրորեն, ապա գործնականում պետք է հստակ լինի քրեակատարողական ծառայության առաքելությունը, առավել ևս օրենսդրորեն՝ նպատակները և խնդիրները: Հստակ սահման դնել այս երեք մակարդակների միջև հաճախ հնարավոր չէ, սակայն ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ քրեակատարողական ծառայության առաքելությունը ենթադրում է որոշակի ուղղությամբ աշխատելու ձգտումը, նպատակը՝

որոշ կոնկրետ արդյունքներին հասնելը, իսկ խնդիրներն արդեն ունեն կոնկրետ գնահատական և դրանց հասնելու ժամկետներ:

Անհրաժեշտ է խուսափել գործառության կրկնություններից ենթակայության կազմակերպական սխեման և կառուցվածքը սահմանելիս: Մասնավորապես, նման սահմանազատումն օրենսդրորեն իրականացնելիս անհրաժեշտ է հստակեցում մտցնել թե նախարարության և քրեակատարողական ծառայության միջև, այնպես էլ այլ գերատեսչությունների ու կազմակերպությունների առումով:

Քրեակատարողական ծառայության գործունեությունը որպես հարաբերականորեն ինքնուրույն, սակայն միասնական կենտրոնացված կառույց, պահանջում է տարբեր ստորաբաժանումների, ղեկավար մարմինների իրավասությունների շրջանակների վերանայում: Քրեակատարողական հիմնարկի գործառության վերակազմակերպումն անհրաժեշտ է համատեղել կազմակերպչական կառուցվածքը կատարելագործելու հետ:

Ներկայումս, պահպանելով քրեակատարողական ծառայության ղեկավարման կենտրոնացված համակարգը՝ երկրի սոցիալ-տնտեսական վիճակի կարգավորման, օրենսդրության զարգացման հետ միաժամանակ անհրաժեշտ է իրականացնել լիազորությունների մասնակի ապակենտրոնացում, որով կավելանա և կամրապնդվի համակարգի հիմնարկների ինքնուրույնությունը, այսինքն՝ շատ խնդիրներ հիմնարկը կլուծի ինքնուրույն: Իհարկե, ծառայության կառավարման կենտրոնական մարմնի և հիմնարկների իրավասությունները ևս հստակ կսահմանազատվեն: Կվերանայվի նաև քրեակատարողական ծառայության կառավարման կենտրոնական մարմնի կարգավիճակը: Ասվածը նաև վերաբերում է քրեակատարողական համակարգի կենտրոնական մարմնի անձնակազմի հաստիքների վերանայմանը և տեղաբաշխմանը, ինչպես նաև կառուցվածքային ստորաբաժանումներում այդ մարմնի գործառույթների հնարավորին խտացմանը (այսինքն՝ ներկայիս տարբեր կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթների հնարավոր միավորում մեկ ստորաբաժանման լիազորություններում):

Լիազորությունների ապակենտրոնացման անհրաժեշտությունը վերաբերում է նաև հիմնարկի ներսում կատարվելիք կառավարման փոփոխություններին:

Մասնավորապես, խոսքը վերաբերում է հիմնարկներում բազմամասնագիտական խմբերի գործունեության ներդրմանը:

Անհրաժեշտ է նաև գործնականում սահմանել գործունեության արդյունավետության գնահատման ցուցանիշները՝ ներդնելով գործունեության չափման համակարգ:

Կառավարման երեք հիմնական գործառույթները՝ կառավարումը նրա արդյունավետության բարձրացման նպատակով, կառավարումը և աշխատանքի ու աշխատողների կառավարումը, պայմանավորված են աշխատանքի համալիր բնույթով: Տարբեր մակարդակներում կառավարողի առանձնահատկությունը պետք է կայանա նրանում, որ նա կարողանա միաժամանակ կատարել այս երեք գործառույթները: Ծառայության հիմնական նպատակներին և խնդիրներին համապատասխան, կառավարման գործառույթը ամենակարևորն է՝ միավորում է բոլոր գործառույթները:

Կառավարվող համակարգերի հիմնական առանձնահատուկ կատեգորիաներից մեկը դրանց բարդությունն է, որի աստիճանը որոշվում է համաբաղադրիչ տարրերի բազմազանությամբ և դրանց միջև հնարավոր փոփոխություններով: Անհնար է ստեղծել հասարակ ղեկավարման համակարգ, բարդ համակարգերը և պրոցեսները ղեկավարելու համար: Սրանից բխում է, որ առանձին մարդիկ ի վիճակի չեն կատարելու այն խնդիրները, որոնց բարդությունը գերազանցում է որոշակի աստիճան: Երբ այդ աստիճանը գերազանցված է, ղեկավարը չի հասկանում, թե ինչ է կատարվում շուրջը:

Կառավարման մեջ աճող բարդությունների մյուս պատճառը կապված է արտաքին միջավայրի փոփոխությունների արագության հետ: Արտաքին միջավայրի ազդեցությունը որոշիչ գործոն է կառավարման համակարգի ընտրության գործում: Որքան փոփոխությունները արագ են կատարվում արտաքին միջավայրում, այնքանով աճում է նրա հիմնախնդիրների բարդությունը: Այն պահին, երբ որոշումը գտնված է, իրադրությունը փոխվում է և պահանջում է նոր, սկզբունքորեն նոր լուծումներ:

ԳԼՈՒԽ 15. ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնք առկա են քրեակատարողական համակարգում ուղղակի կամ անուղղակի կապված են ծառայության կառավարման

համակարգի հետ: Նկատի ունենալով այն, որ ծառայության հիմնական նպատակներին և խնդիրներին համապատասխան, կառավարման գործառույթը ամենակարևորն է, այն միավորում է բոլոր գործառույթները: Կառավարել ինչ որ մի կառույց, նշանակում է գտնել օպտիմալ հավասարակշռությունը նրա տարբեր տեսակի պահանջմունքների և նպատակների միջև:

1) Կառավարման գործառույթների ոչ լիարժեք իրականացում. կառավարման հիմնական գործառույթներն են՝ պլանավորում, կազմակերպում, հիմնավորում, հաղորդակցում, մշակման և որոշումների ընդունման գործընթացներ և վերահսկողություն: Այս գործառույթների փոխադարձ կապը պայմանավորված է նրանով, որ հնարավոր չէ կառավարել անկազմակերպ համակարգը: Այս գործառույթների՝ տեսական և գործնական տեսանկյունից վերլուծությունները ցույց են տալիս, որ դրանց հետ կապված խնդիրները քիչ չեն՝

ա. պլանավորում՝ ամբողջական չեն ռազմավարական՝ երկարաժամկետ ծրագրավորման փաստաթղթերը (առկա են միայն ՄԺԾԾ և ենթակառուցվածքային բարեփոխումների հայեցակարգը),

բ. կազմակերպում՝ անհրաժեշտ է իրականացնել քրեաիրավական բազմաթիվ ինստիտուտների թե՛ իրավական, թե՛ գործնական կատարելագործում (օրինակ՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտ),

գ. հաղորդակցում՝ առկա են ոչ բավարար հաղորդակցման իրավական կարգավորումներ ու գործելակերպ պետական և տեղական ինքնակառավարման տարբեր մարմինների հետ (օրինակ՝ ռազմամոբիլիզացիոն և քաղաքացիական պաշտպանության, ինչպես նաև արտակարգ իրավիճակների ժամանակ անվտանգության ապահովման ոլորտներում այլ մարմինների հետ համագործակցության եզրերի օրենսդրորեն սահմանումը կամ համատեղ գործողությունների պլանները բացակայում են),

դ. մշակման և որոշումների ընդունման գործընթացներ՝ խիստ անհրաժեշտ է վերանայել այս առումով բոլոր իրավական կարգավորումները, ինչպես նաև գործնական դրվածքները՝ իրավասությունների ապակենտրոնացման նպատակով,

ե. վերահսկողություն՝ այն իրականացնելու համար առկա անձնական ռեսուրսները բավարար չեն, միաժամանակ բացակայում են ուսումնասիրություններ կատարելու համար անհրաժեշտ «աշխատանքային գործիքները»:

Կառավարման համակարգված մոտեցումը հիմնվում է այն բանի վրա, որ ամեն մի կառավարման ենթակա համակարգ ներկայացնում է մասերից կազմված համակարգ, որոնցից յուրաքանչյուրը օժտված է սեփական նպատակներով: Ղեկավարը կառավարման որոշումներ ընդունելիս պետք է ելնի նրանից, որ համակարգի ընդհանուր նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է դիտարկել այն որպես միասնական համակարգ: Ընդ որում՝ անհրաժեշտ է գնահատել բոլոր մասերի ներգործությունը և միավորել այնպիսի հիմունքների վրա, որը թույլ կտա համակարգն ամբողջովին և արդյունավետ հասնել իրենց նպատակներին (բոլոր ենթահամակարգերի նպատակներին հասնելը ցանկալի է, սակայն, միշտ անիրականալի):

2) Կառավարման համակարգի բաղադրիչների ոչ լիարժեքություն. քրեակատարողական ծառայության կառավարման համակարգն իր մեջ ներառում է համապատասխան բաղադրիչներ՝ իր առջև դնելով և լուծելով փոխկապակցված խնդիրների համալիր, ինչի համար էլ կառավարման համակարգում ստեղծվում են մի քանի ենթահամակարգեր, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալները. ծառայության կառավարում, անձնակազմի կառավարում, ֆինանսական և ներդրումային կառավարում, նախագծերի, նորամուծական և ռազմավարական կառավարում, որակի և ռիսկերի կառավարում, տեղեկատվական կառավարում: Թվարկվածներն իրենց մեջ ևս պարունակում են բազմաթիվ չլուծված խնդիրներ, մասնավորապես՝

ա. ծառայության կառավարում՝ անհրաժեշտ է վերանայել ծառայության կենտրոնական մարմնի և քրեակատարողական հիմնարկների միջև փոխհարաբերությունները՝ ապակենտրոնացնելով լիազորությունները, քանի որ ներկայիս իրավիճակը խեղաթյուրվել և արդեն իսկ անարդյունավետ է (ըստ ԱՄՆ պետական դեպարտամենտի թմրանյութերի դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բաժնի քրեական արդարադատության և աջակցության հարցերով գործընկերությունների գրասենյակի ուղղիչ հիմնարկների հարցերով թիմի

կողմից 2011թ. հոկտեմբերին կատարված քրեակատարողական համակարգի գնահատման և ծրագրային առաջարկությունների),

բ. անձնակազմի կառավարում՝ առկա են հիմնախնդիրներ կադրերին ներկայացվող պահանջների (անհրաժեշտ է համապատասխան իրավական կարգավորումները և գործնականում առկա կադրերը վերանայել), կադրերով պակաս համալրվածության, կադրերի պատրաստման (մինչև պաշտոնի նշանակվելն անցնող փորձնակության եղանակը բավարար չէ) և վերապատրաստման (նեղ մասնագիտացումները նորմալ չեն կազմակերպվում) հետ կապված:

Միաժամանակ, ծառայությունում գործող տարբեր կարգավիճակներ ունեցող ծառայողների թվաքանակի բաշխվածությունը հանգեցնում է սխալ ռազմավարության (<< արդարադատության նախարարության համակարգում գործող «<< արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ-ը պետք է ստեղծի ոլորտային ուսումնական ձեռնարկներ, ինչպես նաև կազմի և իրականացնի նեղ մասնագիտացված ու հեռավար վերապատրաստման համապատասխան ծրագրեր),

գ. ֆինանսական և ներդրումային կառավարում՝ առկա է քրեակատարողական և քաղաքացիական հատուկ ծառայողների նյութական բավարարման խնդիր, այսինքն՝ ցածր են վերջիններիս աշխատանքային վարձատրությունները, որով պայմանավորված աշխատանքը տվյալ ծառայությունում գրավիչ չէ (չնայած այն հանգամանքին, որ «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքով քրեակատարողական ծառայողների համար նախատեսված են տարաբնույթ սոցիալական երաշխիքներ):

Քրեակատարողական ծառայությունում առկա է նաև կալանավորված անձանց և դատապարտյալների թերսնուցման խնդիր: Սննդի և ընդհանրապես նյութատեխնիկական ապահովման հետ կապված հարաբերությունները կանոնակարգված են ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով, սակայն դրանք չեն պահպանվում: Տվյալ խնդրի լուծումը ոչ միայն կրում է ֆինանսական բնույթ, այլ նաև ուղղակիորեն կապված է քրեակատարողական հիմնարկների գերբնակեցման խնդրի հետ, որն էլ իր հերթին հանգեցնում է կառավարման որոշակի խնդիրների: Այդ իսկ պատճառով, գերբնակեցման խնդրի կարգավորմանը զուգահեռ կնվազի նաև

կալանավորված անձանց և դատապարտյալների թերսնուցման խնդրի ծավալը: Ներդրումային իմաստով՝ պետք է հավատարիմ մնալ սույն հայեցակարգի իրագործմանը,

դ. նախագծերի, նորամուծական և ռազմավարական կառավարում՝ անհրաժեշտ է մշակել ծառայության հետագա բարեփոխումների հայեցակարգ կամ ռազմավարական այլ փաստաթուղթ, ինչպես նաև ապահովել ծառայության իրավական բարեփոխումների շարունակականությունը, որպիսին է սույն հայեցակարգը,

ե. որակի և ռիսկերի կառավարում՝ անհրաժեշտ է կատարելագործել գրեթե գոյություն չունեցող կատարողականի հաշվետվողականության մեխանիզմները,

զ. տեղեկատվական կառավարում՝ ներկայումս գործող ենթակառուցվածքների բնականոն գործունեության ապահովման տեսանկյունից կարևորվում է նաև ոլորտի համակարգչայնացումը և գործառույթների ավտոմատացումը, որը պետք է կատարվի ինչպես առանձին գործառույթների (փաստաթղթաշրջանառություն, անձնակազմի հետ տարվող աշխատանք), այնպես էլ ամբողջ ծառայության գործառութային էլեկտրոնային կառավարման իմաստով, մասնավորապես՝ հատուկ եռաստիճան թույլտվության (օպերատիվ, անձնական գաղտնիք պարունակող և ոչ գաղտնի) համակարգչային տեղեկատվական և կառավարման ծրագրի ստեղծում: Այդ առումով անհրաժեշտ է ծառայությանն ապահովել որակապես նոր տեղեկատվական-վերլուծական հնարավորությամբ, ստեղծել նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների, հատուկ հաշվառման ավտոմատացված համակարգի և վիճակագրական տեղեկատվության ներդրման համար անհրաժեշտ պայմաններ, որոնք միաժամանակ կունենան տեղեկատվական անվտանգության պատշաճ մակարդակ:

3) Կառավարման համակարգի սկզբունքների խաթար վիճակ. քրեակատարողական ծառայությունը՝ իր հերթին լինելով կառավարման մի համակարգ, ունի իրեն հատուկ կառավարման սկզբունքներ: Չանդրադառնալով բոլոր սկզբունքներին, վերլուծությունների արդյունքում կարելի է առանձնացնել այդ սկզբունքներից մի քանիսը, որոնք լիարժեք չեն գործնական և (կամ) իրավական կարգավորման առումով, մասնավորապես՝

ա. աշխատանքի բաժանում՝ առաջին պահից թվում է, որ պետք է խնդիր չլինի այս առումով: Սակայն խնդիրն առկա է թե գործնական, և թե իրավական

կարգավորման առումով (օրինակ՝ կալանավորվածների կամ դատապարտյալների բուժմաս կամ ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ տեղաբաշխվելու, առավել ևս առողջապահական քաղաքացիական հաստատությունում գտնվելու հարցը գործնականում որոշվում է ոչ բժիշկների կողմից): Այս կապակցությամբ, ոչ միայն անհրաժեշտ է համապատասխան իրավական ակտերը լիազորությունների առումով հստակեցնել, այլ նաև՝ գործնականում վերացնել նման գործելաոճը,

բ. հրամայականության միասնականությունը՝ այս առումով ևս խնդիրն առկա է թե գործնական, և թե իրավական կարգավորման առումով (շատ հաճախ հրամանները տրվում են ոչ մեկ ղեկավարի կողմից, որը կարող է ստեղծել ավելորդ լարվածություններ և ռիսկեր, օրինակ՝ քրեակատարողական հիմնարկի որևէ բաժնի պետ կարող է հանձնարարություն ստանալ քրեակատարողական վարչության բաժնի պետի կողմից, որը որևէ կերպ վերադաս դիտվել չի կարող): Այս կապակցությամբ, ոչ միայն անհրաժեշտ է համապատասխան իրավական ակտերը իրավասությունների առումով հստակեցնել, այլ նաև՝ գործնականում վերացնել նման գործելաոճը,

գ. ղեկավարման միասնականությունը (մեկ ղեկավար և գործողությունների մեկ ծրագիր)՝ այս սկզբունքի գաղափարը կայանում է նրանում, որ բացակայում է ընդհանուր նպատակի ընկալումը և աշխատանքի ու գործելակերպի մոտիվացիան:

Առանձնակի անդրադարձ չի արվում կառավարման այնպիսի սկզբունքների առկայության ցածր աստիճանին, ինչպիսիք են անձնակազմի կայունությունը, կորպորատիվ ոգին, նախաձեռնողականությունը, ընդհանուրի բարօրության ձգտումը, էության ամբողջականության ընկալումը, առավել ևս փոխադարձ հարգանքն ու վստահությունը և մի շարք այլ սկզբունքներ:

4) Կառավարման համակարգի մեթոդաբանության խաթար վիճակ. քրեակատարողական ծառայությունը՝ իր հերթին լինելով կառավարման մի համակարգ, ունի կառավարման իր մեթոդաբանությունը: Չանդրադառնալով կառավարման բոլոր մեթոդներին, վերլուծությունների արդյունքում կարելի է առանձնացնել այդ մեթոդներից մեկը, որը լիարժեք չէ, մասնավորապես խոսքը վերաբերում է ենթակառուցվածքի կամ աշխատանքի մոդելավորմանը բանտում: Որպես ենթակառուցվածքի՝ նման աշխատանքներին սկիզբ դրվեց դեռևս ՀՀ արդարադատության նախարարության

«Արմավիր» քրեակատարողական հիմնարկի նախագծա-նախահաշվային աշխատանքների համար առաջադրվող տեխնիկական առաջադրանքով, իսկ այնուհետև ամրագրվեց ՀՀ կառավարության 2009թ. դեկտեմբերի 10-ի արձանագրային որոշմամբ հավանության արժանացած ՀՀ քրեակատարողական ծառայության ենթակառուցվածքային բարեփոխումների հայեցակարգով: Անհրաժեշտ է աշխատանքները շարունակել այդ ենթակառուցվածքում իրականացվելիք աշխատանքների ու գործընթացների (ներառյալ սոցիալ-հոգեբանական մթնոլորտի, սոցիալ-տեխնիկական համակարգի, միջանձնային հարաբերությունների և այլն) մոդելավորման ուղղությամբ, որը հնարավորություն կտա ավելի կատարելագործել կանոնակարգումներն ու գործնական լուծումները քրեակատարողական հիմնարկի տարբեր ստորաբաժանումների կողմից տարբեր գործառույթների համադրված իրականացման դեպքում:

ԳԼՈՒԽ 16. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈՒՍՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Քրեակատարողական ծառայության կառավարման համակարգի բարեփոխումների իրականացումն ինքնին պետք է իրականացվի ՀՀ արդարադատության նախարարության ընթացիկ աշխատանքների շրջանակներում: Այսինքն՝ դրանց իրականացման համար գլխավորապես անհրաժեշտ է իրականացնել իրավաստեղծ աշխատանք: Դա իր հերթին ենթադրում է, որ այդ աշխատանքների ֆինանսավորման համար առանձնակի հաշվարկներ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է: Թերևս ասվածից բացառություն է կազմում ծառայության տեղեկատվական և էլեկտրոնային համակարգի ստեղծման և ներդրման աշխատանքները, որոնք ներառում են ընթացակարգային երեք բաղադրիչ՝ իրենց ֆինանսական մոտավոր գնահատումներով.

1) համակարգի տեխնիկական առաջադրանքի կազմում և դրա հիման վրա ստեղծում՝ առավելագույնը 7000.0 հազ. դրամ,

2) համակարգի փորձնական ներդրում և ուսուցանում՝ առավելագույնը՝ 8000.0 հազ. դրամ,

3) համակարգի ներդրում ամբողջ ծառայությունում, որն իր հերթին ենթադրում է ծառայության նորովի համակարգչայնացում (քրեակատարողական յուրաքանչյուր հիմնարկին մոտ 10 համակարգիչ և 4 տպիչ)՝ մոտ 30000.0 հազ. դրամ:

Ամփոփ տեսքով՝ քրեակատարողական ծառայության կառավարման համակարգի բարեփոխումների իրականացումը ենթադրում է մոտ 45000.0 հազ. դրամ (չհաշված օրենսդրական լրամշակման աշխատանքների ֆինանսավորումը):

ԲԱԺԻՆ 6. ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈՒՍՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԼՈՒԽ 17. ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈՒՍՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քրեակատարողական համակարգում շարունակվում են վաղուց ի վեր սկսված բարեփոխումներին ուղղված աշխատանքները: Սակայն կան ոլորտներ, որոնք ժամանակի պահանջներին համապատասխանող նոր մոտեցումների և բարեփոխումների համապատասխան խորքայնության անհրաժեշտություն են առաջադրում: Սույն հայեցակարգով ամրագրվում են միայն այդ ոլորտների հետագա բարեփոխումների ուղղությունները գլխավորապես, քանի որ համապատասխան իրավական ակտերով հիմնականում ամրագրված են քրեակատարողական համակարգի այդ ոլորտներում անհրաժեշտ ռազմավարությունը:

1) Քրեակատարողական ծառայության կադրերի պատրաստումը և վերապատրաստումը. քրեակատարողական ծառայության գործունեության կատարելագործմանը զուգընթաց պետք է անցկացվի ծառայության կադրային ապահովմանը, նոր համոզմունքների տեր աշխատողների դաստիարակմանը, քրեակատարողական ծառայության աշխատողի հասարակական հեղինակության բարձրացմանն ուղղված միջոցառումների համալիր (իրավաբանական, մանկավարժական և այլ բնագավառների մասնագետների) մասնագիտական պատրաստվածության արմատական բարեփոխումներ: Նկատի է առնվում այն, որ քրեակատարողական համակարգի բարեփոխումներն ամբողջական կլինեն այն դեպքում, երբ առկա են նոր օրենսդրությանը քաջատեղյակ և այն պատշաճ կարգով

կիրառելու պատրաստ, տեղեկատվության օպերատիվ փոխանակման ժամանակակից միջոցներից օգտվելու հմտություններ ունեցող բարոյական և գործնական բարձր հատկանիշներով օժտված կադրեր:

Ցանկացած տեսակի մարմնի կամ կազմակերպության արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ է կոմպետենտ և բարձր որակավորում ունեցող անձնակազմ: Բանտային կառավարման ոլորտում այս խնդիրը նույնպես զբաղեցնում է առաջնային հորիզոնականներից մեկը: Կառավարել բանտ նշանակում է կառավարել մարդկանց՝ սկսած ամենախոցելի անձանցից, վերջացրած ամենավտանգավոր հանցագործներով: Անձնակազմը, որը պատասխանատու է բանտային կառավարման համար և աշխատում է տարատեսակ խնդիրներ ու կարիքներ ունեցող մարդկանց խմբի հետ, պետք է ունենա հատուկ ունակություններ և անհրաժեշտ նախապատրաստվածություն: Այդ անձնակազմը պետք է ապահովի բանտարկյալների պաշտպանությունը և անվտանգությունը, ինչպես նաև նրանց նկատմամբ ցուցաբերի մարդասիրական վերաբերմունք, հաշվի առնելով նրանցից յուրաքանչյուրի անհատական կարիքները: Ցավալի է, սակայն պետք է նշել, որ քրեակատարողական հիմնարկների անձնակազմերը երկրների մեծամասնությունում ունեն բավականին ցածր կարգավիճակ, իսկ այդ առումով Հայաստանի Հանրապետությունը բացառություն չէ: Բավարար ուշադրություն չի հատկացվում աշխատողներ ընտրելու և նրանց նախապատրաստելու խնդրին: Որպես կանոն, նման հիմնարկների աշխատողների աշխատավարձը բավականին ցածր է, ինչը սրում է դժգոհության ալիքը և շարժառիթ է հանդիսանում կոռուպցիոն երևույթների ձևավորման համար:

2) Բուժսպասարկման կազմակերպումը. Սույն հայեցակարգի կարևորագույն բաղադրիչներից է կալանավորված անձանց և դատապարտյալների բժշկական սպասարկման ոլորտը: Խնդիրն էլ ավելի կարևորվում է նոր ենթակառուցվածքների ստեղծմամբ, որի արդյունքում նախատեսվում է քրեակատարողական հիմնարկների նոր շենք-շինությունների առկայության դեպքում դադարեցնել բուժական ուղղիչ հիմնարկի գործունեությունը և, որպես ուղղիչ հիմնարկի տեսակ, նաև օրենսդրորեն չսահմանել:

Ոլորտում առկա խնդիրներից է այն, որ անհրաժեշտ է գործնականում որոշակիորեն մեծացնել բժիշկների անկախությունը, չնայած այն հանգամանքին, որ վերջիններս բժշկական հարցերի կապակցությամբ իրավական տեսանկյունից որևէ ենթակայություն չունեն:

Բուժսպասարկման ուղղությամբ անհրաժեշտ է ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ ուղղված ակոհոլամոլությունից, թմրամոլությունից և թունամոլությունից բուժման կարիք ունեցող, տուբերկուլոզի բաց ձևով, վեներական հիվանդություններով, մեղսունակությունը չբացառող հոգեկան խանգարումներով տառապող անձանց, ՄԻԱ վարակակիրների նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու կառուցակարգերին: Քանի որ գործնականում առկա են որոշակի աննպատակահարմարություններ կոնկրետ բժշկական միջամտությունների կապակցությամբ:

Զարգացման նոր աստիճանի պետք է բերել համագործակցությունն առողջապահական մարմինների հետ՝ վարակիչ և այլ հիվանդությունների կանխարգելման, ախտորոշման և բուժման ոլորտում: Խնդիրն էլ ավելի է խորանում, երբ անհրաժեշտ է գործնականում կրճատել և որպես սովորույթ վերացնել ամբուլատոր բուժսպասարկումը:

Եթե անցած տարիների ընթացքում կալանավորված անձանց և դատապարտյալներին դեղորայքով ապահովելու խնդիրը հիմնականում լուծվել է, ապա առանձնակի խնդիր է դեռևս բժշկական սարքեր-սարքավորումներով հագեցնելը, որը նախատեսվում է լուծել ենթակառուցվածքային բնույթի բարեփոխումներին զուգահեռ ստեղծվելիք քրեակատարողական հիմնարկներն անհրաժեշտ սարքեր-սարքավորումներով հագեցնելով:

3) Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ. անհրաժեշտ է որպես երկարաժամկետ ծրագիր պրոբացիայի ինստիտուտի ստեղծմանը զուգընթաց վերանայել այս ոլորտի պաշտոնատար անձանց իրավասությունները, իսկ որպես կարճաժամկետ ծրագիր՝ լուծել ոլորտի՝ ոչ մասնագիտական կադրերով (հիմնականում սոցիալական աշխատողների առումով) համալրված լինելու հարցը: Ինչ վերաբերում է քրեակատարողական հիմնարկներում իրականացվող իրավական աշխատանքներին,

ապա հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ-ում գործում է հանրային պաշտպանների ինստիտուտը, նախատեսվում է կալանավորված անձանց և դատապարտյալների իրավական հարցերի հետ կապված գործառույթն օրենսդրորեն փոխանցել հանրային պաշտպանի գրասենյակին, դրանով ապահովելով թե անկողմնակալություն ու անկախություն, թե որակյալ աշխատանք:

Պետք է պահպանվի և զարգացվի դատապարտյալների սոցիալական վերականգնմանն ուղղված գործունեությունը, ինչի համար անհրաժեշտ է մշակել սոցիալական և հոգեբանական աշխատանքների իրականացման համալիր ծրագիր, այն ուղղել կալանավորված անձանց և դատապարտյալների մոտ օգտակար հասարակական գործունեության ձգտում, օրենքի և հասարակությունում ընդունված վարքագծի կանոնների նկատմամբ հարգանք ձևավորելու գործին:

Գործնականում կհաստատվի համոզման և մոտիվացիոն մեթոդների առաջնայնությունը, կապահովվի դատապարտյալների ժամանցի, նրանց ֆիզիկական և հոգեկան առողջացմանն ուղղված նոր մեթոդների ու ձևերի մշակում և կիրառում, կընդարձակվի ինքնագործ միավորումների գործունեության համակարգը:

Դատապարտյալների հանրակրթական և մասնագիտական ուսուցման համակարգն ազատագրկման վայրերում բարձրացնելու նպատակով տարրական, միջնակարգ, միջնակարգ-մասնագիտական և բարձրագույն կրթություն ստանալու հնարավորություն ընձեռելու միջոցով կներդրվի ուսումնական ծրագրերի ճկուն կառուցվածք՝ հեռակա ուսուցման ավելի լայն կիրառմամբ:

Այս ոլորտում նախատեսվում է կատարելագործել ներքոհիշյալ ուղղություններով իրականացվող համապատասխան աշխատանքները.

ա. քրեակատարողական հիմնականների աշխատողների կողմից կալանավորված անձանց և դատապարտյալների նկատմամբ կարգապահական տույժերի կիրառման համակարգի կատարելագործում,

բ. կալանավորված անձանց և դատապարտյալների կողմից էքսցեսի դրսևորմանը նպաստող պատճառների բացահայտում և դրանց դեմ պայքարի մեխանիզմի մշակում, որը կնպաստի նրանց կողմից օրինապահ վարքագծի դրսևորմանը,

գ. կալանավորված անձանց և դատապարտյալների կողմից օրինապահ վարքագծի դրսևորմանը նպաստող արդար և վերահսկելի համակարգի մշակում, որը կնախատեսի պատիժը կրելու պայմանների մեղմացում, ուղղիչ հիմնարկի տեսակի փոփոխություն, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատում, պատժի չկրած մասի փոխարինում առավել մեղմ պատժատեսակով,

դ. բանտարկյալների կողմից օրինապահ պահվածքի դրսևորումը խրախուսող խթանների համակարգի կատարելագործում,

ե. պատժից պայմանական վաղաժամկետ ազատման և պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինման մեխանիզմների կատարելագործում,

զ. հետազատագրկման շրջանում հասարակությանը առավել հեշտ ինտեգրվելու նկատառումներից ելնելով՝ դատապարտյալների՝ աշխատանքի մեջ ներգրավվածության ապահովում, ինչպես նաև նրանց կողմից մասնագիտություն ստանալու հնարավորության ընդլայնում,

է. բանտարկյալների հետ սոցիալական, հոգեբանական աշխատանքների կազմակերպում՝ ուղղված հետազատագրկման շրջանում հասարակությանը ինտեգրվելու գործընթացի հեշտացմանը,

ը. կալանավորված անձանց և դատապարտյալների մշակութային հանգստի կազմակերպման ձևերի, ինքնագործ միավորումների կազմակերպման պայմանների ընդլայնում՝ ապահովելով այս գործընթացին արվեստի և սպորտի վաստակավոր և բարի համբավ ունեցող գործիչների մասնակցությունը,

թ. քրեակատարողական հիմնարկների գրադարանային ռեսուրսների համալրում,

ժ. հանցագործությունների առանձին տեսակների համար դատապարտված անձանց համար սոցիալ-հոգեբանական վերականգնման, հասարակությանը հետագա ինտեգրման բազային ծրագրերի մշակում,

ժա. բանտարկյալների հետ աշխատելու հոգեթերապևտիկ ուղղության մշակում և կիրառում, ակոհոլից, թմրադեղերից կախում ունեցող անձանց, հոգեկան անոմալիաներով տառապողներին հատուկ հոգեբանական օգնության ցուցաբերում:

Պետք է նպաստել նաև դատապարտյալների և նրանց ազգականների միջև կապերի պահպանմանն ու ամրապնդմանը, ինչպես նաև խթանել կալանավորված

անձանց և դատապարտյալների հոգեկան վիճակի կայունացման գործին հասարակական, սահմանված կարգով պետական գրանցում ստացած կրոնական և այլ կազմակերպությունների մասնակցությանը՝ պատժի կրումից ազատվելուց հետո անձանց օրինապահ հասարակական կյանքի վերադարձնելու նպատակով:

Կարևոր հանգամանք ևս. դատապարտյալների հետազատագրկման շրջանում հասարակությանը ինտեգրվելու և հանցանքների ռեցիդիվի կանխման ապահովումը ենթադրում է բանտարկյալի հետ՝ ազատագրկման վայրից դուրս գալուց առաջ, աշխատանքի հատուկ մեթոդների համակարգի մշակում և կիրառում: Այլ կերպ ասած՝ դատապարտյալի նախապատրաստումը հասարակությանը ինտեգրվելու համար: Հիշյալի պատշաճ կատարման համար անհրաժեշտ է՝

ա. պատժի կրումը ավարտող դատապարտյալների համար հատուկ ուսումնական դասընթացների կազմակերպում, որոնք տեղեկություն կներառեն հասարակությունում տեղի ունեցած փոփոխությունների, հասարակական կյանքի նոր ձևաչափերի մասին,

բ. դատապարտյալների հատուկ խմբերի համար բաց տեսակի ուղղիչ հիմնարկ տեղափոխվելու հնարավորություն, որը կներառի նաև կարճաժամկետ տեղափոխություն հետագա բնակության ենթադրյալ վայրեր,

գ. դատապարտյալների՝ հետազատագրկման շրջանում հասարակությանն ինտեգրվելու գործընթացի հեշտացումը, պրոբացիոն ծառայության միջոցով:

4) Կալանավորված անձանց և դատապարտյալների աշխատանքային զբաղվածությունը. դատապարտյալների աշխատանքային զբաղվածությունն ապահովելու նպատակով ՀՀ կառավարության որոշմամբ ստեղծված է «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամ: Նման քայլը հնարավորություն պետք է ընձեռեր կալանավորված անձանց և դատապարտյալների աշխատանքային զբաղվածության խնդիրը լուծելու նպատակով իրականացնել օրենքով չարգելված և քրեակատարողական հիմնարկների գործունեությանը չխոչընդոտող ցանկացած գործունեություն: Սակայն գործնականում տվյալ խնդրի լուծումը ներկայումս շատ ցածր մակարդակի վրա է: Տվյալ խնդրի լուծման նպատակով անհրաժեշտ է մասնավոր հատվածի ավելի լայն ընդգրկում քրեակատարողական հիմնարկներում իրականացվող ձեռնարկատիրական գործունեությանը, սոցիալական ուղղվածությամբ նպատակային

դրամաշնորհային ծրագրերի (այդ թվում՝ պետական բյուջեով նախատեսվող դրամաշնորհ) մշակում և իրագործում: Իհարկե, նման մոտեցումները կբարձրացնեն միայն աշխատանքային զբաղվածության աստիճանը: Քննարկվող խնդրի կապակցությամբ անհրաժեշտ է նաև քրեակատարողական հիմնարկներում աշխատանքներ տանել աշխատանքային զբաղվածության աստիճանը բարձրացնելու նպատակով մոտիվացնել այս ոլորտում առկա նախաձեռնությունները: Քանի որ քրեակատարողական հիմնարկներում առկա աշխատանքային զբաղվածության ապահովման հարցի լուծումը կհանգեցնի ռեցիդիվի նվազեցմանը, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկներում ընդհանուր վիճակի բարելավմանը և առկա ընդհանուր լարվածության նվազեցմանը:

Այլ երկրների փորձի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ առավել նպատակահարմար և ներկա տնտեսական վիճակում առավել իրական է փոքր արտադրական գործունեության խթանումը: Քրեակատարողական հիմնարկների արդյունաբերության վերակառուցման միջոցառումների համալիրը պետք է հնարավորինս ներառի նաև քրեակատարողական համակարգի պարենային, իրային, շինարարական, կոմունալ-կենցաղային, տնտեսական և հատուկ նշանակության արտադրանքի կարիքների ինքնուրույն բավարարում և դատապարտյալների պրոֆտեխնիկական ուսուցման ու նախնական մասնագիտական պատրաստականության համակարգի կատարելագործում՝ ելնելով աշխատանքի շուկայում տիրող իրավիճակից:

Կարևորվում է նաև այն հանգամանքը, որ հիմնադրամը կզբաղվի նաև ոչ եկամտաբեր գործունեությամբ, քանի որ դատապարտյալների զբաղվածության առկայությունը (թեկուզ ֆինանսական առումով վնասաբեր) արդեն իսկ դրական արդյունք պետք է համարել:

5) Հսկողություն և վերահսկողություն. տարբեր երկրներում տարբեր մոտեցում է դրսևորվում քրեակատարողական հիմնարկներում ստուգումներ իրականացնելու նկատմամբ: Չնայած դրան, երկրների մեծ մասը որդեգրել է թե՛ ներքին, և թե՛ արտաքին ստուգումներ իրականացնելու քաղաքականությունը: Ստուգումներ իրականացնող ազգային մարմինների դերում կարող են հանդես գալ կառավարության

կողմից սահմանված պաշտոնատար անձինք, երկրի նախագահին կից մարդու իրավունքների կոմիտեները կամ խորհուրդները, խորհրդարանին կից մարմինները (օրինակ, մարդու իրավունքների կոմիտեն), ինչպես նաև նման ստուգումներ իրականացնող հասարակական մարմիններ, որոնք հաճախ կոչվում են մոնիթորինգի խորհուրդներ: Որոշ երկրներում նման ստուգումներ իրականացնում է հատուկ նշանակված դատավորը: Մյուսներում՝ դրանք իրականացվում են տեղական վերահսկիչ խորհուրդները՝ հաճախ ղեկավարվելով դատավորի կողմից: Ներքին ստուգումները կարող են իրականացնել համապատասխան նախարարի կողմից նշանակվող տեսուչները: Քրեակատարողական հիմնարկներում անցկացվող ստուգումները կարող են իրականացվել նաև արտաքին մարմինների կողմից, որոնք գործում են բանտային համակարգից դուրս: Նման ստուգումները կարող են ուղղված լինել սանիտարական պայմանների, սննդի պատրաստման պայմանների, բժշկական օգնություն ցուցաբերելու, անվտանգության տեխնիկական պահպանելու, հակահրդեհային անվտանգություն ապահովելու և այլ խնդիրներին: Այդպիսի մարմինները չեն ենթարկվում բանտային կառավարում իրականացնող մարմիններին կամ նախարարություններին, այլ գործում են այլ գերատեսչությունների ենթակայության տակ, ինչը նպաստում է նրանց կողմից անկախ և օբյեկտիվ ստուգումներ իրականացնելուն:

Ստուգումներ կարող են իրականացվել նաև միջազգային և տարածաշրջանային մարմինների կողմից: Օրինակ՝ ՄԱԿ-ի շրջանակում գործող, խոշտանգումների հարցով հատուկ զեկուցողի կողմից, Եվրոպայի խորհրդի շրջանակներում գործող խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի, կամ անձի արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատիժների կիրառման կանխարգելման խնդրով զբաղվող կոմիտեի կողմից, Կարմիր Խաչի միջազգային կոմիտեի կողմից:

Անկախ մոնիթորինգների և ստուգումների իրականացումը հանդիսանում է բանտերում մարդու իրավունքների պահպանման կարևորագույն երաշխիք: Անկախ ստուգումները թույլատրում են ժամանակին նկատել քրեակատարողական համակարգի բացերը և դրանց լուծման մեթոդներ մշակել, զերծ մնալ քրեակատարողական անձնակազմի անհիմն քննադատումից և, եթե ստուգումների արդյունքները

հրապարակվում են, ապա հասարակությունը նույնպես հնարավորություն է ստանում մասնակից լինել քրեակատարողական համակարգի բարեփոխումներին:

Իրենց առջև դրված խնդիրների լուծման նպատակով ստուգումները պետք է իրականացվեն կանոնավոր և հաճախ: Դրանց արդյունքում ստացված հաշվետվությունները պետք է հրապարակվեն: Հասարակությունը պետք է հնարավորություն ունենա ծանոթանալ այդ հաշվետվությունների գոնե այն հատվածներին, որոնք վերաբերում են բանտերում անվտանգության ապահովմանը:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ հստակ սահմանվում են թե ազգային, և թե միջազգային՝ հսկողություն և վերահսկողություն իրականացնելու լիազորություններով օժտված մարմիններին: Չանդրադառնալով դրանց բոլորին (հիմնականում մյուսները սահմանված են և գործում են առնվազն բավարար, բացի այդ, դրանք դուրս են սույն հայեցակարգի կարգավորման առարկայից)՝ առանձնացնենք միայն գերատեսչական վերահսկողությանն առնչվող խնդիրներին, որն ինքնին վերաբերում է գործնականում առկա ՀՀ արդարադատության նախարարության կողմից իրականացվող վերահսկողությանը և ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության կողմից իրականացվող վերահսկողությանը: Ներկայիս դրությամբ կառավարման համակարգում առկա է վերահսկողական գործառույթի իրականացման որոշակի կրկնության, որը հանգեցնում է անձնական ռեսուրսների ոչ ճիշտ կառավարմանը: Քրեակատարողական ծառայության կառավարման համակարգի բարեփոխումներին զուգահեռ անհրաժեշտ է նաև հստակեցնել վերահսկողական գործառույթում ունեցած այս երկու մարմինների դերակատարումը թե օրենսդրորեն, և թե գործնականում: Դրա իրականացման ժամանակ անհրաժեշտություն կառաջանա անձնական ռեսուրսներով ամրապնդել նախարարության վերահսկողական գործառույթ իրականացնող մարմինը, քանի որ տվյալ իրավիճակն առաջացել է հենց նախարարության վերահսկողական կառուցակարգի ոչ լիարժեքության պատճառով: Բացի անձնական ռեսուրսների ավելացման անհրաժեշտությունից, անհրաժեշտ է նաև զարգացնել այդ կառուցակարգի գործիքակազմը, քանի որ ներկայումս վերահսկողության իրականացման ժամանակ չի կիրառվում որևէ ստուգման մեթոդաբանություն:

Վերահսկողական գործառույթների կատարելագործման հետ միաժամանակ անհրաժեշտ է վերանայել նաև քրեակատարողական հիմնարկի գործունեության գնահատման չափանիշները: Այդ կապակցությամբ, պետք է կարևորվեն գնահատման այնպիսի չափանիշներ, ինչպիսիք են՝

ա. հետազատագրկման շրջանում և դրան հաջորդող 3 տարիների ընթացքում հանցագործությունների ռեցիդիվի մակարդակը,

բ. քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց շրջանում մահվան և ինքնասպանությունների մակարդակը,

գ. պատժից պայմանական վաղաժամկետ ազատված և ազատագրկման ժամկետի լրացումից հետո ազատված դատապարտյալների թվի համակցությունը, մինչև դատարանի կողմից նշանակված պատժի ժամկետի ավարտը վաղաժամկետ ազատված դատապարտյալների թվի և պայմանական վաղաժամկետ ազատվելու հնարավորություն ունենալուց հետո ազատված այն դատապարտյալների թվի համակցությունը, որոնց մինչև ազատվելը մնացել է պատժի ժամկետի 10 տոկոսը,

դ. հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման ծավալը,

ե. դատապարտյալի կողմից աշխատանքի շուկայում պահանջարկ ունեցող մասնագիտության յուրացումը,

զ. դատապարտյալի կողմից տարբեր տեսակների կրթության ստացումը,

է. ընտանիքի, ուսանողական և աշխատանքային կոլեկտիվի հետ նախկինում օգտակար կապերը վերականգնած դատապարտյալների թիվը,

ը. դատապարտյալների ուղղման գործում քաղաքացիական հասարակության մասնակցության պարբերականությունը, բնույթը և ձևը:

6) Համագործակցություն. Նախատեսվում է նաև բավականաչափ աշխատանք ծավալել քրեակատարողական հիմնարկների և մարմինների գործունեության հարցերով հասարակական միավորումների ու միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունն ամրապնդելու ասպարեզում (այդ թվում՝ իրավապաշտպան կազմակերպությունների և բարեգործական հիմնադրամների հետ):

Կարևորվում է նաև զանգվածային լրատվության միջոցների հետ կապերի ամրապնդումը, որը կնպաստի քրեակատարողական ողջ համակարգի գործունեության լուսաբանմամբ դրա թափանցիկության ապահովմանը:

Կարևորվում է նաև հորիզոնական համագործակցությունն այլ մարմինների, մասնավորապես իրավապահ մարմինների հետ՝ հանցագործությունների դեմ պայքարում: Այն զարգացնելու նպատակով նախատեսվում է կատարելագործել քրեակատարողական համակարգի և իրավապահ մարմինների միջև գործնական համագործակցությունը, տեղեկատվության փոխանակման ձևերն ու մեթոդները, մասնավորապես, անվտանգության ապահովման, ուղեկցման, հետախուզման, փախուստի դիմաժ հանցագործների ձերբակալման, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական գործունեության ասպարեզներում: Նախատեսվում է համագործակցությունն առաջին հերթին կենտրոնացնել նախկինում կատարված հանցագործությունների բացահայտման, դատապարտյալների կողմից մեղայականով ներկայանալու, ծրագրվող հանցագործությունների վերաբերյալ տեղեկություններ ստանալու, ուղղիչ հիմնարկներից դուրս գտնվող հանցավոր խմբավորումների հետ դատապարտյալների կապերը բացահայտելու ուղղությամբ:

Այս ոլորտում նախատեսվում է նաև միջազգային համագործակցության զարգացում ևս, պատժի իրականացման և կալանքի տակ պահելու ոլորտում արտասահմանյան փորձի ուսումնասիրում ու կիրառում, քրեակատարողական համակարգի աշխատողների համատեղ վերապատրաստում, գիտական հետազոտությունների անցկացում՝ համատեղ միջազգային նախագծերի իրականացման հիման վրա, միջազգային գիտական և գործնական կոնֆերանսներին, ինչպես նաև պենիտենցիար համակարգի խնդիրներին վերաբերող այլ ֆորումներին մասնակցության ապահովում, քրեակատարողական համակարգի աշխատողների վերապատրաստում՝ հիմնվելով բանտարկյալների և կալանքի տակ գտնվող անձանց հետ վերաբերմունքի միջազգային մեթոդների և չափանիշերի վրա:


Հավելված 1. ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների լրակազմը 2013 թվականի ի դրությամբ

Հ/Հ	ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկի անվանումը	Քրեակատարողական հիմնարկի՝ ուղղիչ հիմնարկի տեսակը					Քրեակատարողական հիմնարկի՝ կալանավորվածներին պահելու վայրի լրակազմ	Ընդհանուր լրակազմ
		փակ ուղղիչ հիմնարկի լրակազմ	կիսափակ ուղղիչ լրակազմ	կիսաբաց ուղղիչ լրակազմ	բաց ուղղիչ հիմնարկի լրակազմ	բուժական ուղղիչ հիմնարկի լրակազմ		
1	«Գորիս»	100	20	10	50	-	35	215
2	«Արթիկ»	115	42	141	25	-	50	373
3	«Սևան»	100	400	33	15	-	-	548
4	«Կոշ»	-	570	45	25	-	-	640
5	«Էրեբունի»	-	-	371	20	-	-	391
6	«Աբովյան»	15	40	81	14	-	100	250
7	«Նուբարաշեն»	138	50	62	34	-	550	834
8	«Վարդաշեն»	10	25	70	15	-	34	154
9	«Վանաձոր»	110	30	15	10	-	80	245
10	«Դատապարտյալների հիվանդանոց»	5	5	14	16	424	6	470
11	«Երևան-Կենտրոն»	7	3	5	-	-	45	60
12	«Հրազդան»	187	24	4	-	-	-	215
	Ընդհանուր	787	1209	851	224	424	900	4395

Հավելված 2. ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների լրակազմը ենթակառուցվածքային բարեփոխումների արդյունքում

Հ/Հ	ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկի անվանումը	Քրեակատարողական հիմնարկի՝ ուղղիչ հիմնարկի տեսակը					Քրեակատարողական հիմնարկի՝ կալանավորվածներին պահելու վայրի լրակազմ	Ընդհանուր լրակազմ
		փակ ուղղիչ հիմնարկի լրակազմ	կիսափակ ուղղիչ լրակազմ	կիսաբաց ուղղիչ լրակազմ	բաց ուղղիչ հիմնարկի լրակազմ	բուժական ուղղիչ հիմնարկի լրակազմ		
1	«Վանաձոր»	110	30	15	10	-	80	245
2	«Արթիկ»	-	200	70	10	-	70	350
3	«Արմավիր»	600	800	40	30	-	-	1470
4	«Գորիս» (ներառյալ՝ Մեղրու տեղամաս 50 բաց ուղղիչ հիմնարկի լրակազմով)	120	100	100	60	-	80	460
5	«Երևան» (ներառյալ՝ ներկայիս ՀՀ ԱՆ «Աբովյան» ՔԿՀ՝ որպես առանձին տեղամաս)	200 + 50	200 +50	800 +50	40	-	600 + 100	1820 + 270
	Ընդհանուր՝	1080	1380	1075	150	-	930	4615

Հավելված 3. Պրոբացիայի կառուցվածքը



ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՃՆԵՐԻ ԵՎ ՀԱՐԿԱԴՐԱՆՔԻ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

«Հայաստանի Հանրապետության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կատարման համակարգի զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունումը պայմանավորված է Հանրապետությունում ընթացող իրավական և դատական, մասնավորապես՝ ՀՀ քրեակատարողական համակարգի բարեփոխումներով, այդ թվում՝ քրեակատարողական համակարգի առաջիկա բարեփոխումների իրականացման քայլերը հայեցակարգային ձևաչափով սահմանելու անհրաժեշտությամբ: Դեռևս 2001 թվականին ՀՀ քրեակատարողական ծառայությունում սկսված բարեփոխումների արդյունքում ստեղծված համապատասխան իրավական բազան հնարավորություն է տալիս իրականացնելու համակարգի գործնական և ենթակառուցվածքային հետագա բարեփոխումները:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Հայաստանի Հանրապետության քրեակատարողական համակարգում իրականացվել են այդ համակարգի բարեփոխումներին ուղղված բավականաչափ քայլեր, սակայն առկա իրավիճակը միջազգայնորեն ամրագրված չափանիշների համեմատ դեռևս բավարար չէ: Ուստի անհրաժեշտություն է համակարգում առկա իրավական, ենթակառուցվածքային, նյութատեխնիկական պայմանները, ինչպես նաև բարոյահոգեբանական մթնոլորտը համապատասխանեցնել այդ չափանիշներին և ժամանակի պահանջներին:

Կարգավորման նպատակը և ակնկալվող արդյունքը

Հայեցակարգով կհստակեցվեն քրեակատարողական համակարգի բարեփոխումներին ուղղված քայլերի ուղղությունները, որով էլ պայմանավորված համակարգում իրականացվող բարեփոխումները կիրականացվեն որպես հայեցակարգից բխող հստակ միջոցառումներ:

ՏԵՂԵԿԱՆՔ N 1

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՃՆԵՐԻ ԵՎ ՀԱՐԿԱԴՐԱՆՔԻ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կատարման համակարգի զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

ՏԵՂԵԿԱՆՔ N 2

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՃՆԵՐԻ ԵՎ ՀԱՐԿԱԴՐԱՆՔԻ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՌԻՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱՋԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կատարման համակարգի զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում: